

ՏԻՐԱ Լ. ՄԵԼԻՔՄԵՂ - ԲԵԿ

ՎՐԱՑ ԱԴՐՅՈՒԽՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵԿ ՀԱՅԵՐԻ ՍԱՍԻՆ  
Բ ՀԱՏՈՐ

9(47.925)

Ա-52



31 AUG 2007

ՀԱՅՀ ԼՈՒՍՓՈՂԿՈՄԱՏ 2011 - 09

## ՊՐՈՖ. ԴՐ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

9(47.925)

8-52 wpt

# ՎՐԱՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑԵԿ՝ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

卷之三

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՎՐԱՑԵՐԵՆ ԲՆԱԳԻՐԵՐԻՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ.  
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆԵՐՈՎ, ՅԵՎ, ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՎ

Σ U S N P β.  
(dF-dL γyP)

✓

ՀՐԱՄԱՆ ԱԿՈՒԹՅՈՒՆ Ե ԵԼՔՆ ՅԱՆ ԳՈՒԴԻ

## ՅԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1936

Գիտեամի տպարան  
Գլուխիս № 299  
Պատվեր № 1  
Տիրած 1200



## ԱՐԱՋԱԲԱՆ

«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» աշխատության ներկա՝ յերկրորդ, հատորում մենք ամփոփել ենք համապատասխան նյութեր վրաց գրականության զարգացման այսպես կոչված «վոսկեղարյան» և «վերածնության» շրջանների յերկասիրություններից, վորոնք ընդհանրապես պատմա-ժամանակական բնույթ են կրում և վորոնց ամփոփ տեսությունը, մի քանիսի բացառությամբ, տրված ե պրոֆ. Ի. Վ. Զավա խիւշի վելու հայտնի աշխատության՝ «Հին վրացական պատմական գրականությունը (V—XVIII դ. դ.)» (վրացերեն լեզվով) առաջին հրատարակության մեջ, Տփղիս 1916, էջ 165—283։ Դա XIII-րորդ և հետագա գարերի մեծ մասամբ անանուն պատմիչների ու ժամանակագիրների յերկասիրություններն են, վորի շարքը մենք տանում հասցնում ենք մինչ XVIII դարու սկզբները, այսինքն մինչ հայտնի պատմաբան-աշխարհագիր՝ արքայազն Վահանուշի, նրա ժամանակակիցների ու նրա դպրոցի գործունեյությունը։

Այս հատորում զետեղած նյութն առաջ ե բերած ընդամենը 24 յերկասիրությունից կամ գոկումնենտից, վորոնք մեծ մասամբ անանուն պատմիչներին են պատկանում\*, բայց և այնպես հետաքրքիր են իբրև՝ վորոշ բացառությամբ՝ ժամանակակիցների գրչեց յելած տեսություններ համապատասխան անցքերի (XIII

\* Վորպեսդի ընթերցողի համար պարզ լինի, թե վորքան մեր անգանացուցակն այս հատորում տարբերվում է ել. Զավախիւշիլու ներկայացրածից, առաջ ենք բերում վերջինիս մենագրության համապատասխան գլուխների ցանկը. «Թամար թագուհու պատմիչը» (165—190), «Աբուսերիձե Տբեթցի» (190—191), «Լաշա-Գեղրդի ժամանակվա անծանոթ վրաց մատենագիրը» (191—193), «Ժամանակագիրը» (193—213), «Հուշարձանն իշխանաց» (213—218), «Բագրատի թագավորության պատմությունը» (218—220), «Մեսսական սաղմոսի մատյանը» (քրոնիկան)» (221—231), «Գելաթի քրոնիկոնը» (231—234), «Փարսադան գորգիչանիձե» (234—251), «Քարթլիս-Ցխորելա» (251—273), «Քարթլիս-Ցխորելայի շարունակությունը» (273—283).

Գիտեատի տպարան  
Գլուխիս № 299  
Պատվիր № 1  
Տիրութ 1200



## ԱՐԱՋԱԲԱՆ

«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» աշխատության ներկա՝ յերկրորդ, հատորում մենք ամփոփել ենք համապատասխան նյութեր վրաց գրականության զարգացման այսպես կոչված «վոսկեդարյան» և «վերաճնության» շըջանների յերկասիրություններից, վորոնք ընդհանրապես պատմա-ժամանակագրական բնույթ են կրում և վորոնց ամփոփ տեսությունը, մի քանիսի բացառությամբ, տրված ե պրոֆ. Ի վ. Զավա իւիշ վիլու հայտնի աշխատության «Հին վրացական պատմական գրականությունը (V—XVIII դ. դ.)» (վրացերեն լեզվով) առաջին հրատարակության մեջ, Տփղիս 1916, եջ 165—283: Դա XIII-րորդ և հետագա դարերի մեծ մասամբ անանուն պատմիչների ու ժամանակագիրների յերկասիրություններն են, վորի շարքը մենք տանում հասցնում ենք մինչ XVIII դարու սկզբները, այսինքն մինչ հայտնի պատմաբան-աշխարհագիր՝ արքայազն Վախուշտի, նրա ժամանակակիցների ու նրա դպրոցի գործունեյությունը:

Այս հատորում գետեղած նյութն առաջ ե բերած ընդամենը 24 յերկասիրությունից կամ դոկումենտից, վորոնք մեծ մասամբ անանուն պատմիչներին են պատկանում\*, բայց և այնպես հետաքրքիր են իրենք՝ վորոշ բացառությամբ՝ ժամանակակիցների գրչեց յելած տեսություններ համապատասխան անցքերի (XIII

\* Վորպեսպի ընթերցողի համար պարզ լինի, թե վորքան մեր անվանացուցակն այս հատորում տարբերվում է նվ. Զավախիսվիլու ներկայացրածից, առաջ ենք բերում վերջինիս մենագրության համապատասխան գլուխների ցանկը. «Թամար թագուհու պատմիչը» (165—190), «Աբուսերիձե Ծբեթցի» (190—191), «Լաշա-Գեորգի ժամանակա անծանոթ վրաց մատենագիրը» (191—193), «Ժամանակագիրը» (193—213), «Հուշարձանն իշխանաց» (213—218), «Բագրատի թագավորության պատմությունը» (218—220), «Մեսիսական սաղմոսի մատյանը (քրոնիկան)» (221—231), «Գելաթի քրոնիկոնը» (231—234), «Փալսադան գորգիջանիձե» (234—251), «Քարթիս-Ցիոռեբա» (251—273), «Քալթիս-Ցիոռ բերայի շարունակությունը» (273—283):

դարուց սկսած մինչ XVIII-ի սկիզբը), յերբեմն տեսդենցիող լուսաբանությամբ և նույնիսկ հայտայացությամբ դրոշմված պամֆլետային յելույթներով լի, վորը, ի հարկե, արտացոլումն և համապատասխան դասակարգային իդեոլոգիայի: Յեվ այս տեսդենցիողությունն առանձնապես աչքի յե ընկնում «Թագակիների պատմականն ու գովասանքն» յերկի (ա. գլուխ) այն հատվածում, ուր շան և նշխարի մասին և պատմվում (եջ 16—20), վորն, ինքնըստինքյան հասկանալի յե, հայ և վրաց տիրող դասերի միջև գեռևս XII—XIII դ. գ. գոյությունն ունեցող պայքարի արդյունքն եր:

Ի վերջո, անհրաժեշտ ենք գտնում մատնանշեր վոր այս հատորի մշակման և այն տպագրության համանելու ժամանակ դեռ լույս չեր տեսած ակադ. Ն. Մառի հիմնական աշխատությունը՝ նվիրված Անիլին (յետմահու հրատարակությամբ). այդ պատմառով, գժբախտաբար, հնարավորություն չունեցանք վորեւ կերպ ոգտագործել այն:

Լ. Մ. Բ.

Յերեկան. 29. V. 1935.



Ա. ԱՆԱՆՈՒՆ (XIII Դ.)  
«ԹԱԳԱԿԻՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆՆ ՈՒ ԳՈՎԱՍԱՆՔԸ»

Թարթիսոցխորեբայի Մարիամ թագուհու վարիանտում անանուն հեղինակի «Դավիթ արքայից-արքայի պատմության»-ն ու Մմբատ՝ վորդի Դավիթի «Բագրատունյաց պատմության»-ն անմիջապես հետևում ե մի ընդարձակ յերկասիրություն անանուն հեղինակի, հետեւյալ վերնագրով՝ «Թագակիրների պատմականն ու գովասանքը»: Այս յերկասիրությունը գրաված ունի ե. Թագավոր Հայութիւնը հրատարակության մեջ (Թարթիսոցխորեբա, Մարիամ թագուհու վարիանտը, վրացերեն, Տփղիս 1906) 362—535 էջերը, իսկ Մ. Բ բոսեյի հրատարակությամբ (Թարթիսոցխորեբա, մասն առաջին, Մ. Պ. Բ. 1849) 264—338 էջերը. նույնի ֆրանսերեն թարգմանությամբ (M. Brosset, Histoire de la Géorgie, I, 2) 383—480 էջերը:

Այս յերկասիրությունը նվիրված ե Գեորգ (Գիորգի) III (1156—1184) և նրա դուստր՝ Թամարի (1184—1213) թագավորությանց ժամանակաշրջաններին՝ սկսած XII դարու կեսից մինչև XIII-ի մկրները: Յերկասիրության վերնագիրը՝ «Թագակիրների պատմականն ու գովասանքը» (վրացերեն՝ «իստորիանի դա ազմանի շարավանդեղթանի») պրոֆ. Ի. Գ. Զավալիշի շինուածությունը (ibid., 166) մեկնում ե այսպես. „Իստորիա» հունարեն բառ ե և նշանակում ե տեղեկանք, լուր, պատմություն. ուշագրավ ե, վոր վրաց պատմական գրականության մեջ այս տերմինը, ինչպես յերկում ե, առաջին անգամ գործածել ե Թամար թագուհու կյանքի նկարագրողը: «Ազմանի» արաբերեն բառ ե, «իստորիա»-յի նման, սայեւ հոգնակի թվումն ե գործածվում և համապատասխանում ե արաբերեն «ազմանուն»-ին, վորի յեղակին հնչվում ե «զեմանուն» և նշանակում ե «ժամանակ», «պահ»: Այս յերկու հունարեն-արաբերեն բառերը փայլուն կերպով պատկերացնում են մեր պատմչի

մտածելակերպի ու կրթության յերկկերպ բնույթը։ Նա յուրաշցրած ուներ յերկու կուլտուրա՝ հունական, բյուզանդական-հելենական, քրիստոնեյականը, և արաբական-պարսկական, մասնմեղականը<sup>1</sup>։ Քննադատության յենթարկելով պրոֆ. Ի. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ո ւ ա յ ս տ ե ս ա կ ե տ ը՝ պրոֆ. Կ. Կ ե կ ե լ ի ձ ե ն (Մեր պատմական գրականության մի քանի՛ դեռ չմեկնած տերմինները, վրացերեն, — „Bulletin de l'Université de Tiflis“, V, 1925, եջ 309—310) այս կարծիքն ե հայտնում, վոր «ա զ մ ա ն ի հ ո գ ն ա կ ի թ ի վ ե ա ղ մ ա բ ա ր ի ց ։ Ի ս կ ա զ մ ա ն ի վ ո չ թ ե ա ր ա բ ե ր ե ն ե, ա յ լ հ ո ւ ն ա ր ե ն ա ս մ ա, վորը նշանակում ե յերգ, գովասանք, ներբող»։

Համաձայն Ի. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ո ւ հ ե տ ա զ ո ւ տ ո ւ թ յ ա ն ա (ibid., 170—171), անանուն հեղինակի յերկասիրությունը «կարելի յերկու գլխավոր մասի բաժանելը, վորոնցից «առաջինը հեղինակը վերջացրել ե թամար թագուհու [գահակալության] 11—12-րդ ինդիկտիոնին», իսկ մյուսը սրանից բոլորովին ուշ ե գրված»։ Միաժամանակ նույն Ի. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ի ն ա լ պացուցում ե, վոր «պատմության առաջին մասը գրված ե «ժամ առ ժամ», այսինքն հետզհետե, հնախ, ինչպես յերկում ե, Ուուկնադդինի պարտությունից հետո», և «այս ժամանակ նա պիտի նկարագրեր կարսի և շրջակա յերկրի առումն և Ուուկնադդինի դեմ կատարած հաղթական արշավամբը»։

Ինչ վերաբերում ե հեղինակի ով լինելուն, այս առթիվ Ի. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ի ն կարողացել ե պարզել այսքանը։ Նա թեև «արքունիքի աստիճանակոր չի յեղել», բայց և այնպես «մեծամեծների» թվին պիտի պատկանել (եջ 172)։ Միաժամանակ՝ նրա «դատողությունը, կրթությունը, զարգացումն ու մտածելակերպը դժվար ուսումնասիրելի յե», և նա «ավելի քան բարդ բնավորության տեր անձնավորություն պիտի լիներ. միենույն ժամանակ նա յուրացրած ունի թե հեթանոսական և թե քրիստոնեյական գրականությունն ու մտածելակերպն այնպես, վոր հետազոտողն ի վիճակի չե իմանալ թե նա ի՞նչ արհետի և ի՞նչ գործի տեր մարդ ե։ Շատ անգամ նա այնպես ե խոսում, վոր մարդ յերկումում ե, մի գուցե նա հոգեորական ե յեղել» (եջ 176)։

Ի. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ի ն (ibid.) միանգամայն իրավացի յե, յերբ ընդգծում ե, վոր վրաց-հայկական [յեկեղեցական] պայքարին վերաբերյալ հեղինակի ամբողջ պատմվածքը վերին աստիճանի նեղ-

դավանաբանական բնույթը ե կրում, վորի ժամանակ [վրաց] Հովհաննան կաթողիկոսն ուղափառությունը քննելու և վորոշելու համար նրանից ել լավ բան չհնարեց, վոր նշխարը քաղցած շանը նետեր և, վոր դավանության նշխարն ել շունն ուտեր, այն դավանությունը թյուր ձանաչվեր։ Յեվ «այսպիսի անմիտ դատաստանի հնարագետ քահանայապետին, — ասում ե Ի. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ի ն, — Թամարի պատմության հորինողը փառաբանում ե» (եջ 176)։ Այս հիման վրա բազմաշխատ վրացագետը յենթադրում ե, վոր հեղինակն ավելի «մարտնչող հոգեորական անձն» պիտի լիներ, քան թե աշխարհական»։

«Վոր Թամար թագուհու պատմիչն յեկեղեցական գրականությանը հմուտ եր, սա՝ այն ժամանակվա վրաց մատենագրի համար զարմանալի չե։ Բայց ուշադրության արժանին այն ե, վոր նա հեթանոսական շրջանի հելենական գրականությանն յեվս հմուտ ե յեղել» (եջ 178)։ Յեվ իրոք, «Թամար թագուհու պատմությունը խայտարղետում ե հունական և պարսկական գրականությունից ու պատմությունից քաղած անուններով և տվյալներով» (ib.), վորոնց քննության վրա առանձնապես կանգ ե առնում Ի. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ի ն (եջ 178—183)։

Վրացերեն բնագրի թարգմանությունը մենք կատարել ենք հաշվի առնելով այն ուղղումներն և «վերականգնումները», վորը տեղաբեր կարելի յե գտնել նույն Ի. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ո ւ «Վրաց ժողովրդի պատմության» մեջ (վրացերեն, գ. II, Տփղիս 1914, եջ 552—639)։

### [ԳԵՂՐԳ Ա ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

...[Գեղրդ թագավորը] կենտրոնանալով և ամբանալով կաղղվան \* քաղաքում՝ ավելից ժայռոտ բոլոր ձորերն ու քաղաքներն Աշունիքի<sup>1</sup>, [վորոնք] հայոց (սոմեխների) թագավոր կոչված Շահիալմինի (Շահերմենի)<sup>2</sup> [ձեռոք] ելին։

Սրանից հետո՝ նորից ժողովելով իր դորքը՝ [նույն Գեղրդը] գիմեց գեղի հոչակալոր և մեծ քաղաք [Դվինը], վորը գտնվում է Արաբատի փեղին՝ Հայքի (Սոմիկիթի) և Աղբեղջանի \*\* սահմանում, վոր և հայրենիք Տրդատ (Թրդատ) դյուցազնի, վորը յերբեմն խո-

\* Var. Կաթիրեան։

\*\* Բնագրում՝ Աղաբեղջանի։

\* Այսինքն 1195—1196 թ. թ.։

զի վերածվեց Գրիգոր Պարթևի պատճառով ... և իր զորքով գրավեց այն քաղաքը՝ [հետն վերցնելով] գերիների և գանձերի այնպիսի բազմություն, վորը ծածկեց դաշտերի ու լեռների յերեսը, և նույնիսկ արքայանիստ քաղաք Տփղիսն եւ լցվեց ավարով ...

Ապա [Գեորգ թագավորն] կամեցավ զորք ժողովել և արշավել մեծ քաղաք Անիի վրա, վորը յերեսն հունաց (բերձենների) թագավորի տունն ու աթոռանիստն եր, և ուր մինչ այսոր հազար ու մի յեկեղեցի կա<sup>3</sup>. իսկ հույներից (բերձեններից) անցնելով՝ ժամանակի ընթացքում մեծազդի վոմն Շաղաղյանց կողմից նշանակված վարիչների ձեռոք եր [այն]: Սրա վրա հանկարծակի հարձակվելով՝ [Գեորգ թագավորն] առաջ բերեց բազում պատերազման և ձիաների կոտորած յերեք որվա ընթացքում: Խոսքով և դործով ի վերջո, կայծակի ճայթյունի նման, [վրացիք] ջարդեցին Շաղաղյաններին\*, վորոնք կայծակի արագությամբ փախուստի ժիմեցին, և [Գեորգ թագավորը] համաձայն իր կամքի իր ձեռքը գցեց քաղաքը, և Հեռացավ այնտեղից մինչև վոր չբարեկարգեց նրա կառավարությունն և հաստատապես չտիրեց նրան իր գահի պահպանության ու ամրացման նպատակով: Յեկ թողեց այնտեղ մանդատուրթուխուցես և ամիրսպասաւար Հովհան (Իվանե): Որբելուն, Սարգիս Միասրգը ձելուն և այլ գավառների (թեմերի) մեծամեծ ազնվականներին (ազնառուներին)<sup>4</sup> տալով նրանց ինամակալություն ([մո]ուրավ[ություն]): ապա [տուն] վերադառնալով՝ ժիմեց վորսի, խաղի և զվարճության:

Այս հանգամանքը վրդովմունք առաջացրեց գոռողացյալ հաւաքարցիների և իսմայելացվոց մեջ, և ահա Շահիարմենը, վորն իրեն սուլթան եր կոչում, կանչեց ամբողջ Ասորիքը (Շամը), Միշագետքն (Զաղիրքն) և Դիարբեքիրը (Դիարբագը): Գարմ [ի]անի թուրքերով հանդերձ. [և] Արգուսի վորդի Սալդուխ Սելջուկյանը, վորը սուլթանների տոհմիցն եր, Պարսից բազում տերերով և փադիշահներով հանդերձ, գաղանների նման ատամները սրելով՝ մեծ և անհամար զորքով յեկավ ու մոտեցավ Անիին ...

Գեորգ (Գիորգի) թագավորը, վորն այդ պահին գնացել եր ժամանակ անցկացնելու նաճարմագե, հենց վոր լսեց սրա մասին ... լեռներով անցավ գեպի Շիբակ<sup>5</sup> ուղեկցությամբ Հովհան (Իովանե) դպրապետի և Սմբատ-Միմենի ...

[Փախուստի մատնելով թշնամուն՝ վրացիք պատերազմի դաշ-

տում] տեսան բազմություն [գերի վերցրած] թագավորների և մեծամեծների, ազնվականների և ստրուկների, բազմություն վրանների և տաղավարների, հարստություն ականց և գոհարների, վոսկվո և վոսկեկուռ իրերի, ուղտերի, ձիաների և ջորիների և աշխարհիսամեն տեսակ գանձերի և հարստությունների, վորը դժվար եր մի առ մի թվել ...

Յեկ այսպիսով՝ զենքով և պաշարով լեցուն, գերի վերցնելով թագավորներին և մեծամեծ ազնվականներին, յերեք որ մնաց Անիի դռան [Գեորգ թագավորը], վորն ապա՝ հոգալով քաղաքի մասսին և նշանակելով այնտեղ ամիրա և զորաբանակ շարժվեց տեղից և վերագրածավ [Տփղիս]<sup>6</sup> ...

Իսկ Ասորիքի (Շամի) և Միջագետքի (Զաղիրքի), Հայոց (Սոմիիթի) և Արգրումի զորքերի, թագավորների և մեծամեծների բնաջնջման լուրը հասավ Խորասանի (Խվարասանի) և հրազդ սուլթանին և խալիֆային, տիրողին (ինքնակալին) մեծն Բաբելոնի և արաբացվոց (սարակինողների) կեղծ որենսդրին, և Յելտկուզ՝ Պարսից աթարակին, [վորոնք]<sup>7</sup> ... հավաքվելով Ռանում\*\*\* գիմեցին գեպի Հայոց (Սոմիիթի) յերկիրը, և մոտեցան Գագի բերդին, վորը գրավեցին, և ավերեցին նրա ամբողջ սահմանները:

Հենց վոր հոչակալվոր և անհաղթ զորավար ու անզուգական յերիտասարդ Գեորգ թագավորն իմացավ այս, իսկույն և յեթ ժողովեց իր յոթը թագավորությունները՝ հայնկույս և հայսկույս\*\*\*, կանչեց նաև ոսերին և շատ ուրիշ ժողովրդներին (յերկիրները), և յելավ սուլթանի գեմ... իսկ Գագում գտնվող [սուլթանական] զորքը հանգիցին տեղից ու հեռացան, [սակայն] Յեկեղյաց\*\*\*\* գետն անցնելուց հետո նրանց հանկարծակի վրա հասավ [վրաց] զորքը, վորը նրանց բնաջնջման յենթարկեց<sup>8</sup>:

... Ապա սուլթանն ու աթարակին իրենց ամբողջ զորքով և ուժով բարձրացան գեպի Գեղարքունիք (Գելաքուն), վորտեղից [արդեն] մոտեցան Անիին, նաև վերը [հիշյալ] Շահիարմենն ու արաբացվոց բոլոր իշխանակուրները:

Այդ պահին Անիում հաստատված եր մեծ և հոչակավոր զորավար Թորեցին՝ շրջակա յերկները քարուքանդ անողն ու ավերողը, վորը [սկսեց] պատրաստել պատերազմական մեքնաներ:

\* Բնագրում՝ Վարագ:

\*\* Var. Իրանում:

\*\*\* Var. + վերինք և ստորինք:

\*\*\*\* Var. Ելիա կացի (Տիգ):

\* Բնագրում՝ Շանշե Դաղիան:

Հենց վոր լուրը սրա մասին հասավ այս յերկիրը և թագավորին, վորը սակավաթիվ զորքով՝ վորսորդությամբ զվարձանալով՝ կանգնած եր լոռվա և Դմանիսի լեռների միջև, սրա մոտ յեկավ սուլթանի դեսպանը<sup>7</sup>...

Ապա [Գեղորգ թագավորը] չնորհեց Անին նրա տիրոջը, վորին և պատվեց իրեւ իրեն հպատակին, և Յելտկուզ (Ելդիգուզ) աթաքակն եւ յեղավ միջնորդ սուլթանի և վրաց միջև, ինդրելով հաշտություն<sup>8</sup>...

[Ապա Գեղորգ թագավորը] հրամայեց տայեցիներին, կղարջաց և շագանեցիներին Ուլիթյաց (Ոլթիսի) և Բանայի ավերումն, իսկ մեսներին և թորեցիներին՝ Կարսի (Կարիի) և Աշունիի, և ամիրսպասալարին և սոմիխթեցիներին (սոմիխթարնի)<sup>9</sup> Կուրի հայուղույս [կողմի] մինչև Գանձա[կ] ... [ապա] ավերեց Բասենը (Բասիանը)<sup>10</sup>...

[Սույն Գեղորգն] իր զորքը՝ սպասալարներով հանդերձ՝ ուղարկում եր յերեքն մինչ Նախիջեվանի (Նախճեվանի) դուռն, և յերեքն մինչ Մասիս ու Գեղամ (Ղաղվ?)<sup>11</sup>...

Ապա [Գեղորգ թագավորը]<sup>12</sup> զորք ժողովելով Տփղիս քաղաքում՝ ուղերգվեց գեպի Սոմիխթի լեռները, ուր սաստիկ հարվածեց ու փախուստի յենթարկեց Դեմետրին և նրա կուսակիցներին, վորոնք ապաստան գտան Լոռի քաղաքում ու բերդում, և գրավեց բոլոր ամբողներն ու բերդերը\*: Ապա Դեմետրից հեռացան Սարգիս Մխարդրձեն իր վորդով և յեղերգվորդով հանդերձ..., վորին թագավորը քաղցր սիրեց և վստահելիություն չնորհեց համաձայն նրա վսեմության: Ապա՝ ավերելով Տաշիրն ու Լոռին մինչև Կարս՝ [Գեղորգ թագավորը] բնակություն հաստատեց Ագարա[կ]ում: Իսկ Դեմետրը, վորը գտնվում եր Լոռվա բերդում, զորք ուղարկեց Նախացից, վորոնք հավատարիմ եյին մնացել իրեն, և այլ և այլ կողմերից՝ մեսներին, վրացիներին (քարթվելներին), սոմիխթեցվոց (սոմիխթարնի) և իր դաստիարակած ախոռապետ (ամիլախոր) Ճիբերիին...

Ապա [Գեղորգ] թագավորը, վորը Ագարա[կ]ումն եր գտնվում, շարժվեց տեղից և յելավ վեր՝ մոտենալով Լոռի քաղաքին ու բերդին: Այս պահին Պարսկաստան ուղարկվեցին Քարթլիի իշխան Լիպարիտ՝ Սմբատի վորդին, ախոռապետ Քավթար՝ Հովհաննի (Իվանեյի) վորդին, վորոնք նույն Գեղորգի կողմից եյին կարգված իշխանության, և Անանիա Դվինեցին, վոմանք Շահիարմենից,

\* Վար. + վորոնց բռնի կերպով տիրապետել եր նա (Դեմետրը):

վոմանք Յելտկուզից (Ելդիգուզից) ոգնություն խնդրելու համար...

... Մինչ այս ուժասպառ յեղան Լոռի բերդում գտնվողները. իսկ Դեմետրը՝ տեսնելով վոր անողնական վիճակի մեջ և գտնվում, պարանով կապելով իրեն, իջավ բերդից և դիմեց իր հորյեղբորը (Գեղորգ թագավորին). իսկ ամիրսպասալարին և բոլոր նրանց, վորոնք մնացին բերդում, անվթար հանեցին բերդից և բերին թագավորի մոտ... [և այսպես] նա գրավեց Լոռին<sup>12</sup>...

## ԹԱՄԱՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

... [Նշանակելով Ղ'ուրասարին] ամիրսպասալար և մանդատուրա թուլուցես՝ [Թամար թագուհին] վոչ մի թիզ չպակսացրեց Լոռիին, [վորը] իշխանությունից զատ [Նրան եր չնորհված]: ...

[Թամար թագուհին] բանտարկեց գանձարանապետ Ղ'ութլու Արսլանին, վորը պատրաստվել եր ինքնիշխանաբար [Գրավելու] ամիրսպասալար [ությունն] ու նստելու հայոց (սոմեխների) թագավորի տեղը Լոռիում:...

[Ապա Թամար թագուհին] ամիրսպասալար նշանակեց Սարգիս Մխարդրձելիին, վորը բարեծնունդ եր և արշավանքների ու քաջագործությանց մեջ մնալու, և չնորհեց նրան Լոռին՝ ի իշխանություն և ի տիրապետություն Սոմիխթի. և չնորհատվություն արավ նրա վորդի Զաքարիային ևս. և այս Զաքարիա և Հովհանն (Իվանեյի) Մխարդրձելիի վորդիք՝ հավատարիմ եյին թագավորներին և փորձված արշավանքների մեջ<sup>13</sup>, մարդիկ անվանի, թեև կրոնով հայեր (սոմեխներ) եյին<sup>14</sup>. իսկ Հովհանն (Իվանե) հույժ տեղյակ եր գրականությանը, վորի պատճառով ել զգաց իր [Ենց] կրոնի թյուրությունը, [Վրացադավան]<sup>14</sup> մլրտվեց, և գարձավ ճշշմարիտ քրիստոնյա:...

[Յեկ չնորհեց Թամար թագուհին] ախոռապետություն (ամիլախանություն) Թորեցի Գամբեկելիին, վորը Սարգիս Մխարդրձելիից հետո դարձավ ամիրսպասալար<sup>15</sup>:...

Սահմանից հետո [Վրացիք] սկսեցին արշավանքներ կատարել և գուրս յելան Տփղիսից... նախ և առաջ արշավեցին Կարուց յերկիրն ու Կարսիփոր (Կարսիփոլ), և ավերեցին [բոլոր վայրերն] մինչ Բասեն (Բասիան) և հաղթող ու ամեն ինչով լի վերադարձան...

Իսկ մինչ այդ Ռամի և Գեղարքունյաց (Գելաքունիի) թուր-

քերի արշավախմբերն յեկան և ավերեցին Պաղակացիի (Պալակացիոսի)<sup>16</sup> յերկիրը՝ Շնաձոր կոչվածը. սրանց ընդդիմադրեց Գամբեկել՝ Կախայի վորդին, [վորն և] ... փախուստի յենթարկեց ու կոտորեց նրանց...

Յեկ այս պահին յեկան Կարնուքաղաքացիք, ասորիք (շամեցիք) և թուրք-գարմացիք,... [վորոնց նույնպես] փախուստի յենթարկեցին ու կոտորեցին...

Սրանից հետո Մխարգրձեները՝ Սաղիրի\* և Վահրամի վորդիք, վորոնք լավ հպատակներ եյին և արշավանքներում փորձված, ավագ Զաքարիան և [մյուս] Զաքարիան՝ որհնություն ստանալով, և Հովհանն (Իվանեն) և Սարգսին՝ չորհնված<sup>17</sup>, գնացին և արշավեցին Դվինի յերկրի վրա. և հաղթող ու ավարով լի վերադառներին հետամուտ յեղան Դվինեցոց ու Սուրմարեցոց\*\* արշավախմբերը, վորոնց հետ տեղի ունեցավ կատաղի պատերազմ, վորը նույն Մխարգրձեների հաղթությամբ վերջացավ...

Ապա [թամարի ամուսին՝ ոռու Գեորգ] թագավորը գորք ժողովեց իր շուրջն և թամարի հրամանի համաձայն ուղեղորվեց Դվին ու պաշարեց Պարթևաց յերկիրը. գրալեց քաղաքներ, վորտեղից մեծ քանակությամբ գանձեր հանեց և բազում ել գերիներ, ապա վերադարձավ Թամարի մոտ...

Սրանից հետո [նույն Գեորգ ոռուսը] մեծ զորք ժողովեց ու դիմեց Գեղարքունիք (Գելաքուն), վորը գժվար եր գրավել թուրքմենների՝ այսուեղ ծովի ավագի պես շատ լինելու պատճառով. հարձակվեցին, կոտորեցին և վերցրին մեծ քանակությամբ գերիներ ու ավար. իսկ յերբ [Գեորգի զորքերը] հաղթող վերադառնում եյին, նրանց յետեկոց ընկավ ամրող թուրքմեննությունը Գեղարքունիքում (Գելաքունում)... [սրա հանդեպ] դուրս յելան Թամարի զորքերը, այնպես, վոր ծերն յերիտասարդի առաջն եր առնում և յերիտասարդը ծերն, տերը ծառային և ծառան տիրողը, վորոնք փախուստի յենթարկեցին, կոտորեցին և բնաջինջ արին [նրանց]. ապա վերադարձան իրենց թագավորությունը՝ թագավորի ու թագուհու մոտ...

Սրանից հետո... [վրացիք] արշավեցին... Արաքսի (Խախսի) յեղերքը մինչ Մասիս,... և Վարդան Դադյանը (Դադիանը) ... ու չորեքան Մխարգրձեներն ու այլ մեծամեծներն և ազնվականները

\* Var. Սարգսի:

\*\* Բնագրում՝ Դվինեցիք և Սուրմարնեցիք:

(ազնառութները) մեծ նեղություններով պատերազմ ունեցան. ապա՝ փախուստի յենթարկելով [թուրքմեններին] հաղթող և ուրախությամբ լի վերադարձան այստեղից<sup>18</sup>...

... Յեկ այսպիսի սիրո, պատվի և պարզեաբաշխության մեջ անցկացրեց [թամար թագուհին] ձմրան շրջանը Սոմխիթում և Տփղիսում...

Սրանից հետո լուր տարածվեց, իբր այն ոռուսը՝ [թամարի առաջին ամուսին Գեորգը, վորն աքսորված եր կոստանդնոսուպուլիս] յեկել և կոստանդնուպոլիսից ու հասել Յերզնկայի և Կարսուքաղաքի յերկիները... [Յեկ այդ պահին] Վարդան Դադյանն (Դադիանն) եր Որբեթի և Կայենի տերը...

Ապա Թամարը, վորը Տփղիս քաղաքումն եր գտնվում, ... հրամայեց ժողովել իրեն հավատարիմ յեղող բոլորին՝ զինվորականներին\* և մեծամեծներին Հերքից (Հերեթից), Կախքից (Կախեթից), Քարթլից, Սոմխիթից [և] Սամցխեյից...

... Ապստամբները մտադրվեցին գրավել Զավախքը (Զավախեթը), Թմողվին ու Ախալքալաքը, նաև Թռեղքն (Թրէալեթն) ու Սոմխիթը. և ամբողջ Սոմխիթը թուրք-վաճառի [ձորից] այն կողմը խոտորել եր. [և ապստամբների թվումն եյին] Հովհանն (Իվանե) Վարդանի վորդին՝ Գագի տերը, Մաղա\*<sup>19</sup> Կայծոնի տերը. Կայենը նույն Վարդանին եր. և նույն յերկրի ազնվականներն (ազնառուներն) ու ազնվականների վորդիք, բացի Զաքարիա Վարդանի վորդուց... սրանք բոլորը մտադրվեցին ժողովել Ագարա[կ]ում...

[Բշելով ապստամբներին] Սոմխիթից՝ [թամարին հավատարիմ մնացած զորքը] կանգ առավ Ագարա[կ]ի պուրակում վորսորդությամբ զբաղվելով և ուրախ[ությամբ լի]...

Վորորմած լինելով հավատարիմների և յուրայինների համակեպ՝ [թամար թագուհին] վողորմածությամբ շնորհեց Վարդանի վորդի Զաքարիային Գագը Թուրք-վաճառի [ձոր]ով հանդերձ, մինչ Գանձա[կ], բազում ... քաղաքներով, բերդերով և ավաններով. և շնորհեց Սարգսի վորդի Հովհաննին (Իվանեյին) առաջնություն և զործակալի (մսախուրթուխուցեսի) պաշտոնը<sup>19</sup> և ի պատիվ՝ Կայենն ու Կայծոնը, Գեղարքունիքով (Գելաքունիով) և այլ բազում հարկատու քաղաքներով, բերդերով ու յերկիններով...

... [Յերբ] վախճանվեց Գամբեկել ամիրեկելապատալարը<sup>20</sup>... ապա

\* Var. Սարգսի:

\*\* Var. Մատղ.

ամիբսպասալարությունը շնորհվեց Մխարդքձել Զաքարիային՝ Սարգիս ամիբսպասալարի վորդուն, վորը նստած եր հայոց (սումեխների) թագավորի տեղում [և] Լոռի տերն եր, վորին կցեցին նաև Ռուսթավ քաղաքը, [քանի վոր] նա հպատակ եր՝ արժանի սպասպետությանը<sup>21</sup>...

... Յեկ վողորմածություն ցույց տվեց [Թամարը] բոլորին իւրենց կարգով, վոմանց նորից շնորհելով և վոմանց ավելացնելով. և այսպէս [շնորհալի յեղան] վրացիք (քարթվեխները), սոմխիթցիք, թորեցիք, մեսխերն ու տայեցիք;...

... [Ապա վրացիք] դիմեցին Պարտավ (Բարդավ)<sup>1</sup> հիսավուրց մեծ քաղաքը, և կործանեցին Առանը և սաստիկ պատերազմներով նվաճեցին... Հայկի (Հառակի) յեղբայր<sup>\*</sup> Բարդոսի յերկիրը<sup>\*\*</sup>...

Յեկ վերադառնալով այստեղից՝ [վրացիք] նույնիսկ մի ամիս ել չհանգստացն, շտապ գնացին և արշավեցին Սրբումի վրա, վոր և գուռն կարնուքաղաքի. և այստեղ եր բազմություն պատերազմների... ուր [վրացոց] ողնական եյին [դրսից]<sup>1</sup> սուրմարեցիք<sup>\*\*\*</sup>, կարսեցիք, սպերցիք, և ներքուստ՝ Սուլդուխի վորդի Նասրադինը:

... [Ապա վրաց] միացյալ ուժերն յելան Գեղարքունիք (Գելաքուն) և անցնելով Խաչենն (Խաչենն)<sup>1</sup> իջան Կարկար (Դարդարի<sup>\*\*\*</sup>) յերկիրը<sup>22</sup>. համելով Բայլական (Բալլ'ուն<sup>\*\*\*\*</sup>)<sup>1</sup> ավերեցին ամբողջ Առանը... իսկ Կարկարից (Դարդարից<sup>\*\*\*\*\*</sup>) վեց որ ման յելան մինչ Շամքոր (Շանքոր)...<sup>1</sup>

[Յեկ] նորից գնացին Լոռիից Սարգսի վորդիք՝ յերկու յեղբայրներ՝ Զաքարիա ամիբսպասալարն ու Հովհան (Իվանե) գործակալն (մսախուրթուխուցեան)<sup>1</sup> ավերելու Արաքսի (Խախսի) յերեքը. և այստեղ եր, վոր քարավանները հսկելու և կողոպտելու յեկել եյին դվինեցիք, բջնեցիք և ամբերգեցիք, վորոնց հետ նրանք կես ճանապարհին հանդիպեցին և կովի կպան իրար հետ. և մեծ պատերազմն ու քաջարի պայքարը գովելի յեր. [և վրաց զորքն] ամեն ինչով լի և անվանի վերադարձավ [Թամար թագուշ ու ու նրա ամուսին Դավիթ թագավորի մոտ]...

\* Բնագրում՝ վորդի:

\*\* Բնագրում՝ հայրենիքը:

\*\*\* Բնագրում՝ սուրմանեցիք:

\*\*\*\* Վար. Դուարդուար:

\*\*\*\*\* Վար. Բաղդան:

\*\*\*\*\* Վար. Դուարդուար:

Սրանից հետո Կայենի տեր Հովհան (Իվանե) գործակալը (մսախուրթուխուցեան) գրեց Դավիթ [թագավոր]ին վճռական, անվանի և մեծ ուժով արշավանք ձեռնարկել ավերելու մեծ Գեղարքունիքը (Գելաքունը), Պարսից-բազարն ու Գորլաքունը<sup>\*</sup> [վորը գարձալ վրաց հաղթությամբ վերջացավ]...<sup>1</sup>

... [Յեկ] ամիբը [Ա]բուբաքրի ձեռոք եր Ատրպատականը (Ադարբադագանը) մինչ Հայք (Սոմխիթ)...

... Ապա ամիբ-Միհրան՝ Փալավանդի վորդին, և Աղսարթան շիրվանշահը (շարվաշե) ամբողջ Առանի մեծամեծներով հանդերձ յեկան... [և] կանգ առին... Ազարա[կ]ի պուրակում...

... [Յեկ] արքայական տոնախմբությանն] Թամար և Դավիթ [թագավոր]ին ու նրանց վորդի Գեորգին... Տփղիս քաղաքից գուրս նախ և առաջ վողջունեցին սուերն ու դիչախները՝ հսերն ու նորերը, ապա՝ հերացիք և կախք, ապա՝ վրացիք (քարթվեխները), վորից հետո թորեցիք, շավշաղարշտայեցիք, ապա՝ սոմխիթցիք (սոմխիթարնի), վորից հետո՝ ափիսազներն և սվան-մեղքել-գուրիացիք...

... [Ապա] աթաբակին ծանուցին, վոր պարսիկները՝ ժողովելով Նախիջևանում (Նախճականում)<sup>1</sup> յեկել են Առան...

... [Յեկ] բոլորը ժողովեցան Սոմխիթում, ուր գնաց և Թամարն, ու տեսավ, վոր այստեղ եր շիրվանշահը (շարվաշե) և ամիբ-Միհրանը, նաև Դիչախի թագավորի յեղբայրը մեծ զորքով, ուր նրանք մի քանի որ մնացին աղոթելու համար...

... Յեկ կանգ առան [վրաց զորքերը] Յեկեղյաց (Ելեկեցիի<sup>\*\*</sup>) գետի վրա և հանվելով այստեղից՝ գնացին Շամքոր (Շանքոր<sup>\*\*\*</sup>)...

... Ապա զինված նստեց թագավորը քուրանի վրա, վորը՝ իբրև հոչակ ստացած՝ նա գնել եր Վախտանգի Խաչենցուց (Խաչենցուց), հատուցանելով վերջինիս բերդով և ավանով, վոր են Դարդմանը<sup>\*\*\*\*</sup>...

... [Յեկ] փախուստի դիմելով՝ պարսից զորքի՝ մի մասն ապաստան գտավ Գեղարքունյաց (Գելաքունի) լեռներում...

... Աբուբաքր (Բուբուբաքր) Նախկին աթաբակը՝ Նախիջևան

\* Վար. Գորալառուքը.

\*\* Վար. Ելեկեցիի:

\*\*\* Վար. + ... հազար հազարաց և բյուր բյուրոց, թվով մեծագույն, իբրև մորեխներ և ավաղը ծովի, Շամքորից (Շանքորից) մինչ Այան Շոթի և Կարդանաշատի (Կարգանաշտի), մինչ գուռն Գանձա[կ]ի...

\*\*\*\* Բնագրում՝ Ճարմանք:

(Նախճան) գաղթածը՝ թունավորեց... ամիր Միհրանին (ամիր-Միրանին)<sup>24</sup>...

... Հովհանն (Խվանե) Միաբգրձելը, վորը քաջամարտիկ երպատերազմում՝ փոքր արշավախմբով անցավ Գեղարքունիք (Գեղարքուն) ... [Այդ ժամանակ թշնամու զորքը] գալիս եր Գանձակ[է]ից՝ դիմելով դեպի Սուրբարի (Սուրբանի) յերկիրն և [Խոբ]-վերապետի վանքը<sup>25</sup> ... [ուր գտնվում եր] Դվինի և Հայքի (Սոմիկիթի) տեր Յելտկուղ \*\* աթարակի մնած առյուծ դյուցազնը՝ Սուրբարեցու (Սուրբանեցու) յեղբայրը...

... [Ապա] Թամարն իջավ մինչև Դվին... և վերադարձին կանգառավ Ագարակ[է]ում՝ լի փառոք և յերջանկությամբ<sup>26</sup> ... [Իսկ] Հովհանն (Խվանե) գործակալը (մասիսուրթուխուցեսը)՝ մեծ գորքով [արշավելով] և անթիվ ավար ուղարկելով՝ Խաչենեցի (Խաչինեցի) մեծամեծներին բերեց թագավորի մոտ...

... [Ապա վրաց զորքը] ամեն ինչ ավերելով հասավ Բասեն (Բասին) <sup>27</sup> ...

\*

... Ապա թագավորի մոտ յեկան ծառայելու յերկու յեղբայրներ՝ Սարգիս ամիրսպասաւարի վորոտիք, վորոնք այն ժամանակ հույժ մեծարյալ եյին թագավորի կողմից՝ Զաքարիա ամիրսպասաւարն և Հովհանն (Խվանե)\*\*\*) գործակալը (մասիսուրթուխուցեսը)<sup>28</sup>. և վրաստանի բոլոր մեծամեծները թագավորի մոտ եյին. և Հովհանն (Խվանե) կաթողիկոսն՝ հրեշտականմանն\*\*\* և աստվածային հոգվով լի, և այլ յեպիսկոպոսներն ել նվազ չափով ժողովել եյին թագավորի մոտ: Մի որ պատարագում եր Հովհանն (Խվանե) կաթողիկոսն, և յերբ [սուրբ] խոբհուրդը վերջացավ... բոլոր արժանաւորները հաղորդվեցին նշխարով. նշխար վերցնել ցանկացավ նաև Զաքարիա ամիրսպասաւարը. սակայն քահանաներն այն չտվին նրան, քանի վոր նա կրոնով հայ եր նղովյաներից, և ամօթիած ուղեց վերցնել նշխար և հաղորդվել (ուտել): Այս եր պատճառը, վոր [կաթողիկոսն] իբրև բոց գրգովեց և սկսեց սաստիկ մերկացնել նրան, սաեւով՝ «ուղղափառներից վոչոք թույլ չի տա քահա-

\* Բնագըռում՝ «միմականի քուելանասա դա վանիսա Սուրբանս միսիսի գուրաբիսա»:

\*\* Բնագըռում՝ «Երիթ Գուղ» (ՏԸՀ):

\*\*\* Վար. Իոանե:

\*\*\*\* Բնագըռում՝ հավասարն հրեշտակաց:

նայագործության [Ժամանակ] տալ նշխար ձեզ, յոթն անգամ նըղովյալ հայերին. իսկ շունը վոր գտնի, լայեղ ել չի անի ձեղանից փախցնի»: Այս պատճառով Զաքարիան ամօթիած գնաց իր վըանը: Յեկ յերբ Զաքարիա ամիրսպասաւարին հրավիրեցին դահլիճն թրիթը, նա համառոտ ճառով դիմեց անհավատներին, քանի վոր խոսքով կշամամբում եր մեր (վրաց) դավանությունը: Ապա հոգվով սրբով լի կաթողիկոսը պատասխանում եր և բացատրում: Իսկ Զաքարիան՝ չկարողանալով ընդդիմադրել՝ ասում եր. «Յեսարշավանքներում սննվածն՝ ի վիճակի (բարեկիրթ) չեմ քեզ պատասխանելու, և կրիմեմ մեր գավանության (հավատքի) վարդապետներին, վորոնք իմ փոխարին կամաչացնեն\* քեզ»: Իսկ Հովհանն (Խվանե) կաթողիկոսը պատասխանեց՝ «Թող լինի Քրիստոսի և միջակույս աստվածածին Մարիամի կամքը, վորը կամաչացնի նրանց ժիտողներին»:

Լսելով այս՝ Զաքարիան մարդիկ ուղարկեց իրենց (հայոց) կաթողիկոսի, նաև յեպիսկոպոսների, վարդապետների ու գիտունների մոտ: Իսկ Հովհաննը (Խվանեն) ընդդիմադրում եր սրբն՝ ասելով. «Հրաժարվիր այդ անելուց, քանի վոր պետք ե իմանաք, վոր ճշմարիտ դավանությունն (հավատն) այս ե»: Բայց Զաքարիան նրան չլսեց: Ապա յեկավ կաթողիկոսն վանի, և բոլոր յեպիսկոպոսներն ու վարդապետները, և սկսվեց քննությունը: Յեկ նստեց թագուհին՝ հուսով առ սուրբն թագուհին, և Դավիթ թագավորն և բոլոր մեծամեծները վրաստանի (Սաքարթվելոյի). մի կողմը [նստացրին] Միաբգրձեներ Զաքարիա և Հովհաննին (Խվանեյին), [և] մյուս կողմը հրավիրեցին [Հովհանն] կաթողիկոսին, [վորը] մտավասելով հետևյալ սաղմոսը. «Պատ արա ինձ, աստված, են»: Յեկ յերբ նա մտավ, թագավորները վոտքի յելան և պատվով նստացրին, նաև հայոց (սոմեխների) վարդապետներին, վորոնց նույնպես հարգանք ընծայեցին՝ ըստ կարգի:

Յերբ հարցուփորձը վերջացավ՝ բոլորը լուցին, ապա հայոց (սոմեխների) դավանության (հավատի) մասին սկսեցին խոսել ճառել և յերկարաբանել. և բարեկիշատակ [Հովհանն] կաթողիկոսը, սատվածային ներշնչմամբ ի վերուստ, խելացի բացատրում եր և իմաստնորեն պատասխանում՝ հերքելով նրանց (հայերի) ասածները: Իսկ նրանք (հայերը) վեճի մեջ ելի իրենցն եյին պնդում (հաստատում): Յեկ շարունակվեց բանավեճը մինչ հսկումն:

\* Վար. կապատասխանեն:



Յերկյուղ կրելով, վոր պատմությունս [կարող ե] յերկար լինել\*, բավականանում եմ ասելով [այսքանը]. ինչպես գիտեք, հայերը մեծ վայնասուն բարձրացրին... և [Հովհանն կաթողիկոսը] դիմեց նըանց՝ ասելով. «Թորգոմյան (Թարգամոսյան) տան [զավակներ], վոր համախմբվել եք ճշմարիտ հավատի դեմ, զիտցեք, վոր մարդկությանը տիրել ե սատանան...» ևն...

... իսկ հայերը դիմեցին նրան՝ ասելով. «Այսպես ե...»: Հովհանն կաթողիկոսն ասաց. «Այժմ զիտցեք, յեթե ձեր հավատը մերից լավն ե, հացը ձեզանով տիրոջ մարմնի կվերածվի. իսկ յեթե մեր հավատն ե ձերից լավ, մեր մատուցածը (քահանայագործածը) տիրոջ մարմնի կվերածվի»: Իսկ հայերն ասացին. «Այսպես լինի», կաթողիկոսը լսողության համար սոսկալի բան ասաց. «Գործով հրապարակներ և վոչ խոսքով»: Նրանք ասացին. «Ինչ վոր կանես, կանենք»: Կաթողիկոսն ասաց. «Յես ձեզ մի շուն կտամ և յերեք որ ժամանակ, վորպեսզի թափորով և աղոթելով լուսացնեք, և [այդ] յերեք որը նրան (շանը) անոթի պահեք. և մի շուն ել դուք ինձ տվեք, և յերեք որ անոթի պահեմ, և թափորով ու աղոթելով լուսացնեմ, ապա կերևա ճշմարիտ դավանությունը (հավատը): Յերրորդ որն յես կվատարեմ անարյուն դոհ[աբերություն]ը և ձեռովս կվերցնեմ նշխարն ե, թեև անվայել ե, ինեւտեմ շան առաջ, վորը դուք ունիք: Նույնպես և դուք բերեք ձեր նշխարը և նետեք շան առաջ, վորն յես ունիմ. և վոր նշխարն ել ուտվի, այն դավանությունն ե վատ. յեթե ձերն ուտվի, դուք ամաչեցեք, և յեթե մերն ուտվի, մենք ամաչենք»:... Թեև հայերը չկամեցան, սակայն յերկուսն ել տվին իրենց շները և զնացին դեպի իրեց վրաները:...

Ուրբաթ որն եր. սկսեցին թափորը: Մի կողմը գտնվում եյին թագավորն ու կաթողիկոսն և ամբողջ քահանայական դասն, և քիչ եյին անտեղ յեղիսկոպոսները, քանի վոր թագավորը ժողովի չեր կանչել: Յեկ մյուս կողմը գտնվում եյին հայերն և Մխարդը ձեները՝ Զաքարիան ու Հովհանը (Խոանեն): Յեկ գիշերը յերկուքյան կողմերն ել լուսացրին: Յեկ շաբաթ որը կըկին սկսեցին թափորը, և հսկումով ել լուսացրին միաշաբաթը. ապա արևն յեւլավ, և բոլորը դիմեցին յեկեղեցին՝ արտավալից աղոթելով աստծուն: Պատրաստեցին սուրբ սեղանը: Յերկու կողմումն ել տեղի ուներ լացը: Անարյուն գոհարերությունը վերջացավ թե վոչ,...

\* Վար. վոր [բանավեճը] կարող ե մինչ պիշտ շարունակվել:

կաթողիկոսը գնաց դեպի ժողովականները՝ ճանապարհին յերգելով. «սուրբ, սուրբ, տեր զորությանց են», ապա դիմեց բոլորին՝ յեղիսկոպոսներին ու Մխարդը ձեներին, և նրանց (հայերի) դավանակիցներին ասավ. «Լսեք այժմ, թորգոմյան (Թարգամոսյան) տան [զավակներ] ... յեթե ձեր հավատը ճշմարիտ ե, այս սուրբ հացը Քրիստոսի մարմին կդառնա, իսկ յեթե մեր հավատն ե հաճա սատծուն, մեր որհնածը տիրոջ մարմին կդառնա: Յեվ թեև անվայել ե, բերեք այն շունը, վորը յես ձեզ տվի, և այս սուրբ հացը նրա առաջը կդնեմ: Յեթե շունը մոտենա նրան և վերցնի, վոչնչ և մեր (վրաց) հավատը: Ապա ձեր տված շունը բերեք, և ձեր որհնած հացը գնենք նրա առաջ, և տեսեք թե ինչ կլինի, և նրանով կբացահայտվի, թե ում հավատն ե հաճո՛ Քրիստոսին»: Իսկ հայերը՝ թեև չկամեցան, բայց արդարացի պատասխան չունեյին, [և] հարկադրված ասացին կաթողիկոսին. «Քո նշած այս գործը քեզ ե վայել կատարելու»:... Յեվ կանգնած եր կաթողիկոսն իրեւ կոթող (աշտարակ) աննկուն (անդրդվելի)՝ յերեսը պահապարդ: Ապա պատվիրեց բերել յերեք որ անոթի մնացած շունը... իսկ հայերը տկարացած շվարել եյին, և զարմանում էյին:

Ապա կաթողիկոսը խնդրեց թագավորից, վոր հրամայի ժողովրդին լոել, և լուսթյունը հաստատվեց թե վոչ, լուսափայլ բերանով դիմեց Հայոց (Սոմիսիթի) վարդապետներին\* և Մխարդը ձեներին... Յերբ քահանաները շարվեցին, բերին այն շունը, վորը կաթողիկոսի մոտն եր, և նետեցին նրան (հայոց) նշխարը (զոհը): Իսկույն յետ վերցրեց: Ապա վրացիք սկսեցին փառարանել աստծուն... իսկ հայերն՝ ինչպես գորդերը (գողոսները) լծից զուրկ՝ կանգնած եյին լուռ ու մունջ:... իսկ թե վրացիներին ինչպիսի ուրախություն, հույս և աստվածային փառք վիճակվեց, անկարելի յե պատմել:

Յեկ ներս մտան թե վոչ, թագավորն և կաթողիկոսը մեծ ընթրիք պատրաստեցին: Իսկ ամոթիսած հայերը զնացին Մխարդը ձեների վրանը: Հովհանն (Խոանե) գործակալը (մախուրթուխուցն) ասում եր իր յեղեցյալ Զաքարիա ամիրսպասալարին. «Չուզեցի ընդդիմախոսել վրացիներին, քանի վոր ճշմարիտ հավատի տեր են: Այժմ ինչը պետք ե ինձ լինի խոչընդուն (կանգնեցնի), վոր յես չընդունեմ ճշմարիտ հավատն և չմլրտվեմ վրաց

\* Բնագրում՝ «մարդասնթա» || «մրիսանիթա» (ՏԸ). պետք ել ինի՝ «մոձդարթա»:

կաթողիկոսից»: Իսկ նա (Զաքարիան) պատասխանում եր. «Հասւկացա, յեղբայր, վոր ճշմարիտ հավատը վրացիներինն եւ սակայն [վերջին] դատաստանի որը թող նրանց հարցնեն, ով առաջինները ցանկացան հերձվածող լինել. յես չեմ միանա վրացիներին»: Լսելով այս՝ Հովհանը (Իվանեն) պատասխանեց նրան. «Զարմանում եմ քո իմաստությունից, վոր հասկացար և լավագույնը չես ընտրում. իսկ յես չեմ հպատակվում քո դիտավորությանը, այլ մկրտվում եմ» [ընդունելով] վրաց հավատը»: Յեվ իսկույն և յեթ յեկավ ու մկրտվեց մեր (վրաց) հավատով Հովհան (Իվանե) կաթողիկոսից. և հայերից շատ շատերն ել յեկան մկրտվելու, և յեղավ ուրախություն ու ինդություն: Իսկ Զաքարիան նույն անհավատության մեջ մնաց<sup>29</sup>...

\* \*

... Մինչ այժմ կարսը (Կարին) թուրքերի ձեռին եր. [Թամարը] զորք ուղարկեց պաշարելու այն. թուրքերը՝ լսելով այս՝ թողին կարսը (Կարին) և փախան: Իսկ թագավորը գրավեց կարսը (Կարին) և կարսի (Կարիի) հակող թողեց Հովհան (Իվանե) Ախալցիխեցուն և նշանակեց նրան կուսակալ՝ տալով աթարակություն և ամիրացամիրայություն... և խեց թուրքերից շրջակա յերկրները... և [նույն] Հովհանին (Իվանեյին) շնորհեց կարսի ու նրա մերձակա յերկրները<sup>30</sup>...

... Հունաստանի (Բերձենստանի) ծայրագույն սուլթանը՝ Զարսալանի վորդի Խուքնադին (Նուրբարդին\*) կոչեցյալը, վորդ գեւրիշխում եր բոլոր այլ սուլթաններին և տիրում եր մեծն Հունաստանին (Բերձենստանին) Ասիայում և Կապաղովիլիայում մինչ Պոնտոսի ծովը, դիմեց իր բազում զինվորականներին և ժողովեց ութառուն բյուր, վոր և չորսնարյուր հազար\*\* (sic) \*\*\*<sup>31</sup>...

... Յեվ Վարձիի աստվածածնի առաջ արտասվալից աղոթեցին Դավիթ-Սուլանն ու նրա զորքը... և արշավախումբ ուղարկեց

\* Վար. Նուրբարդին:

\*\* Վար. ութ հազար (sic):

\*\*\* Վար. ավելացնում ե. «... վորոնց ուղարկեց Միջագետք, Կալոներո, Գաղատիա, Գանձրա, Անկյուրիա, Խսավրիա, Կապաղովիլիա, Մեծ Հայքը, Բիթինիա և Պաֆլագոնիայի կողմերը... ապա միացրեց Յերզնկայեցվոց (Եղինկայեցվոց), Խարբերցվոց (Խարբերցվոց) և Կարնո-քաղաքացցվոց... և Սալուխի վորություն իր յեղբորը նշանակեց Կարնո-քաղաքում»...

Վարձիից\*... Յեվ առաջապահ [գնդումն] եյին Զաքարիա Միարդել ամիրսպասալարը և Ախալցիխեցի յերկու յեղբայրներ Շալվա և Հովհանը (Իվանեն), վորոնցից Շալվան մանդատուրթուխուց եր, [և] Ճիւաբերը, և այլ թորեցիք. և դիմեցին Բասենի (Բասիանի) կողմերը... իսկ Դավիթ թագավորը [զորքով]... դիմեց, Բոլոստիկե\*\*<sup>32</sup> կոչված տեղը Բասենում (Բասիանում), և յեկան սուլթանի բնակատեղը:...

Այսպես որեցոր բարգավաճման մեջ եր բոլոր գահականներից (գայիսոն ունեցողներից) պայծառագույն Թամարը՝ առավելապես աստվածպաշտությամբ, յեկեղեցիներ և վանքեր հիմնելով ու կառուցելով, վորբերին և վորբերիներին սփոփելով ու արդարագատությունը տարածելով: Սրա որոք ուրախության և խնդության մեջն եր նրա թագավորությունը (թագավորությունները): Յերբեմն [Թամարն ու Դավիթն] անցնում եյին [հայնկույս Լիխի] և վարում այնտեղի գործերը, նաև վորսում Գեղգութ և Աջամեթում. ապա անցնում եյին [հայմկույս Լիխի]: Բարթիլի, Հայք (Սոմխիթ), և կանգ առնում Դիլինում\*\*\*<sup>33</sup>, ուր նրանց մոտ գալիս եյին հարկեր (Խարաջա) [տալու] Գանձակիցիք և վերին քաղաքացիները: Գարնանը բարձրանում եյին Հայք (Սոմխիթ), ստանալով հարկեր (Խարաջա) Նախիջևանեցուց (Նախճավանեցուց), և [ապա] գնում Կողա (Կոլա)՝ Արտահանի (Արտահանի) գլուխը, ստանալով և այնտեղից հարկ (Խարաջա), նաև կարնոքաղաքից, Յերզնկայից (Եղինկայից) և այլ շրջակա քաղաքներից\*\*\*...<sup>34</sup>

... Յեվ ամենուրեք խաղաղություն եր, և թագավորը գտնվում

\* Վար. + վորին ինքը Թամարն եր առաջնորդում բոբիկ վոտներով ... և առաջնորդեց Բասենի (Բասիանի) կողմերը, և մոտեցան Կարսին (Կարիին) [ու] կանգ առան:

\*\* Վար. Բոլոստիկե || Բոլոտկե:

\*\*\* Վար. Դուրսում:

\*\*\*\* Վար. + Նրա (Թամարի) գահակալության քսանեյերեքերորդ թե քսանչորսերորդ տարին<sup>34</sup> հարց յեղավ Կարսի (Կարիի) [գրավման] մասին, քանի վոր վաղուց արդեն Սարգսիս Թմողվեցին, Շալվա Ախալցիխեցին և մեսիները պայքարում եյին, բայց ի վիճակի չելին գրավելու այն... Ապա Դավիթ [Սոսլանը]... հրամայեց Զաքարիա և Հովհանին (Իվանեյին) գնան և սաստիկ պատերազմն... Յեվ յերկարատե յեղավ այս գործը, իսկ ինքը Թամարը կանգ առաջ Զաքարիա և Դավագիտիցիք, ուր և սպասում եր նրանցից լուր ստանալուն... [Յերբ Կարսը պաշարեցին և անջուր մնացած քաղաքացիներից շատերը կոտորվեցին] մնացածները խնդրեցին Դավիթից, վոր Թամարն ինքը համաց մոտ, վոր-

Եր Գեղութում, քանի վոր սուրբ պատ եր, և յերկու Մխար-գրձեներն ել թագավորի մոտն եյին: Տեղեկություն ունենալով սրա մասին՝ Արտավիլի (Արդավելի) սուլթանը թշնամություն սկսեց քրիստոնյաների հետ: Կանչելով իր զորքը՝ շարժվեց գեպի Անի, և ավելեց այս, քանի վոր լսել եր Մխարգրձեների բացակայությունը տանից. և բարձրանալով Արաքսի (Խախսի) յեղերքով՝ անգամալիորեն յեկավ Անի. ճանապարհին վոչոքի չփասեց և ավագ շաբաթ յերեկոյան յեկավ Անի-քաղաք. և ճենց վոր սկսեց լուսանալ (լուսաղեմը մոտեցավ)՝ զարկեցին գերանին, և քաղաքի դռները բացվեցին... [Սուլթանի զորքերը] մտան քաղաք և սկսեցին կոտորել և գերել [բնակիչներին]. ժողովրդի մեծ մասն յեկեղեցիների մեջն եր՝ համաձայն քրիստոնեական կրոնի. վոմանք փախան դարպաներն ու այնտեղ ամրացան և վոմանք փախան այրեք, վորոնց «քարտուն» եյին կոչում: Անմատչելի մնացին [միմիայն] նրանք, վորոնք բերդի կամ քարտունների<sup>35</sup> մեջն եյին, վորոնց մեջ [թշնամին] չմտավ, քանի վոր յերեք կողմից քարափ եր, ժայռոտ և քարայրներով լի: [Սակայն] զրավելով ամբողջ քաղաքը՝ մի բյուր և յերկու հազար մարդ յեկեղեցիների մեջ կոտորեցին ինչպես վոչստրներին, բացի նրանցից, վորոնք հրապարակներում և փողոցներումն եյին: [Յեկ] այսպես վայրագարար ավերեցին Անին, և բեռնակիր ու անհամար ավարով լի առն վերագրձան<sup>36</sup>:

Յեկ Անիի ավերման մասին համբավաբերները լուր հասցրին Գեղութ նորկուրակեյի (ախարշկիրակի) որը: Ամիրսպասարար Զաքարիան և գործակալ Հովհաննը (Իվանեն)<sup>37</sup> լսելով այս՝ շատ տրտմեցին... Ալա Մխարգրձեները դիմեցին թագավորին. «...Դու, արքա, ծանուցիր քո զորքին, վոր պատրաստ լինի զնալու Արտավիլի (Արդավելի) սուլթանի գեմ. նախ զնանք Անի...»: Հավանելով նրանց (Մխարգրձեների) ասածը՝ թագավորը հրամայեց

---

պետք անձնատուր մինեն նրան... Խոկ յերբ [Թամարը] հասավ՝ [բերդի] բանալիները հանձնեցին նրա վորդի Գեղութին (Գիորգիին), ապա Թամարին՝ խնդրելով խաղաղություն [ճամատափի], և յերդվեցին, վոր վոչոքի չհանձնի Կարսը (Կարի), ինչպես Անին (Անիսը) և Դվինը, այլ իր թագավորությանը կցի: [Թամարին] այս առթիվ ճամատափությունը և հրամայեց իր վորդի Գեղութին (Գիորգիին): վոր մտնի և ստանա քաղաքն ու քերպը: Յեկ յեղավ այսպես, այս մի քաղաքն ու քերպը [Թամարը] իրեն վերապահեց բոլոր նրանցից, վոր զրադեց՝ Զորակերտից մինչ Արաքս (Խախս), Գագից մինչ Գանձա[կ] և Զավարութից (Զավախեթից) մինչ Սպեր...

իր զորքին, վոր պատրաստ լինի. և յեկան Մխարգրձեներն Անի, և սկսեցին կազմակերպվել. ապա մոտեցավ նրանց (հայոց) պիղծ կրոնի պասը, մարդ ուղարկեցին, թագավորի մոտ՝ զորք ինդրելով Արտավիլի (Արդավելի) սուլթանի գեմ: Ապա թագավորը հարմայեց մեսխերին, թորեցիներին, թմոգվեցիներին, հերկախերին [և] սոմիիթցիներին [յեխել], ... վորոնք ժողովեցան Անիում և գնացին Արտավիլ (Արդավել). անցան Գեղարքունիքը (Գելաքունը) և անցնելով Մխարգանը\* դիմեցին գեպի Արտավիլ (Արդավել)... [վորն և] պաշարեցին... Խոկ Արտավիլի (Արդավելի) սուլթանին և նրա կանանց ու զավակներին գերի վերցրին ու տան և յերկու հազար ընտրյալ մարդիկ սպանեցին մզկիթի մեջ [ճիշտ] այնպես, ինչպես նրանք նույն արին Անիի յեկեղեցիներում\*\*... և հաղթող վերադարձան Անի ու նույժ միխիթարվեցին:... Այս ժամանակ թագավորը գտնվում եր Կողայում (Կողայում) [և] Նրա ամբողջ թագավորությունը լցվեց անթիվ հարստությամբ, վոսկով, արծաթով ու այլ ամենայն հարստությամբ, վոր բերեցին Զաքարիա և Հովհաննը (Իվանեն), [և] վորի պատճառով մեծապես շնորհապարտ թագավորը նրանց շնորհեց շատ բերդեր և քաղաքներ ու յերկըրներ: Յեկ այսպես՝ աստծուն փառաբանող, ուրախությամբ լի ապրում եյին նրանք (Մխարգրձեները), վորոնք լրջակայում գտնը վորներից ստանում եյին հարկ[եր] (խարաջա) և անհամար ընծաներ:...

Ապա թագավորի մոտ յեկան Մխարգրձել Զաքարիա ամիրսպասարարն և Հովհանն (Իվանե) գործակալը (մսախուրթուխուցեն), և Վահրամ (Վարամ) Գագեցին, և զեկուցին. «... Այժմ հրամայեցեք Վրաստանի զորքին, վորպեսզի պատրաստ լինի արշավելու Խորասան (Խվարասան)...»: Լսելով Մխարգրձեների այս խոսքերը՝ թագավորը դիմեց իր թագավորության հայսկույս և հայնկույս [գտնվող] բոլոր յերեւելիներին, և հազորդեց նրանց (Մխարգրձեների) ասածի մասին: Յեկ բոլորը՝ լսելով Մխարգրը ձեների կոչն արշավանքի յեխելու մասին՝ հավանեցին այս, և վորոշեցին արշավելու... Աղոթելով Վարձիի աստվածածին առաջ՝ [թագավորն] որհնեց դրոշակին ու արշավագործը, և ուղարկեց Պարսկաստան: Տվեց դրոշակը Զաքարիա ամիրսպասարարին, և նրանք (զորքերը) գնացին Պարսկաստան: Իջնելով Նախիջևանի (Նախճանի) կողմերը՝ [վրաց զորքն] անցավ Զուղա և Արաքսի (Խախսի)

\* Բնագրում Մխարգան: Վար. Խսպիան:

\*\* Վար. յեկեղեցում:

յեղերքը, ապա մտավ Դարադուղի նեղ ձորը, վորտեղից վեր յելավ դեպի Մարանդա... [Ապա՝ հաղթելով Արտավիլի սուլթանին՝ վրաց դորքն] անցավ Արաքսը (Ռախսը) և Նախիջևանի (Նախճավանի) կողմերը, և յեկավ Տփղիս՝ թագավորի մոտ<sup>37</sup>:

Ապա առաջ յեկավ մեծ տրտմություն, քանի վոր վախճանվեց Զաքարիա ամիրսպասալարը՝ Սարգիս ամիրսպասալարի վորդին՝ վորը հույժ մեծարեցավ և լի յեր ամենայն բարիքներով, հաղթող, քաջ և հույժ մաքառող... Սրան (Զաքարիային) վողացին թագավորն [և] Վրաստանի ամեն մի մարդ, քանի վոր այս ժամանակներին իշխանների միջև նրանից ավելի քաջարի վոչոք չեր յերեացել, ինչպես նաև տոհմական ծագումով:—Նա Արտաքսես Յերկանաբազուկի տոհմիցն եր, և դավանությամբ հայ եր, [և] ոժոված եր աստվածային և մարդկային բոլոր բարիքներով: [Յեկավ այս քաջարի հայրը մի վորդի թողեց, վորը Շ[ահ]ին[2]ա[հ]\* եր կոչումը<sup>38</sup>: Ապա [թագավորը] կանչեց Զաքարիայի յեղբայր Հովհան (Իվանե), գործակալին (մսախուրթուխուցեսին), և կամեցավ շնորհել նրան նրա յեղբոր պատիմ, ու տվեց նրան ամիրսպասալարություն: Իսկ Հովհանը (Իվանեն)<sup>1</sup> զարմանալով այս առթիվ՝ ասաց թագավորին: «Այս պատիվը, վոր դու ինձ շնորհեցիր, շատ և շատ մեծ ե. բայց յես արժանի չեմ իմ յեղբոր անունով կոչվել ու չեմ ուզում ամաչել՝ գրավելով նրա տեղը. ուստի և շնորհիր ինձ աթարակություն, քանի վոր Վրաստանում դուք՝ թագավորներդ՝ տակալին սահմանած չունիք աթարակություն: Սրանով դու կղորացնես քո շնորհն առ ինձ, քանի վոր կարժանացնես բարձրագույն նոր պատվի, և աթարակություն կշնորհես ինձ, ինչպես ընդունված ե սուլթանների մոտ, քանի վոր սուլթանների որենքով աթարակը թագավորների և սուլթանների հայր և գաստիարակ և [համարվում, և այդ պատճառով ել] կոչվում ե «աթարակ»: Սրանով կղորացնես քո շնորհը նախ և առաջ առ ինձ: Լսելով այս՝ թագավորը շնորհեց նրան աթարակություն, վոր մինչ այս Վրաստանի արքունիքում (թագավորների առաջ) վոչոքի չեր արվել և գործակալություն (մսախուրթուխուցեսիք) շնորհեց [թագավորը] Զաքարիա Թագեցու վորդի Վահրամին (Վահրամին), վորը պատվական մարդ եր և արշավանքներում հաղթող: Յեկավ այսպես նրանք միշտ թամար թագուհու (թագավորի) մոտ ելին:

\* Բնագրում Շինա (sic). Վար. Շալվա:

Իսկ Թամար թագուհին (թագավորը) ձմեռը Դվինումն\* եր լինում և ամառը Կողայում (Կողայում) ու Ցելի լճի [մոտ], յերբեմն անցնում եր Ափխազք (Ափխազեթ), Գեղութ և Ցիում\*\*...:

## ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «Աշոռնի»-ն նույն Աշոռնիք կամ Աշոռունիքն ե (Յերասխաձորը). «Ի գուանը Աշոռնիս... ի գլուխ, որ ասի Կաղեղուան»՝ այսպես և այն հիշատակում Մ. Ռուհայեցին (Ժամանակագրութիւն, Բ. տպ., Վաղ. 1898, էջ 268—269): Հմմ. M. Brosset, Histoire de la Géorgie, I, 2, p. 384, n. 4.

2 Հմմ. Վարդանի (Վեն. 1862, էջ 123—124) տեղեկությունը. «Շահի-Արմենն... տիրեալ երկոսասան քաղաքաց, կոչեցաւ թագաւոր Հայոց, որ է Շահի Արմէն՝ ըստ իւրեանց լեռուին»:

3 Անտարակույս, «Հազար ու մի գիշերի» աղբեցությամբ ե ասված:

4 Հմմ. Ս. Ռոբելլանի (Տփղիս 1911, էջ 382) վկայությունը. «Դէսրգի էառ զԱնի քաղաք ի 610 (=1161) թուականին և զամենայն տունն Շիրակայ»:

5 Անիի առումը Գեղորգի կողմից, համաձայն վերոհիշյալ հայ պատմիչների, տեղի պիտի ունենար 1161 թվին: Այս առթիվ Մ. Ռուհայեցին (օր. cit., 426) գրում ե. «Ի թուականութեան Հայոց ՈՓ (=1161) թագաւորն Վրաց Գրգի որդի Դեմետրի՝ որդույ Դաւթի, եկն ի վերայ թագաւորաբնակ մեծի քաղաքին Անույ յաւուրս ամարայնոյ, յաւուր երկուշաբաթի և... ի վաղիւն առեալ զքաղաքն բռնութեամբ... եւ եղեալ պահապանն քաղաքին արս լնատիրս երկու հաղար, և ինքն գարձաւ մեծաւ յաղթութեամբ և գնաց ի թագաւորութիւնն իւր. իսկ Տէր Խլաթայ, որ Շահի-Արմէնն կոչեն, ժողով արաբեալ արս ութիսուն հազար, եկն պաշարեաց զքաղաքն Անի. զայն լուեալ թագաւորն Վրաց՝ եկն ի վերայ նոցա և կոտորեաց զնոսս, և արար զնոսս փախստական ...և առին [վիրը] ծառայս երկու հազար և հինգ հարիւր, զվասուրս՝ որք էին հարիւր յիսուն ի նոցանէ. ամիրայք մեծամեծք. և ձիս և ջորիս և ուղստա անհամար, և զրան և ջօշան, և այլ սին որ ոչ գոյ թիւ, և ոչխար բագում. և լցաւ քաղաքն Անի ամենայն հարստութեամբ, զոր յառման վրացւոյն էին կորուսեալ՝ կրկնապատիկ շահեցան, մինչև զենտիր ջօշանն երկու դանկ ծախէին: Եւ զինի բազում աւուրց գնացին մարդկէ քաղաքին Անույ ի տեղի պատերազմին և գտանէին զրան բազում ի մէջ խոտին և բերէին: Եւ թա-

\* Vat. Դելում:

\*\* Թվելով ապա մի առ մի միահեծան Թամարի «ազգոգուստ» և «ժողովը դասեր» գործերը, վարիանտը (Վախտանգյան խմբագրությամբ) նշում ե. «Սրան վկայեն Շարգանշահների (Շարգանշեթի) և Դեբբենտցով (Դարուբանդեցվոց), Խուճախների (Ղուճախերի), Ռսերի, Կասախների (Քաշախների), Կարնաքաղաքացին և Տրապիզոնեցվոց յերկիրները (աները), վորոնք սրա (Թամարի) շնորհիկ ապատ կյանք ելին վայելում և միանգամայն ապատիկ ելին թշնամիներից...»:

գաւորն զայս բարութիւնս արար քաղաքին Աննոյ, զի յորժամ էտո զնա՝ երես  
քառասուն հազար դանեկան և գնեաց ի հեծելէն զգերեալ ծառայն Աննոյ՝  
քըիստոնեայ և զայլազգիք: Այս եղն ի պահն սուրբ Գրիգորի, որ ի միջնաբն  
ամառան աղունացիցն՝ յորժամ առաւ Անի, և ամսեանն օգսասոսի կոտորեցին  
զամիլ Միլբայն, ու էլ Շահի-Արմէն:

Ինչ վերաբերում է Դիլինին, նրա առումը նույն Մ. Ռուսակեցին (Էջ 429) այսպես և նկարագրում. «Յայտ ամի՞ (ՈժԱ. = 1162) առաւ մեծանուն քաղաքն Դուին ի թագաւորէն Վրաց Գորգէ. բռնութեամբ ի ներքս մտեալ զինի փոխառական զօրաց այլարգեացն, որք ելեալ էին ի քաղաքէն ընդգետ նորա պատերազմել և նա ի փախուստ դարձուցեալ կոտորիեաց զննա. և զմնացեալքն դէմս ի քաղաքն արարեաք միաբան մտեալ ընդ դուռն քաղաքին կոտորեցին զամնեսին յանխնայ, գերեցին և այլեցին զբնակութիւնն նոցա, և ինքեանք դարձան մեծաւ աւարտ և գերութեամբ յաշխարհն իւրեանց»:

Նույն Դվինի առաջնա մասին Վարդանը (127) գրում է, «ևսկ թագաւորն Վրաց [Գէորգի] կուտէ առ ինքն զկովի կասային զօբան, և գայ առնու զԴուին՝ խստագոյն խայտառակեալ զնոսս ի սուր և ի հուր, բաց ի քրիստոնէիցն որ անդ»:

6 ζαμ. Ψαρηλωάνη (εδ 127) έκτικια λι θουπρέρη. «Ελακριτάν φατ γιαγρέρεκεων  
κι ή ρωνηλεων Φοικήν, κι υπογοτεκνικήν αριστήν κι μραπτεκνηλ ήρρη παραλην Λασταρηήν  
φατ ή Σερένην κι αγρέτ ανηρ φωμέρηγν... κι τωπινήν ή φαχτούν Φωμάρη... ή νε ηκήνη  
κι θωματιρηήν Κλωναρ φωμάρεκεκνηλ φωμάζη, θηπηληρηλ φωμάρεκην κι φακέρηναν ανη-  
τεξήν» Λεύν. Οιρεβηλωάνην ήτη (εδ 382) φροπιλ κι, «Θωματιρηήν Φέρηρηφη..., μή ανηρημ  
φωμάνηρη φατηδαν άθωμάρεκην έκτικιαντάν ή φαχτούν Φωμάρη, οπη έκεκνηλ ήρη 100,000-ωτι  
κι φέρερη Φέρηρηφη. κι Λαμέρη Ληπτοπρέρηλ φωμάνηρην φίρην, κι ρημρηνηλ ήρηθωματιρηήν.  
φηρη μεδωταν ήνωμάρεκηρη κι αρητακην φωμάνηρηη φωμάνηρηη φωμάνηρηη φωμάνηρηη φωμάνηρηη  
φηρη μεδωταν ήνωμάρεκηρη κι αρητακην φωμάνηρηη φωμάνηρηη φωμάνηρηη φωμάνηρηη φωμάνηρηη φωμάνηρηη

<sup>7</sup> Այս տեղեկությունները, զուգապիտելով իբր-Ար-Աքիրի տվյալներին, վերաբերում են 1162 թվին (Հմ. Խ. Զավախիկևիլի, Վարաց ժողովրդի պատմությունը, Ա, 1914, էջ 562—563):

8 Այս առթիվ Վարդանը (եջ 127) նկատում է. «Սակայն [Քէորգի թագավորն] գրգռէ զծովիդ սուլտանն, զորդին Մահմուդի զԱլան և ածէ յԱնի, և զամս չորս պահէ ի տառապանս անվար և անհանգիստ. մինչ թագաւորն Վրաց Քէորգի ժողովմերով քաղաքին՝ կոչէ առ ինքն զսուլտանն և տայ ի նա զԱնի. զի չէր ձեռնհաս պահել ի բազմութենէ անօրինացն»: Փանի վոր Մահմուդի փորդի Ալանն ամբողջ 4 տարվա ընթացքում Անիին հանգիստ չեր տալիս, ուրեմն պետք ե յենթագրել վոր Գեորգ թագավորը շնորհած պիտի լինի Անին նույն Ալանին  $1161 + 4 = 1165$  թվին (Հմմ. M. Brosset, op. cit., p. 395, n. 1. Խլ. Զալալախիսվիլի, Վրաց ժողովրդի պատմությունն, II. 564):

<sup>9</sup> Իբրահիմ Ալ-Բրիդի համաձայն, այս գետը երբ տեղի պիտի ունենային 1165—1166 թ. թ. (Հմմ. M. Brosset, op. cit., p. 396, n. 1. Խի. Զավախիսվիլի, op. cit., 565):

<sup>10</sup> Վարդ. «Ղաղպ»-ն անհասկանալի յեւ ուստի և Մ. Բըսին այն ուղղում է Գեղամա-ի. Le lac de Gégham, ou Goghtcha (M. Brosset, op. cit., p. 397, n. 6):

11 Գեղրդ թագավարի՝ Որբելանների դեմ մղած պայքարի մասին հայ պատմիչներից մանրամասն խոսում են Վարդանն (Եջ 130) ու Ս. Արքելյանը (Եջ 383—389): Հաս Վարդանի, «յայնմ ժամանակի յայտնեաց իւանէ զշարութիւնն իւր, զեղմօլորդիք թագաւորին իւրեանց զ Դիենէն և զուրովս յազատացն յինքն յանկուցեալ՝ խորհեցաւ սպանանել զթագաւորն, մինչ կայլ ի Սախատէ (տպ. Սախատա, Տ. Մ.-Բ.) յանհոգու, զոր իմացեալ յառնէ միողէ՛ փախեաւ ի Տփղիս, զի սակաւամարդ էր. և անդ հաւաքեցան առ նա բազումք թողով զշար խորհուրդն: Եւ յորժամ զօրացաւ կողմն թագաւորին, և կամէր գնաւ ի վերայ ապստամբացն՝ որք ի Սախատէ, փախեան յամուրս իւրեանց, և ապա մտին ի Լոռէ, բացի Լիպարտէն՝ որ չոգաւ ի Պարսիկ կողմն երկու որդուովք. և էաու թագաւորն զամենայն գանձ Օրբէլեանց, և ամեննեքեան անկան յոտս թագաւորին, եղօրորդին և ընդ նմա այլքն, մինչև ինքն իսկ հանէ. զրոյ զաշն կուրացոյց, և զկրտսեր որդի նորս զ Բաւթար և զինէն, զորդի Լիպարտին սպան, և յոշինչ եղին չար խորհուրդքն ամենայն, ի վեցհարկւոր քսան և վեց թուլին»: Համեմատաբար ավելի մանրամասն խոսում ե Օրբէլյանների ապստամբության մասին Ս. Արքելյանը, փոքն իր տեսությունը սկսում և հետեւյալ խոսքերով. «Իսկ ի թուականին Հայոց 626 եղև աղմուկ շփոթի ի մէջ թագաւորութեանն Վրաց, և բնաշինջ կործանեցաւ տունն Օրբէլեանց», և այլն: Ս. Արքելյանի տեղ-տեղ տված սխալ լուսաբանությունների քննակատությունը տես. իվ. Զավալսկինի, օր. սիտ., 571, ծանոթ»:

13 Ասել ե՞ հակաքաղկեդոնիկները (միաբնակներ)

14 Ասել ե՞ քաղկեդոնիկ (յեղկաբնակ)

15 Վրաց պղաբառական պաշտոնի յության մասին մանրամասն տես. Խվ. Զավալիկիևը, Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, գ. II, հատված I, Տփդ. 1928:—Սարգիս Միարդքանելը, համաձայն Սանահնի արձանագրության, վախճանվել է 1187 թ. (Ա. Կոստանդնուպ, Վկիմական տարեգիր, ՍՊԲ 1911, Էջ

36): Հետևապես, իվ. Զավախիւլիու կարծիքով (Վրաց ժողովրդի պատմությունը, II, 590—591), Գամբեկելն ամիսպասալար կարող եր գառնալ նույն 1187 թվին:

16 Այժմյան Զըլլըր-ջրյուլ կամ Զըլլըր լիճը:

... [Թաթարները] հարյուր քառասուն հազար հոգուց բաղկացած մոտեցան Ատրպատականին (Աղարբադագանին), ապա մոտեցան Մխարգրձեների յերկրին: Դվինը Հովհան (Խվանե) աթաբակի ձեռին եր, իսկ Անին տրված եր Շահնշահ (Շանշե) մանդատությունուցեանին: Խվարազմացիք յեկան Լաշա-Գերգի (Գիորգիի) մահվան յերորդ տարին գերելու և ավերելու Դվինի և նրա մերձակա յերկրները: Լսելով այս՝ Հովհան (Խվանե) աթաբակն և Վահրամ (Վարամ) Գագեցին գնացին Ռուսութանի մոտ և զեկուցին խվարազմեցվոց ու մեծն սուլթան Զալալադդինի գալու մասին... [Այդ ժամանակ] Հովհան (Խվանե) աթաբակը ծերացած եր, և վոչ բացահայտ, այլ գաղտնի կերպով կուսակրնություն եր ընդունել... Այս Հովհան (Խվանե) աթաբակին Ռուսութան թագուհին (թագավորը) զորքերի գլուխ նշանակեց՝ տալով դրոշակ, և ուղարկեց սուլթան Զալալադդինի դեմ կովելու: Սրանք մոտեցան Դվինին և Ամբերդին. իսկ խվարազմեցիք կանգ եյին առել Գառնի գյուղում... Առաջընթաց զորքում [աթաբակը] նշանակեց Թորեցվոց և Ախալցիինեցի յերկու յեղայր Շալվա և Հովհանին (Խվանեյին)... [Վրացական զորքը պարտություն կրելուց հետո] փախուտի դիմեց. Շալվան կալանավորվեց... իսկ [վերջինիս] յեղայր Հովհանը (Խվանեն), վորս ապաստան եր գտել Գառնիի այբերում, քարով սպանվեց: Ապա Շալվային ներկայացրին Զալալադդին սուլթանին, և նրան ճանաչեցին Նախիջևանցիք (Նախճանցիք) և Ատրպատականցիք (Աղարբադագանցիք)...

Ապա Հովհան (Խվանե) աթաբակը վերաբարձավ Բջնի, իսկ սուլթանն՝ Ատրպատական (Աղարբադագան) և Նախիջևան (Նախճան)... Յեկ յերկու տարուց հետո վախճանվեց Հովհան (Խվանե) աթաբակը, և [զորա]գլուխ նշանակեցին Ավագին (Ավաքին)<sup>6</sup> շնորհելով նրան ամիրսպասալարություն...

[Ապա սուլթանն] յեկավ և ավերեց ամբողջ Դվինի յերկրը, Անին և ամբողջ Անվոր յերկրը, Սոմխիթը, Գագը մինչ Գանձա[կ]. իսկ մինչ այս Շամքորը (Շանքորը) Վահրամ (Վարամ) Գագեցու ձեռին եր, վորը խելամիտ և պատերազմներում անուն հանած մարդ եր...

... Լսելով, վոր Ավագ (Ավաք) աթաբակն ու ամիրսպասալարը Բջնիումն ե գտնվում, Զալալադդին սուլթանը կամեցավ նրա հետ

տեսնվել: Դեսպան ուղարկեց նրա մոտ ասելու. «Դու՝ թագաւորի վազիրապետ (վազիրթուխուցես)՝... [արի]. միւմի մարդ հետներս վերցնելով, ժողովենք, քանի վոր խոսք ունիմ քեզ ասելու»: Ավագին այս դուր յեկավ և տեսակցության... գնաց զինված: Իսկ հայնկույս, Բջնիի ձորում, [յերևաց]<sup>7</sup> հետն մի մարդ ունենալով՝ սուլթանը, վորը նույնպես զինված եր, և մեկը մյուսին մոտեցան: Ապա սուլթանն ասաց. «Յես չեմ յեկել Վրաստանն ավերելու, այլ հաշտություն և խաղաղություն կնքելու»...: ... Լսելով սուլթանի այս խոսքերն՝ Ավագն (Ավաքն) վոչինչ չպատասխանեց, այլ միւմիայն ասաց. «Յես կզեկուցեմ թագավորին և նրա վազիրներին»:... Ռուսութան թագուհուն (թագավորին) այս տարորինակ թվաց և պատվիրեցին Ավագին (Ավաքին) չմել այսպիսի գործերի մասին, այլ միանգամայն մերժել: Յեկ Ավագն (Ավաքն) այս հայտնեց սուլթանին: Իսկ վերջինս՝ լսելով այս՝ իր ամբողջ զորքով տեղից շարժվեց և դիմեց դեպի Տփղիս քաղաքը... [Ապա] սուլթանը յեկավ Սոմխիթ և ավերեց ամբողջ Սոմխիթը, [հրի և] սրի յենաթարկելով նրա բնակիչներին, այսպես վոր [այստեղ] ել տղամարդ չմնաց: Ապա նա անցավ Տփղիսի կողմը:...

... Ավերելով Տփղիսը՝ [խվարազմացիք] սկսեցին կրկին ավերել գերել և բնաջինչ անել Սոմխիթն ու Կամբեշիանն իորի յեկերքին, Թարթլին ու Թուեղքը (Թրեւեթն<sup>8</sup>), Զավախիքն (Զավախիթն) ու Արտահանը (Արտանը), [նաև] վոմանք Սամցիխն ու Տայքը (Տառն), և Կարնիփորի ու Անվոր մերձակա յերկրները:...

[Ռուսութանի վորդի Դավթի գահակալության պահին Վրաց] թագավորությունն ապահով եր խվարազմացիներից, քանի վոր Շահնշահ (Շանշե) մանդատութուխուցեան Անիումն եր, Ավագ (Ավաք) ամիրսպասալարը Բջնիում, նմանապես և Վահրամ (Վարամ) Գագեցին, հերացիք (հերք), կախք, սոմխիթցիք, վրացիք, թորեցիք, շավշակարջեցիք և տայեցիք իրենց ամբոցների մեջ՝ հասպանդ լինելով Ռուսութան թագուհուն (թագավորին)...

[Ապա Զալալադդին սուլթանն] յերկրորդ անգամ դիմեց դեպի Տփղիս: Լսելով այս՝ Ռուսութանը հրամայեց իր ամբողջ՝ հայնկույս և հայսկույս [գտնվող] զորքին, Շահնշահ (Շանշե) մանդատութուխուցեան և Ավագ ամիրսպասալարին, նաև գործակալ (մասիսութուխուցեան) Վահրամ (Վարամ) Գագեցուն, հերաց, կախերին, սոմխիթցվոց, Զավախիներին, տայեցիներին,

\* Vag. Թրիալեթ:

Ցունսա Դադյանին, ... ափխազներին, ջիքերին և ամբողջ թագավորությանը... ժողովել: ... իսկ սուլթանը մուտք եր գործել Սոմխիթ՝ Բողոքովիոր (Բոլոսիսի ձորը)..., ապա մտավ Տփղիս:...

... Ապա չորեք Նոյինսերը՝ Զարմաղանը, Զաղատան, Իսոսուրն ու Բիշոն... անցան Արաքսն (Խախմ) և յեկան Գանձա[կ] ...

... Լսելով այս՝ Զալալադդին սուլթանը շտապ տեղահան յեղավ իր գերդաստանով հանդերձ և գնաց Հունաստան (Բերձենստան). իսկ թաթարները հետամուտ յեղան և հասան Բասեն (Բասիան)...

... Խվարազմացիներին փախուստի մատնելով՝ թաթարները գնացին և ավերեցին Խլաթի և Ալաշկերտի (Վալաշկերտի) յերկըրները, և Խլաթի սուլթանը չկարողացավ ընդդիմադրել... ապա անցան Պարտավ (Բարդավ), Գանձա[կ] և Մուղան, և այստեղից սկսեցին ավերել Վրաստանը, Դարուբանդի ստորև Շիրվանի յերկիրը, Կապաղակը (Դարալը), Հերքը (Հերեթը), Կախքը (Կախեթը), Սոմխիթն և Արշակունյաց յերկիրը՝ Դվինն ու Անին...

Իսկ վերև հիշված Նոյինսերը (Զարմաղան, Զաղատան, Իսոսուր և Բիշոն) մտան Քարթի, Թոռեղք (Թրիխալեթ), Սոմխիթ, Զավախը (Զավախեթ), Սամցխե, Շավշը (Շավշեթ), Կղարջը (Կղարջեթ), Կողա (Կոլա), Արտահան (Արտան), Անի\*, և մորեխի պես տարածվեցին այստեղ՝ ավերելու և կոտորելու [յերկիրը] ... Շահնշահ (Շահնշե) մանդատուրթուխուցեն ապաստան գտավ Աճարական (Աճարա) յերկրում, Ավագ (Ավաք) ամիրպատարը մտավ Կայենի բերդն և Վահրամ (Վարամ) Գագեցին գնաց Թութայիս (Թութիս). նմանապես և հերք, կախք, սոմխիթցիք, վրացիք, մեսխերը, տայեցիք, թորեցիք-արտահանցի (արտանցի)-կողայեցիք՝ բոլորը մտան բերդերը, սարերն ու անտառները և կովկասցիների ու լեռնականների բոլոր ամբողյուները...

Տեմնելով Նոյինսերի չարագործությունները՝ Հովհան (Խվանե) աթաքակի վորդի՝ Ավագ ամիրպատարը դեսպաններ ուղարկեց Պարտավ (Բարդավ), ուր վերօնիշյալ իշխանները կանգ եյին առել, քանի վոր ձմեռը նրանք այլտեղ եյին անցկացնում, իսկ ամառը՝ Գեղարքունյաց (Գելաքունի) և Արարատյան լեռներում: Յեկ այդ ժամանակ եր Զարմաղանը\* գրավել Անին: Արանց մոտ ուղարկեց Ավագը դեսպան՝ հաշտություն ինսդրելու... Նրանք ուշախությամբ ընդունեցին Ավագի դեսպանին և հաստատ յերդու-

մով կամարեցին իմոդիրը... Հենց վոր Ավագի գեսպանները վերադարձան և հաղորդեցին սրա մասին, Ավագը..., գնաց Զարմաղանի\*, Զաղատայի, Բիչոյի և Խոսուրի մոտ, վորոնք պատվեցին և սիրեցին նրան՝ նշանակելով պահապաններ նրա քաղաքներում և յերկըներում:...

Յերբ յերկիրը խաղաղվեց և Շահնշահ (Շահնշե) մանդատուրթուխուցեն տեղեկացավ թաթարների և Ավագի միջև կնքված հաշտության և յերկիրն անմնա պահելու մասին..., ինքն՝ Շահնշահը (Շահնշեն) յեկ գնաց թաթարների տեսության, վորոնք նրան (Շահնշահին) շատ պատվեցին և վերադարձրին իրենց նվաճած Անին շրջակա յերկրով:... Տեղեկանալով սրա մասին՝ Վահրամ (Վարամ) Գագեցին՝ Զաքարիայի վորդին՝ յեկ կնքեց հաշտություն, և սրանով յերկիրը խաղաղվեց:

Իսկ Հերքը (Հերեթը), Կախքը (Կախեթը), Սոմխիթն ու Քարթին և վերևում [գտնվող] ամբողջ յերկիրը մինչ Կարմո-քաղաք գերության և ավերման եր յեսթարկված..., և ձմեռը [թաթարները] կանգ առան Պարտավում (Բարդավում), Կուրի յեղերքին, Իորի յեղերքին\*\* և վերևում՝ մինչ Գագ...

... Յերբ հայոկույս [գտնվող] յերկիրն (արևելյան վրաստանը) թաթարները գրավեցին, Խուսուղան թագուհին վորոշեց իր վորդի Դավթին ուղարկել թաթարների մոտ՝ յերկիրը չփասելու մասին պայման կապելու համար, և ուղարկեցին դեսպաններ թաթարների մոտ Շահնշահին (Շահնշեյին), Ավագին, Վահրամին (Վարամին) և [Հ]երքի ([Հ]երեթի) իշխան Շոթային, վորին մանիի աղանդին հարելու պատճառով Կուպը եյին կոչում:... [Յեկ] Բաշի-Նոյին իր հետմ տարավ Վրաստանի մեծն իշխանագործներին, [Կ] յերբ նրանք մոտեցան Սեբաստիո և Յերզնկայի (Եղինկի) յերկներին, [թաթարները նորից] սկսեցին ավերել...

... [Ապա] թաթարները... գնացին գեղի Խլաթ, իսկ Խլաթի սուլթանն ընդպառաջ գնաց նրանց... [Յեկ թաթարները] հեռացան իրենց ամառնային ընակավայրը՝ Գեղարքունյաց (Գելաքունի) և Արարատյան լեռները, և դեսպան ուղարկեցին Խուսուղան թագուհու (թագավորի) մոտ հաշտություն կնքելու համար...

... Յեկ ինքը թագուհին (թագավորը) յեկավ հայոկույս, ուղարկելով իր վորդի Դավթին յեկ, վորոնց ընդպառաջ գնացին Շահնշահը (Շահնշեն), Ավագը, վորին թաթարները մեծ պատիմակով

\* Բնագրում՝ Զորմաղոնի:

\*\* Բնագրում՝ Զորմաղոնը:

բավարարեցին,... Շոթա Կուպար<sup>\*</sup> Թորեցին,<sup>7</sup> Վահրամ (Վարամ) Քարթլիի իշխանը...

... Ավագը, վորին Ռուսուղան թագուհին (թագավորն) ամիրս սպասալարության փոխարեն աթարակ եր նշանակել ուղարկվեց Զաղատ-Նոյինի մոտ... Յեկ Խլաթի սուլթանն ել տարրինակ ճանապարհով գնաց... [Յեկ] Ավագն ու Խլաթի սուլթանն... առաջիններն եյին, վոր ուղարկվեցին թաթարների մոտ...

[Ռուսուղանի մահից հետո] Շահնշահին (Շանշեյին) հանձնեցին նրա և Ավագի կալվածքը, Վահրամ (Վարամ) Գագեցուն հանձնեցին ամբողջ Սոմխիթն... և Թորեցի Գամբեկելիին... Զավախը (Զավախեթը), Սամցին և վերին յերկիրը մինչ կարնուքաղաք...

[Յեկ Եգարսանի հպատակության ներքո եյին] մեծ և պատվական Շահնշահ (Շանշե) մանդատուրթուխուցեն և Վահրամ (Վարամ) Գագեցին և բոլոր այլ իշխանավորները:...

... Ասորիքում (Շամում) գտնվող թուրքերը՝ լսելով վրաց անտերության (անթագավորության) և վրաց զորքի Ալմութ<sup>\*\*</sup> գնալու մասին թաթարների մոտ... ժողովեցին բազմություն մարդկանց, մոտ վաթսուն հազար, վորոնց ղեկավարն (տերն ու տնորենն) եր հոչակավոր Ղարախանը, Վրաստանն ավերելու համար, և յեկան Ալաշկերտի (Վալաշկերտի) յերկիրը, վորն այն պահին Շահնշահն (Շանշեն) ուներ զրաված, և սկսեց[ին] ավերել Վրաստանն ու Աւլաշկերտն (Վալաշկերտն) և Արաքսի (Ռախսի) հայնկույս [գտնվող] յերկիրը մինչ Սուրմար (Սուրման), վորը նմանապես [նույն] Շահնշահ (Շանշե) մանդատուրթուխուցեն ուներ զրաված: Վերջինս՝ տեսնելով [այս յերկրների] ավերումը՝ հրամայեց իր և Ավագ աթարակի զորքին ժողովել և՝ յերեսուն հազար ընտիր հեծյաներով անցնելով Արաքսը (Ռախսը)<sup>1</sup> հասավ Ալաշկերտ (Վալաշկերտ), ուր կանգ եր առել Ղարախանը... Տեղի ունեցավ սոսկալի պատերազմ, ուր անթիվ բազմություն կոտորվեց [թուրքերից]. իսկ Շահնշահի (Շանշեյի) զորքը փրկվեց բարեխոսությամբ կենարար խաչին (ճշմարիտ փայտին)... Ղարախանն ու նրա զորքը պարտվեց, վորոնք փախուստի զիմեցին. իսկ [Շահնշահի զորքը] հետամուտ յեղակ նրանց մինչ Խլաթ... ապա հաղթող վերադարձավ Անի, վորը [Շահնշահի] տունն ու աթուանիստն եր:

Քանի վոր լուրը Վրաստանի անտերության (անթագավորության) մասին ամենուրեք տարածվել եր, բոլոր ազգերը գլուխ

եյին բարձրացրել վրացոց ավերելու նպատակով. ապա վոտքի յելան Հունաստանում (Բերձենստանում) գտնվող թուրքմեններն ու Յերզնկայի (Եղինկի) սուլթանն և ուրիշ քաղաքներում գտնվող ամիրանները. և ժողովեցավ անթիվ բազմություն [զորաց], վորը դիմեց Վրաստան: Լսելով այս՝ տայեցիք և շավշաղարձք և կողա-արտա[հա]ն-կարնիփորեցիք հուզվեցին և մարդ ուղարկեցին Սամցին՝ Ղարդղարեց ցիխիսչվարեցի Զաղելու մոտ, վորպեսզի ոգնի նրանց... իսկ թուրքմեններն յեկել եյին Բանա, վորն և պատել եյին, քանի վոր Ուղթիքն (Ոլթիսն) և Բաղաթուրն (Բալթա-ղուրն)\* արդեն գրաված ունեյին, և ավերում եյին Տայքը (Տա-ռն)... [Ապա տեղի ունեցավ պատերազմ], ուր հույներն (բերձեն-ներն) ու թուրքմենները պարտվեցին, վորոնք և սկսեցին փախչել... [Ապա վրաց զորքը] պատերազմ ունեցավ Ուղթիքում (Ոլթիսում), վորն և գրավեց, նաև՝ Բաղաթուրի<sup>\*\*</sup> բերդը, և հույժ հաղթող... խաղաղ տուն վերադարձավ...

... Այս խառնակության պահին Վրաստանի հայնկույս և հայսկույս գտնվող բոլոր իշխանավորները ժողովեցան Կոխտայի ծայրին<sup>3</sup>. [Շահնշահը (Շանշեյի)], Եգարսանը, Ցունե Դադյանը, Վահրամ (Վարամ) Գագեցին, Ղարդղարեն, Շոթա Կուպրին..., Թորեցի Գամբեկելը, Սարգիս Թմոգվեցին...՝ [սրանք բոլորը] վորոշեցին պատերազմ սկսել [թաթարների դեմ]... իսկ թաթարները՝ լսելով վրաց [իշխանավորների] ի մի ժողովելու մասին... յեկան Կոխտայի ծայրը... և կալանավորեցին ու քշեցին նրանց Անիի յերկիրը՝ Շիրակավան հոչված տեղը... [Ապա] Ցունե Դադյանը [վորը գնացել եր զորք ժողովելու], իր զորքով հանդերձ յեկավ Իկինիսչվարի կոչված տեղը, վորը Սամցինի և Ղաղոյի միջևն է գտնվում: Լսելով Վրաստանի բոլոր իշխանավորների Անի քշելը... սա յերկու մարդու [ուղեկցությամբ] գնաց Անի... Անցավ Սամցին, Զավախը (Զավախեթն) և հասավ Անի:

Այս ժամանակ վերոհիշյալ Նոյինները (Բիչու և Սնգուրգը) մտել եյին քաղաք, իսկ [վրաց] իշխանավորները, վորոնք կալանավորված եյին և կապանքներով կապած, մերկացյալ նստած եյին հրապարակի վրա...

... Յեկ Ուղուղահնի որոք... չորս Նոյինները կառավարում եյին ամբողջ նրա տերությունը. նախ ... Խորասանն, Իրազն, Ատրպա-

\* Varg. Բուղաթաղ'ուրի:

\*\* Varg. Բուղաթաղ'ուրի:

տականը (Աղաբերագագանը), Մովականը, Պարտավը (Բարդավը), Շիրվանը (Շարվանը), Վրաստանն, ամբողջ Խլաթն և մեծն Հռւնաստանը (Բերձենստանը) մինչ Ասիա...

## [ԴԱՎԻԹ՝ ԼԱՇԱ-ԳԵՐՈԳՈՒ ՎՈՐԴՈՒ, ՅԵՎ ԴԱՎԻԹ՝ ՌՈՒՍՈՒԴԱՆԻ ՎՈՐԴՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... Յերբ Ռուսուդանի վորդի Դավիթն Ալտաղումն եր Ռւլոյի մոտ, նրան ձերբակալեցին և ուղարկեցին ձմրան [բնակա]տեղն՝ Պարտավ (Բարդավ). հասնելով Նախիջևան (Նախճան)՝ Ռուսուդանի վորդին յերկու մարդով ուղեղորվեց դեպի Ափխազք (Ափխազեթ)...

... Յեկ յերբ Նարին-Դավիթը մոտեցավ Ավագ աթաբակի յերկրին, ... նրան նկատեց վորսի գնացած Սմբատ (Սումբատ) Որբելը: [Գեորգ] թագավորի կողմից Որբելների դեմ սկսած հալածանքի (բնաջնջման) պատճառով Նախիջևան (Նախճան) եր փախել կիպարիտ կոչվածը: Վերջինս յեկավ Ելիկումի յերկիրը: Ելիկումը՝ տեմնելով կիպարիտ Որբելուն՝ իրքն փեսա ընդունեց և իր դստեր հետ ամուսնացրեց, վորդից ծնվեցին յերկու տղաներ, վորոնց կոչեցին՝ մեկին Ելիկում և մյուսին՝ Սմբատ (Սումբատ). և [այս] Սմբատին Ելիկումն իրքն վորդի ընդունեց. և այս Սմբատի թոռն Սմբատի հետ հանդիպեց Դավիթ [թագավոր]ը, վորն և տարավ նրան իր յերկիրը: Յեկ Դավիթն աղաչում եր Սմբատին Հայունագործել իր մասին...

... [Դավիթ թագավորը] շրջեց Հովհան (հվանե) աթաբակի վորդու՝ Ավագ աթաբակի յերկիրը. և այդ ժամանակ վախճանվել եր Ավագը, վորը չեր թողել տղա, այլ միմիայն աղջիկ՝ Խվաշագանուով: Յեկ թագավորը գնաց Բջնի (Բիջնիս)<sup>8</sup> վողբալու, և տեսսավ Ավագի կնոջը, վորը Ռաճի իշխանների՝ Կախաբերների դուստըն եր՝ Գվանցա անունով, հույժ գեղեցիկ: Սիրահարվելով վերջինիս վրա՝ Դավիթը] մի քանի ժամանակից հետո իր հետ տարավ նրան իրքն կին և թագուհի, և բերեց իր յերկիրը: Իսկ Ավագի դստեր թողեց հայրենյաց հողում՝ ինսդրելով Սաղուն Մանկաբերեցուն, վորն իմաստուն և խելոք մարդ եր, բարեմիտ, հաշող, բարձրահասակ և գեղեցկադեմ, ուժեղ և մքող, [հովանավորել նրան]...

... Յեկ Գվանցա թագուհին ու նրանից [ծնված] վորդի Դեմեւ-

տրին (Դիմիտրին) [Դավիթը] թողեց Ավագի տանը՝ Բջնիում (Բիջնիսում)...

... Ուլուղ՝ աենը... գնաց ձմրան բնակատեղը, վորն այժմ Ղարաբաղը<sup>9</sup> և Մուղան ե կոչվում...

... Արդուն-Խանը<sup>10</sup> քսան հազար հեծելազորքով յեկավ և պատեց Գանձավ[լ]ն ու Սոմիկիթն, ապա մոտեցավ Տփղիսին...

... [Յերբ Արդունը] մտավ Տփղիս, նրան ընդառաջ գնացին Վրաստանի բոլոր իշխանավորներն ու իշխաններն և վոմն Բարին\*<sup>11</sup>, վորը հայ եր ծագումով...

... [Յեկ] բերին Սագունին իրըև թարգմանիչ, վորին Ուլոն շատ եր սիրում և պատվում, քանի վոր նա խելոք մարդ եր և շատ եր սիրում և պատվում... [Յեկ այս] Սագուն Մանկաբերեցին քաղցր ճաքացրալեցու...

... [Յեկ Ուլուղ՝ աենը] Սարգիս Զաղելուն շնորհեց Կալմուղաւղաքն ու շրջակա յերկիրն, իրաղով հանդերձ... Յեկ գնաց [Դավիթ թագավորն] Ելիկուն-Նորինի մոտ՝ ասելով. «Յեթե զակնը Սարգսին կտա Կարնուղաղաքը, թող թագավորությունն ել նրան տա»:... Յեկ չտվին [Սարգսին] այլև Կարնուղաղաքը»...

... Այս պահին Ուլուղ՝ աենին դավաճանեց Շահնշահի (Շահնշեյի) վորդի Զաքարիա ամիսպասաւլարը...

... Յեկ սպանեցին Գվանցա թագուհուն, վորը Ավագի նախկին կինն եր, ինչպես ասում են, նրա դստեր՝ Խվաշագի ձեռքով, վորը Սելլիփարդավիի Խոջա-Շահնշաղինի կինն եր, վերջինիս դրդմամբ...

... Ապա թաթարներն անցան Զավախիքն (Զավախիեթն) ու թուեղին (Թրիալեթն) և Ռուսթավում անցան կուրը, և շատ տեղերին մոտեցան թաթարներն ու Սոմիկիթի գորքերը...

... Գարնանը [Ուլուղ՝ աենը] յեկավ Սաքո և նրա վորդի [Թանը] քեղարքունիք (Գելաքուն), քանի վոր Գեղարքունիք (Գելաքունին) նրա ամառվա բնակավայրն եր... [Ապա Թանը քուշն] յեկավ Տփղիս և Կարգավորեց Վրաց (Քարթլիի) և Հայոց (Սոմիկիթի) գործերը...

... Արաղա-զաենը... դորք կանգնացրեց [այստեղ], ուր կուրը և Արաքսը (Ռախիսը) միանում են, և այստեղից մինչ Մցիեթ...

... Այս պահին Սագուն Մանկաբերեցին սկսեց ուժեղանալու սահման նախ Ուլուղ՝ զաենն յեղավ հովանավոր... ապա Արաղա-զաենն ել պատվից, ինչպես և Սահմանը բարդիվանը, քանի վոր նրա կնոյն՝

\* Var. Շաղին:

Ավագի դուստր Խվաշագի (Խվաշաքի)՝ շնորհիվ սենեկապանի (հետիբի) պաշտոն ստացավ...

... Արաղեղ՝ ամենը թաթարներին] տրամադրեց՝ իբրև ամառվաքնակատեղ՝ [ամբողջ լեռնաստանը] մինչ Արարատյան լեռները, իսկ իբրև ձմրան բնակատեղ՝ Արաքսի (Ռախսի) յեղերքն ու Նախիշեանը (Նախճանը):...

... [Ապա Թեգութարը] շարժվեց և ուղղվեց դեպի Ղաղոյի, Կարցիալի և Կարսի լեռները, վորոնք Շավշեթի (Շավշեթի) և Աճարայի միջև են գտնվում...

Այս պահին Սաղուն Մանկաբերդցին ուժեղացավ առավել քան ժամանակակից բոլոր այլ իշխանավորները, քանի վոր նրան Արաղեղ՝ ամենը սիրաշահեց, և նա խնամակալ դարձավ Վրաստանի գործերին: ... Յեկ Խվաշագն սենեկապետություն (հեջիբություն) տվեց նրան:...

[Յերբ Դեմետրին] նստացրին հայրենյաց գահի վրա, աներկա ելին բոլոր իշխանավորները Վրաստանի, Հերքի (Հերեթի), Կախքի (Կախեթի), Սոմիխթի, Քարթլիի, Զավախքի (Զավախեթի) և Տայքի (Տառյի)...

### [ԴԵՄԵՏՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... [Յեկ] հույժ մեծարեցավ Սաղունը դամենի կողմից, և ի ինամակալություն ստացավ Թելավի ու Բելաքանն և բարում յերկըրներ, և Սաղունը բարվոք վարում եր Վրաստանի գործերը...

... Յեկ Ավագ աթաբակի մեծ Ս[ահ]իբ-դիվանը սրա (Դեմետրի) մոտ եր, և նրա դուստր Խվաշագին (Խվաշաքին) բերել եր ի կնություն: Այսպես մեծարեցավ Ուլուղ՝ ամենի կողմից, և Սաղունն ել նրանից եր մեծարյալ. և դամենի ամբողջ պետությունը սրա ձեռովք եր և սրա հրամաններին եր հնազանդ: Յեկ սա գնեց բազում յերկրներ, և արքաներն ել նրան նվիրեցին Կարսը. և նա նստեց Կարսում ու նրա հարևան յերկիրն ել նենգաբար խլեց Ախալցիինեցվոց ձեռից. [Ա] Ախալցիինեցվո դուստրն ել ի կնություն բերեց... և վրաց, և սոմիխթցի, և հերկախեթցի իշխանապետն թագավորի կոյ եյին...

Այս պահին ուժեղացավ Սամցխեի սպասալարն և գանձարանապետ Սարգիս Զաղելին ու նրա վորդի Բեքան, վորոնք տիրում եյին Սամցխեին:... [Յեկ] Բեքան գրավեց յերկիրը Տայխակարից սկսած մինչ Կարսուքաղաքը, Սամցխեն, Աճարան, Շավշեթը

(Շավշեթը), Կուարջըն (Կուարջեթն) և Տայքի (Տառյի) մեծագույն մասը, Վաշլովանը, Նիգալի-ձորն, Արտամուջն, յերկոտասան անապատները, Կողան (Կոլան), Կարնիփորան և յերկու Արտահանները (Արտանը), նաև Զավախքի (Զավախեթի) բազում գյուղերը...

... Արդումն ուղևորվեց Սամցխե՝ Սարգիս Զա'ղելու տեսության, անցնելով Սոմիխթը, Տփղիսն ու Քարթլին... Վերադառնալով Սամցխեյից՝ [Արդումն] յեկավ Սոմիխթ...

### [ԴԱՎԹԻ ՅԵՎ ԳԵՐՐԴԻ՝ ԴԵՄԵՏՐԻ ՎՈՐԴՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... Յեկ գնաց Դավիթ [Ժագավորը] Թուքալ-դամենի մոտ, վորը կանգ եր առել Արարատյան լեռներում..., քանի վոր Արարատյան լեռներն եր յեկած:

... Ապա Թուքալը՝ լսելով Բայրուղ՝ դամենի մահն՝ անցավ Սամցխե Բեքայի մոտ, վորը տիրում եր Տայխակարից մինչ Կարսուքաղաք...

[Նավողի ուղարկած մարդը՝ կամենալով ավերել Վրաստանը՝ նախ և առաջ յեկավ Նախիշեան (Նախճան)...

... Դամանի-դամենին անթիվ զորքով ուղարկեց Խուտլուշա [հազարի ուղագետին, [վորն] յեկավ Սոմիխթ... [Ժաթարներն] ավերեցին Սոմիխթը, Քարթլին, Թիանեթը, Երծոն...

[Ապա Դամանին] ուղարկեց Ղուրումշին և վորն Աղինջին... և Շահնշահ (Շանշե) Մխարգրձելին...

... [Յեկ] ուժեղացավ Բեքան, վորը գրավել եր Տայխակարից սկսած մինչ Սպեր և մինչ ծովը, Սամցխեն, Աճարան, Շավշեթը (Շավշեթը), Կուարջը (Կուարջեթը), Նիգալի-ձորը... [իսկ Կողան Սիքայել թագավորինն եր] Տայքի (Տառյի) մեծ մասն, Արտահաննը (Արտանը), Կողան (Կոլան), Կարնիփորան (Կարնիփոլան), Կարսը (Կարի)...

[Խուտլուշանի Տփղիս գալուն պես] այնտեղ դիմեցին բոլոր թաթարներն, և վրացիք, և Սամցխեյի տեր Բեքայի վորդի Սարգական գիս սպասալարը, թորեցիք, թմոգվեցիք և սոմիխթցիք, քանի վոր Շահնշահ (Շանշեն) արդեն այնտեղ եր:

## [ՎԱԽՏԱՆԳԻ ԴԵՄԵՏՐԻ ՎՈՐԴՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... Յեվ հաստատում յեղավ Վախտանգի թագավորությունը\*,  
քանի վոր Ղազանը նրան հանձնեց [Վրաց] թագավորությունն, և  
նա գրավեց Տփղիսն ու ամբողջ Սոմխիթը, Դմանիսն և Սամշվիլ-  
դեն...

... [Թուրքերն Աղատ-Մովսեսի ղեկավարությամբ կամեցան] ավերել բովանդակ Վրաստանը. և նա (Աղատ-Մովսեսը) մտավ Բասեն (Բասիան) և Տայք (Տառ), և սկսեց այն նենգորեն ավերել... իսկ Բեքան՝ լսելով թուրքերի գալու մասին՝ կոչեց իր բոլոր հպատակներին սկսած Տասիս-կարից մինչ Բասեն (Բասիան)՝ մեսներին, շավշակին, կղարջերին, կողա-արտահան-կարնիփորեցվոց և տայեցոց մեծամասնությանը..., նաև թմովկեցվոց և թուրեցվոց..., [վորոնք] և գնացին թուրքերի ղեմ:... [Իսկ] թուրքերն յեկել ելին Բեքայի յերկիրը՝ Սամիխե, Քարթլի և Սոմմիթ...

... Լաելով թուրքերի փախուստը Վաշլովանից՝ Բեքան հույժ ուրախացակ և շտապ-շտապ դիմեց գեպի Սպեր և Բաբերդ, ուր կանգ ելին առել թուրքերով...

... Յեկ թուրքերի չնշին մասն ապաստան եր գտել Սպեր քառարում ու բերդում և վորմանք Նորշաղաքարում\*\*\*...,

... [Թաթարական արշավանքներին մասնակցող վախտանգի զորքի հետ] մասնակցում ելին սոմիկիթցիք, վորքան ել նրանց մեջ կային ձիամոռնեո...

... Յեկ վերադարձին Վախտանգը մտավ Նախիջևան (Նախ-  
ճևան\*\*\*)...

\* Var. + *umweltbukth* *deklareret*:

\*\*\* Var. + Նույն Նախկինանում (Նախնականում) նա (Վախտանգը) հիշանդոցավ փորացափով և մեռավ՝ արքայական թագով պսակյալ և [նրա ամյունը] բերին և թաղեցին Դմանիսում: Յեկ թողեց նա յերկու վորդի՝ Դմեները (Դմեների) և Գեորգ (Գեորգի): Դմեները (Դմեներին) իշխում եր Դմանիսում, իսկ Գեորգը (Գեորգին) Սամշվիլիեռում...

... [Ապա] անհամար զորքով յեկավ Զոփան, ... [վորը] նախ մտավ Կողա (Կոլա) և Արտահան (Արտան), ... ապա անցավ և իջավ Սոմիկիթ...

## [ԳԵՂՐԳ ՊԱՅԾԱՐԴ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... ՈՂջաթ սուլթանը [հրամայեց] ... ամբողջ Վրաստանը միավորել Գեորգու (Գիորգիի) թագավորության ներքո՝ նշանակելով նրա մոտ Շահնշահ (Շահնշե) Միարգրձելուն և Ավագի դուստր Խվաշագից ծնված Զաքարիային\*...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> «Աթարակության» մասին տես. Խ. Զավալիկելիի, Վ. Րաց իրավունքի պատմությունը (Վրացերեն), գ. II, մ. I. Տիգրիս 1928, էջ 179—182:

2 Վլաց արքունիքի և կեղեքից «բարձր դասի» անվայել բարքի մասին,  
ինչպես հայտնի յէ, կցկուուր տեղեկություններ կան նաև հայ պատմիչ-վար-  
դապետների մոտ: Որինակ, Մալաթիա արքան (Պատմութիւն վասն ազգին  
նետողաց, ի լոյս լնծայեց Ք. Պատկանան], ՍՊԲ. 1870, եջ 20) գրում ե.  
«Իսկ բարեսէր և գեղեցիկ թագաւորն Վլաց Դաւիթ հանապազ իւր ամենայն  
թագաւորութեամբն կայր ի մեծ ուրախութեան և ի գինարբու յիւր թագաւո-  
րանիստ քաղաքն Տիգիս. և յաւուր միում էր մեծ ճաշ և ուրախութիւն առաջի  
թագաւորին. և սովորութիւն է վլրաց հանապազ ամբարտաւանել և մեծամեծ  
բանս խօսեր: Նույն իմաստով խոսում ե մի այլ գեպքի առնչությամբ և Թուլ-  
մա Սեծովիեցին (Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, ի լոյս  
ընծաւեաց Կարասիս Վ. Նախազարեան, Պարիս 1860, եջ 122—123):

<sup>3</sup> *L'Am. Ur. Frnubjh* (Histoire de la Géorgie, I, 2, p. 92, n. 2) 1220 f.

4 Սագիմ թերևս այժմյան Ձեզամ գետն եւ Համենայն գեպս, Լեռնիշառ Ռուխեցը (XII դ.) խոռքերը, թե Վրաստանի սահմանն արևելքից Բերդով գետն եր, պիտի մեկնել այն իմաստով, զոր գերջինս նույն Սագիմ կամ Ձեզամն եւ և վոչ թե Դեբեդն (Դեբեդա-չայն), ինչպես մինչ այժմ կարծում եւին, հմայ. Լ. ՄԵԼիքսեբ-Ռեթ, «Վարդապետաք Հայոց հիւսիսային կողմանց» etc.

\* Var. + ... Այս Պայծառ Գեորգիկը (Գիորգին) տիրեց Վրաստանին, Սոմբադիքին, Հերուակին և Բարթլիին, Տիկնիկին, Տայրոց, Շավշ-Կղարչներին՝ մինչ Առեն և Տպան...

... Նոյեմբերից մեկը տիրեց Առարատականին (Աղբբագանին), և սկսեց գրավել Սպահանիթու, Ռանն ու Մովիականը...

... Սակայն սպազմայիւմ [Գերոք թագավորն] առավել ևս հնագանդեցրեց Ռանը, Սովորած ու Սոմխիթը...

վրացերեն, Տիգ. 1928, էջ 7—8, ծան. 2: Նակ Ս. Կալխանալելի վրաստականն իվ. Զալյախիշվիլու խմբագրությամբ հրատարակած Վրաստանի պատմական քարտեզի մասին, վրացերեն, — «Bulletin Historique» 1924, գ. I, էջ 294—295.

5 Հմմ. ե. դլիսի 6 ծանոթությունը:

6 «Թրելեթ» ձեզ՝ սովորական «Թրիլալեթ»-ի փոխարեն՝ ինչպես Մ. Բրուսեն յևս (op. cit., p. 507, n. 1) մատնանշեց, հիշեցնում է հայկական «Թռելեթ»-ը:

7 ჩსუფხნ այս՝ «Կուպար», resp. «Կուպրի», նույնպես և վերկռում հիշված «Կուպր» մականունը, համաձայն պրոֆ. Յուսիֆի Աբուլամեջի հետազոտության (տես նրա հրատարակած «Վագրենսավորը»). հատկապես նորագույն հոդվածը՝ «Ինչպես պետք ե հասկնանանք Շոթա Կուպրի», վրացերեն, —«Կոմունիստ» որաթերթ, 1935 թ. 12. IV № 87) նույն իրանական-արաբական «Քուփրի»-ն ե, վոր նշանակում է անհալվա, անսարչած, անորեն, քանի վոր Շոթա Ռուսթավելու յերկում պարզապես արաբական-մահմեդական աշխարհն և ներկայացրած: Հմմ. նաև Պ. Խեցրողիկա, Rusthveliana, վրացերեն, I, Տփղիս 1926, եջ 199—215, ուր Շոթան մանիքեյյացի յե հոչչակած, ապա՝ Կ. Կելիխիլե, Վրաց գրականության պատմությունը, վրացերեն, II, Տփղիս 1924, եջ 98—99 և այլուր: Ըստ սմին հետաքրքիր և մատնանշեն, վոր Պ. Խեցրողիկայի (Rusthveliana, եջ 205—242, մանավանդ 213—215) կարծիքով, Շոթա Ռուսթավեցին (Ռուսթավելին) ծագումով վրաց Բագրատունյաց տոհմիցն պիտի լիներ: «Շոթա» անվան առնչության մասին «Աշո»-ի հետ տես. А. Хаханов, Очерки по истории грузинской словесности, в. II, Москва 1897, стр. 244. Н. Марр, Грузинская поэма „Витязь в барсовой шкуре“ Шоты из Рустава и новая культурно-историческая проблема, — „Изв. Акад. Наук“ 1917 г., стр. 446. Հմմ. I. Մելիքեր-Բեկ, Հայերը վրաց հին գրականության մեջ, — «Գեղարվեստ» № 7, Տփղիս 1921, եջ 35—37:

8 Կիրակոս Գանձակեցին (Ղուկասեան Մատենադարանի հրատ. III, Տպիլս 1910, էջ 305), խոսելով «վասն կոտորածին՝ զոր արար զօրն Թաթշը յաշխարհին Վրաց», 1249 թվականի ներքո հաղորդում է հետեւյալը. «Ի ՈՂՀ Ծուականին Հայոց ... մեռաւ իշխանաց իշխանն Աւագ. և թաղեցաւ ի Պղնձահանքն ի գերեզմանի հօր իւրոյ հւանէի»: Վարդանը (Վենետիկ 1862, էջ 148) դնում է այս գեղաքը 1250 թվի ներքո, յերբ գրում ե. «Ի վեցհարիւր իննսուն և ինն թուին մեռաւ Աւագն՝ որդին հւանէի, և թաղեցաւ ի Պղնձահանքն լոնտ հօր իւրում, այր անպահն և պատերազմանէր և աղօթական»: Հստ իս, պետք ե լնդուներ զոր Բջնինք Պղնձահանքումն ե վոչ միայն Ավագի, այլև Հովհաննի (Խվանէի) գերեզմանը Յեվ, անշուշտ, այր իմաստով պետք ե համականալ նույն Կիրակոսի խոսքերը Հովհաննի (Խվանէի) մասին (էջ 210): «Վախճանեցաւ... իշխանէ, եղայլ Զաքարէի, և թաղեցաւ ի Պղնձահանքն ի դուռն եկեղեցոյն՝ զոր շինեաց ինքնն, առեալ ի Հայոց՝ զՎրացի վասն արար. և մինչ մեռանէր նա, յանձնեաց զորդի իւր և զտուն յիշխան ոմն իւր սնուցած՝ Գրիգոր անուն, զոր Տղայն կոչէին: Սա ինդրեաց յԱւագէն, յորդւոյն հւանէի, զվանքն Գետիկ, իւր տեղի գերեզմանի. և վասն յոյժ սիրելոյ զնա՝ ետ նմա. զնեաց գիւղ մի ի նմանէ, Վաշխէ անուն, մերձ յԱղատե, ետ զայն ի վանքն, և այլ բազում արդիւնս, գրեանս և խաչ և անսասունս»: Ապա Կիրակոսը խոսում է Հաղարծնի մասին: Մի այլ տեղ՝ խոսելով «Վասն աւերածոյ Հայոց աշխարհիս և Վրաց [ի

[թաթթարենք] ք, նույն կիրակապ. (Եջ 224) գրում ե, «Յառաջ զբան զսակաւ ժամանակս մկնեալ էր ի փանէ, տարան թաղեցին զնս ի Պղնձանանքն՝ զոր իւր շինեալ էր վասս (վասն, sic) Վրաց, առեալ ի Հայոց»:

Հնարյած այս հանգամանքին՝ վոր Կիրակոս ու Վարդանը վորոշակի պատմում են, վոր Ավագը թաղվել է նույնաւեղ, ուր և վերջինիս հայր Հովհանն (Իվանեն), կապերը յերկուսի և գերեզմանն Ազատել շրջանի և մասսամբ Գետափկի ու Հաղպարծնի մոտերքում գտնվող Պղնձահանքի հետ, վորը նույն թուրքերին «Միսխանաց» է (այսեղից ե, ի միջի այլոց, «Միսխանաց» կոչված լեռնաշղթայի անունը), հայ և ոտարազգի բանասերներն այդ Պղնձահանքը վորոնում են Լոռի-Տաշլիրում, իսկ վորանք նույնիսկ նույնացնում են այժմյան Ախտավայրի հետ. Այսպես, որնակի Վենետիկում 1862 թվին հրատարակված «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսավանեարթ» համապատասխան ծանոթության մէջ (Եջ 148) կարդում ենք. «Պղնձահանքը են ի Լալլար լերին Սօմիկթու, ըսդ մէջ Տաշրաց և Ծորպիրայ, ուր եկեղեցի և վանս կանքնեալ էր յաւորս Խշանութեան Զաքարեայ և հւանէիք: Ա. Յեղիշյանը 1872 թվին (Ա. Ерицов, Монастырь Ахтала,—«Кавказская Старина» № 1, стр. 21)<sup>1</sup> մեկնելով հայ պատմիչների տվյալները Պղնձահանքի մասին՝ նշում եր, վոր «ныне он известен под именем Ахтала». Դ. Բագրամին 1875 թվին (Д. Бакрадзе, Кавказ в древних памятниках христианства,—«Записки О-ва Любителей Кавказской Археологии», I, стр. 34), մի կողմից, համաձայնում է Ա. Յեղիշյանի հետ, վոր «очень может быть, что Ахтала есть армянский Пгнձаханк», մյուս կողմից, անհրաժեշտ է գտնում անել և այսպիսի մի նկատողություն. «При всем том, пока Ахтальский храм и окружающие его церкви не будут обстоятельно исследованы в археологическом отношении, мы не можем считать себя вправе высказать по этому вопросу решительное слово»: Ապա 1901 թվին Ե. Թապաշվիլին (Е. Такайшвили, Грузинские надписи Ахтала,—«Сборник материалов для опис. м. и п. Кавказа», в. XXIX, отд. I, стр. 30) գրում եր. «Местность Ахтала, где всегда добывалась медная руда, могла называться Пгнձаханком»: Քսայերկույթին, այս տեսակեալ ազգեցությամբ ե, վոր Յե. Լալլարին 1901 թվին (Բորչարուի գաւառ, —«Ազգագրական Հանդէս», VII—VIII, Եջ 429) գրում ե. «Ախտավայր պղնձահանքում հին ժամանակից, Վ դարից (sic. լ. Մ.-Բ.) կանգնած է եղել եկեղեցի, որի մօս հետզհետէ շինուել են միւս եկեղեցիները, և ի վերջոյ և Աստուածածին մայր եկեղեցին, հաւանականորէն իւլանէի ժամանակ և սրա ջանքով (sic. լ. Մ.-Բ.),» ապա և իւնի (Սահմանավէճներ, Տիգլիս 1919, Եջ 65). «Իւլանէն... թաղումը է Ախտավայրի վանքում, որ ինքն էր շինել և որ այսպիսով ներկայացնում էր միակ (sic. լ. Մ.-Բ.)\* հայ-թաղկեղունիկ եկեղեցին Լոռու սահմաններում»:

Համեմատաբար ավելի զգուշ վերաբերունք են ցույց տալիս դեպի Պղընձահանքի ուր գտնվելու հարցը Մ. Զալյանը, Հ. Շահնշարուելյանը, Դ. Ալիքանն ու Հ. Տաշյանը, Մ. Վ. Զալյանը (Պատմոթիւն Հայոց, III, 1786, եջ 179, հմմ. 204, 225) նշում ե. «Պղնձահանք [է] աւան և վանք ի Տաշիրս» Հ. յապ. Շահ-

\* Լոռի-Տաշիրի քաղկեդոնիկ մենաստաների մասին տես. Ա. Մելիքսեպ-Բեկ, Վարդապետք Հայոց հիւսիսային Կողմանց, էջ 57—59:

խարսխանք (Ստորագրութիւն Կաթոլիկէ էջմիածնի Ա. 1842, եջ 200—201) գրում ե. «Հեղին է եկեղեցեացն Կեչարուաց ընդ արևմտեան հիւսիս աւելի քան զմի ժամ հանդէպ Թայշարուս գեղջ ի հարաւակողմն գետակին ի հիւսիսին լանջի անդ անտառախիտ առավարին ի տափարակ դիրս է եկեղեցի բարձրակամար և անսիւն օրոցածե կառուցեալ՝ միջակ մեծութեամբ. ուր հետախոյզ եղեալ մեր չտաք զարժանաւոր գրուած ինչ հայացի, այլ ի բարձրութեան անդ եկեղեցոյն արտաքուստ յատորն քան զքուէն տանեաց տեսանէը միակարգ զքուած շրջապատեալ զեկեղեցան վրացի տափիւք. ունէր տաճարն շուրջ զիւրք սկնեկաց թաղեալ ի մացառուսու և ի թուիս, ուստի և եղեալ է յառաջագոյն մենաստան՝ թերես յիշանութեան վրաց ի ժամանակս Զաքարիա մեծանուն սպասարի հայազգուոր. Սստի ի վեր անդը ի ձորամիջի՝ ուր փոքր ինչ հեռի յարեմուսու, է Պղնձանահաննեն՝ որ այժմ կայ անգործ, և առ նովաւ աւերակը շնուռածոց՝ թերես գործաւորաց նորին: Ի ձորամիջի աստ ընթանայ ջուր փոքր և մինչեւ ցննամալ գիւղ Վարաժնունեաց աճի բաւականաչափ և է առաջին ճիւղ սկզբնաւորող զշրազգան գետո: Գրեթե նույնը կրկնում է և Ղ. Ալեքանը (Ալեքան, 1890, եջ 258—259). «Որպէս յարեւմտակողմն Բշնոյ լերին յայտնեցան կապարահանք, նոյնակս և ի հիւսիսային արեւելակողման ճանաչին Պղնձանահաննեն անգործք, և աւերակ բնակութեանց առ նոքօք՝ թերեւս գործաւորաց նոցին, ի ձորամիջի. լնդ որ վտակ մի խաղացեալ յարեւելս կոյս՝ վարարէ զշրազգան գետ, հանդեպ մենաստալ գեղջ Վարաժնունեաց, և համարի մի յաղերաց նորին: Սակաւուր ի ստորեւ ի Հր. Ել. Պղնձանահաննեցն և ի հարաւոյ գետակին՝ յառապար լանջակողման լերին՝ կայ հին և լքեալ մենաստան, օրոցածեւ անսիւն բարձրակամար եկեղեցեաւ, չափաւոր մեծութեամբ, զորոյ ստորոտ քուոց տանեացն շուրջ առեալ պատէ մեծատառ արձանագիր վրացի. իսկ ի ստորեւ զեկեղեցեաւն ածեալ կայ պարիսպ քառակուսի, և սկնեակը բնակութեան, այլ ծածկեալ վայրենամոլ թփովք և մացառօք: Նման իմն է տեղին հոչակաւոր Պղնձանահաննեցն Տաշրաց, մերականութեան և գերեզմանի հւանէի Աթաքէկին: Խոսելով վրաց վանքի մասին, որուն անունն էր Պղնձանահանք, Հ. Վ. Տաշյանը (Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, հետազօտութիւնք և բնագիրք, մ. I [Ազգ. Մատ. ԺԶ], Վիեննա 1895, եջ 30): Տեսվելով Ալեքանի վրա՝ նշում ե. «Այս անուամբ տեղ մը եւ նաեւ աւերակ հին մենաստան կայ նաեւ Բշնոյ հիւսիս-արեւելեան կողմք»: Վերջապես, Տաշիր-Ծորոփորումն ե ցույց տալիս Պղնձանահանքը Հ. Հübschmann-ը (Die altarmenischen Ortsnamen, Strasbourg 1904, ս. v.):

Պղնձանահանքի մասին տարբեր կարծիքների գոյությունը բացարկում և նրանով, զոր, իրոք, նուում յերկու կամ, գուցե, և ավելի Պղնձանահանքեր ելին հայտնի, մեկը Բշնի, իսկ մյուսը Զորագետի (Բորչալուր), վորոնցից առաջինը կոչվում եր նաև «Միսիսանա» և «Միսիսանե», իսկ յերկրորդն ինչպես «Միսիսանա», նույնպես և «Միշան» (Հմմ. Պ. Եյտկով, Материалы для новоой истории Кавказа, I, Спб. 1869, стр. 337): Իսկ վրաց աշխարհագիր Վալյուտը XVIII դարում վերջինիս մասին գրում ե (Description géographique de la Géorgie, թ. M. Brosset, թ. 148). «Այսեղ, Միսիսանայում արդյունահանվում է պղնձի շատ հանգեր, նաև արդյունահանվում է նողից կարմիր և շատ ամուր, փայլուն և մաքուր քար»:

Հարցիս բազմակողմանի լուսաբանության համար, մեր կարծիքով, պիտի

ոգտագործել վոչ միայն հայ պատմիչների ցուցմունքները Պղնձանահանքի մասին, այլև ձեռագրաց հիշատակարանների և արձանագրությունների ցուցմունքներն այս առթիվ: Սենիանոս Որբելյանը (Տփղիս 1911, եջ 355—357) հիշատակում է Պղնձանահանքն, ուղիղ ասած՝ Պղնձանահանքի վանահորն և Բշնի յեպիսկոպոսին այն անձանց շարքում, զորոնք Հովհանն (Իվանե) աթաբակի կողմից հրավերգել ելին Դվին քննելու այն վեճը, զոր ծագել եր «վասն սուրբ Խաչին»\*:

### Հ Ս Տ. Ո Ր Բ Ե Լ Յ Ա Ն Ի

### Վ Ե Ր Ա Կ Ա Ն Գ Ն Ա Ծ

զբութակն և զմարծուանն, զիվան դլ-պէլն և զմեմնաշաղպէլն, զմեծ ձղաւնդիտէլն, որ եկեալ էր ի թագաւորութենէն, ողիրամ ծղաւրն Վարձէոյ և զիիւրամ ծղաւրն Վարձէոյ և զմեծ մամբավարն Թարշատէուցն, զիվագեցին և զՄածնաբերգեցին և այլ բազում դէ-դեպուլը ևս և զղատին Ֆիդեաց և զղատին Անոյ և զղատին Դվինայ և զանուանի շեխն Սուրմարույ. ընդ որոց և զմեծ եպիսկոպոսն Անոյ և զեպիսկոպոսն Անոյ և զեպիսկոպոսն Բշնոյ և զեպիսկոպոսն Հախբատայ»:

Պրոկոփի Դիագուսուի Ճաղկապք աստուածբանականք»-ի հայերեն թարգմանության հիշատակարանում (Յ. Վ. Տաշեան, օր. cit., 29) ասված և. «Թարգմանեցաւ գիրքս Պրոկոփի Դիագուսուի պղատոնական իմաստասիրի ձեռամբ Սիմէոնի անսլիտան քահանայի և կրօնաւորի ի վրաց լեզուէ ի հայ լեզուս յերկիրս Հայոց, ի Վան Վրաց, որ կոչ Պղնձանահանն, ի յակիտենից թուականին ՑԶԾԶ (=6756 կամ 1248 Յ. Ք.») (հմմ. նաև ձեռագիր Եջմիածնի մատենագրանի հին հավաքածուի № 3016, եջ 143 ա, նոր հավաքածուի № 1532, եջ 247 վ.):

Գրիգոր Նյուսացվո «Ճողվողիկն Մենութիւն» կոչված գրության հայերեն թարգմանության հիշատակարանում կրկնվում ե գրեթե նույնը (տես ձեռ. Եջմիածնի մատենագրանի հին հավաքածուի № 1013, եջ 241 վ.): «Թրիցաւ և աւարտեցաւ գիրքս Գրիգոր Նիւսացոյ եպիսկոպոսի յընդիր և լաւ աւրինակաց հնոց, որ թարգիմանչացն գրած էր, ձեռամբ մեղապարս և անարժան կրաւուրի Սիմէոնի, յերկիրս հայոց, մերձ ի կանքն, որ կոչ Սպիթնանիս, ընդ հովանես[աւ] սուրբ աստուածածնին, յիշանութիւն հվանէ աթապակին շնողիկ վանիցս, զոր յերկար ժամանակ արացէ տէր որդուվքն իւրով հանդերձ. արդ աղաչեմ, որը ընթեռնոյք կամ աւրինակէք, յիշան արժանի արարէք և որք յիշէք, յիշեալ լիցիք ի տէր»:

«Պղնձանահանք»-ը հիշվում ե նաև հայերեն արձանագրությունների մեջ՝ յերկու անգամ: Սրանից մեկն ե այսպիս կոչված Զուկսական կամ 1247 թ. արձանագրությունը (Մակար վ. Բարիւլարեան, Արցախ, եջ 363 = կ. Կոս-

\* Հմմ. Խլ. Զալախիւլիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, II, 654—655. նույնը, Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, II, 2, Տփղիս 1929, եջ 480:

\*\* Ավելի մոտ վրացական ձեկն՝ սպիթնաձի պիլինձ բատիք:

տամեան, Վկյական, տարեգիր, 92) հետեւալ բովանդակությամբ, «Կամաւան աստուծոյ [Ես] տէր Յորդանան շինեցի գեկեղեցիս ի թվին ՈՂօ. Իշխանութեան Աւագին, ողորմութեամբ և տրաւք Պիննասանացն Աստուածածին և առաջնորդութեամբ Պետրէի և Համազասպայ... Ես Պետրէ եւ Համազասպ համարեցաք գծովքն, եղաք սահման ժողովուրդ աստուածածինս»:

Ախտալա կայարանից դեպի համառուն վանքը տանող կես ճանապարհից  
դեպի աջ, Այր կոչված տեղում, լսաչքարի վրա կարդացվում է հետեւյալ ար-  
ձանագրությունը 1188 թ. (Լ. Մելիքսեբ-Բեկ, Քորերն ու նրա հայերեն և վրա-  
ցերեն արձանագրությունները, —«Bulletin de l'Université de Tiflis», VII, 1926,  
էջ 67—68, ծանոթ. 3). «Ես, Մարիամ, գուստը կիւրիկէի, կանոնեցի զՊինձա-  
հանաց Հողհատի սուրբ աստվածածինս. որք երկրպագէք զմեզ, յաղաւթս յի-  
շեցեք. թու[ին] ՈՒ. Է:

Սակայն Պղնձանանքին վերաբերյալ հարցը բարդանում է շնորհիկ այս հանգամանքի ևս, զոր ինչպես Բջնիում, նույնպես և Զորագետում մենք գտնում ենք քաղկեդոնիկ դավանության վանքեր վրացերեն արձանագրություններով հանդերձ, իսկ Զորագետինը, բացի դրանից, նաև քաղկեդոնիկ-հայերի թողած հայերեն արձանագրություններով:

Տալով Նոր-Բայազետի նախկին գավառի Թայչարուխ գյուղի նկարսպառ-թյունը, Յե. Լալայանը (Նոր-Բայազետի գաւառ, «Աղբագրական Հանդէս», XX 1910, եջ 45) նշում ե. «Թայչարուխ գիւղից ու հարաւ — հաղիւ շինուածք» մի հինգ հեռու — մի անտառապատ բլրի տափարակի գավաթին բարձրանում է մի հինգ հեռութեան վահանք»: Ապա «Թայչարուխ վահանք» խորագրի տակ նույն Յե. Լալայանը («Աղբական Հանդէս» XXIV, 1913, եջ 60) տալիս ե նույն հուշարձանի հելլայանը մանրամասն նկարսպառթյունը:

«Դարաշիչակի թայշարումս գիւղից դէպի հարաւ, հաղիւ շ զիլոնեար հեռու, մի անտառապատ բլրի տափարակ գագաթին բարձրանում է մի հին, վրացական տաճար՝ սև, տաշած քարից շինած: Տաճարը օրօրոցածն է, անզմբէթ, և ունի հարաւային և արևմտեան կողմերում մի-մի գաւիթ, իսկ հիւսիսայինում մի մատուռ, որ բացւում է տաճարի մեջ:

«Տաճարի երկարութիւնն է 13,60 մետր, լայնութիւնը՝ 7,65 մետր, և բարձրութիւնը՝ 11 մետր։ Արևելեան ճակատին կայ մի երկար և նեղ պատուհան, բարձր վերև երկու բարձրաքանդակ աղաւնի, կողքերին մի մի ոսկաս։ Փոքը որի վերև երկու բարձրաքանդակ աղաւնի, կողքերին մի մի ոսկաս։ Փոքը ինչ ներքեւ վրաց խուզուրի տառերով մի եղծուած արձանագրութիւն։

«Ճամարը ներքուստ անսիւն է, պատերին կից բարձրանում են չորսական, հասարակի քառանկիւնի որմասիւներ, որոնց վրայ բոլորում են ոռմանական կամաներ (sic. I. Մ.-Բ.): Զեղունը ներքուստ բոլորակածն է, արտաքուստ եռանկիւնի: Սեղանը բոլորակածն է, շատ ցածր, առանց խթանների: Երկու կողքերին ունին քառանկիւնի փոքրիկ բացուածքներ, որոնք բացւում են գաղտնի պահարանների մեջ:

«Ճանարի հիմախային պատին կից, կարծես յետոյ, շինուած է մի մատուռ, որ թերեւս իբր խորան է ծառայել: Սա մի փոքրիկ կամարակապ չէնք է, երկու ներ պատռւաններով արելելան և արևմտեան պատերին և մի գըռնով, որ բացուած է տաճարի մէջ: Արելելեան կողմում կայ մի ցածրադիր սեղան:

«Հարստաւյին կողմի գաւկիթը մի հասարակ շէնք է, միայն միակ դռան վերև կայ մի բարձրացանդակ աղաւնի, աջ կողքին արկի մի ժամացոյց:

«Ճամարի մէջ կան մի քանի գերեզմանաքարեր, որոնցից երկուսի վրայ կան վրաց խուցուրի տառերով տապահնագիրներ»:

Ճամարի հանդէպ կայ մի մացտուտ, որի ժառեն այսպէս կարգին դաստիարակ են, որ իսկոյն նկատում է երբեք ծառովազ կապելլա:

Այս նկարագրությանը Յե. Լալայանը (հջ 60, ծանոթ.) կցում է այսպիսի մի ծանոթություն, «իմ այս վանքը այցելուծ միջոցին սաստիկ մշուշը թոյլ չը տուեց լաւ լուսանկարելու»:

Նկարագրությանը, դժբախտաբար, վոչ մի լուսանկար կցված չե:

Բայց և այնպես, այս մանրամասն Նկարագրությունն ել ըոլոր վերեւով ասածի հետ, միանդամայն բավկական է, դուքսեսքի Թայշալուսի (ըստ Ալիշանի՝ Ընտառամալի) յեկեղեցին մենք քաղկեդոնիկ զավանության հուշարձան ընդունենք, փորը հնարավորություն և տալիս Մխարքարձեներ Հովհաննի (Խվանելի) և նրա վորդի Ավագի անվան հետ կապել ինչպես Զորագետի Պղնձահանքն, այսինքն այժմյան Ախտալան, նույնպես և Բջնիկի Պղնձահանքն, այսինքն այժմյան Թայշալուսի (Ընտառամալի) յեկեղեցիները: Հարցը միմիայն այն է, թե յերկուսից վհրն և իսկապես Հովհաննի (Խվանելի) և Ավագի գերեզմանների տեղը: Թայշալուսի վրացերեն արձանագրությունները գեռես կարոտ են ստուգման, փոք մենք մտադիր ենք անհապաղ ի կատար ածեր ապա և արձանագրությունները հրապարակել մեր աշխատության մեջ՝ «Վրացերեն արձանագրությունները Հայաստանում»: Խակ Ախտալայի վրացերեն արձանագրություններից մեկը, փորը գտնվում է բլրի փոքը յեկեղեցու ճակատին, հիշում է միմիայն Գետրոս վանահոր (Գետրե ծինամձվարի) կառուցած պատրոն Ավագ աթաքակի աղոթքարանից շինությունն առանց Քվահամարի:

Այս հարցին մենք ելի կանդրադառնենք հիշյալ աշխատության մեջ:

9 Այս զետքում և հետագայում ամեն տեղ Ղարաբաղի՝ իրեք ձմերոցի՝ մաս-  
սին խոսելիս պատմիչներն ընդհանրապես և վրաց հեղինակները մասնավորա-  
պես ի նկատի ունեն զու թե ներկա, այսինքն լեռնային Ղարաբաղը, այլ  
դաշտավիճն Ղարաբաղը կամ Սըրցախը (Աղվանքը). Հմ. Թովման Մեծվիեցու  
(Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Պարսի 1860, էջ 20) խոս-  
քերը, «Եկն սա (թափառորն Վրաց Բաշարաատ) բազում ընծայիւք ի հնագան-  
դութիւն պիլծ թագաւորին (Լանկ-Թամուրայ) և նա լցեալ չարութեամբ սա-  
տանայի ուրացցոյց զնա, և առեալ զնաց ի Ղարաբաղ՝ ի ձմերոցն առաջին  
թագաւորաց մերոց»; Սըր մասին խոսում ենք և մեր հատուկ աշխատության

մեջ՝ «Հայկական աղբյուրները Վրաստանի մասին. Թովմա Մեծոփեցի» (Վրա-  
ցերեն), վոր հանձնված և տպագրության Տփղիսի պետ. համալսարանի հրա-  
տարակչության:

10 Ի դեպ, անհրաժեշտ ենք գտնում մատնանշել վոր այս Արդուն-խանն է, վորն Ավանի 1285 թվի մի արձանագրության Հով. յեպ. Նախարարնելի (Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի, II հջ 160) սիմալ ընթերցման հետևանքով Արդունքեանս-ի և վերածիւ թի նույն Նախարարնելի և թի նոր հետեւրդների՝ Դ. Ալիքանի (Այրարատ, 293) և Կ. Կոստանյանի (Վիմական տարեգիր, 127) մոտ: Խնչպես Ավանի, նույնպես և Արուճի 1285 թ. արձանագրությունների մեջ պարզորոշ կերպով կարդացվում է «Արդուն-խան»: Ավանի մի արձանագրության մեջ՝ «Ցաշի» արհակալութեան արքայից արքային՝ Արդունին ես ամիբռոպասալար Խութլու Բուղայ որ լի սպալար Սաղունին» եւ այլում՝ «Ի թի ԶԼՌ յաշխարհակալութեան արքայից արքային Արդունին, ի թագաւորութեան Վրաց և Հայոց Դէմքարի, ես Դաւիթ որդի Դէմքարէ թագաւորին» եւ այլում՝ «Արուճի արձանագրության մեջ՝ «Ի թուիս Հայոց ԶԼՌ, ի փառանութեանն Արդունին խանին, ի թագաւորութեան Դէմքարէի, ի պարոնութեանն սպասալար Խարկքծեալին եղաւըն իվանէի որդուցն մեծին Շահնշահի» եւ այլում:

ԱՆԱՆՈՒՆ (XVI. Դ.)

## «ԿԱՐԳԱԴՐՈՒՄՆ ԱՐՔՈՒՆԻ ԴՐԱՆ»

« Կարգադրումն արքունի դրան»՝ այսպես ենք մենք կոչում այն պատմա-իրավաբանական վավերագիրը, վորը հայտնի ե վրացերեն «ինելմծիփիս կարիս գարիգեթա» անվամբ: Վավերագիրն յերկան հանեց և ապա հրատարակեց Ե. Թաղաջարիլին՝ Institution des cours royales [Monumenta Georgica. IV. Leges. № 1, Publicatio Universitatis Tphilisiensis], վրացերեն, Տփղիս 1920, Եջ XXXVIII + 32:

Այս վավերագիրն, ըստ նույն Ե. Թաղաջարիլու հետազոտության (ibid., III—IX, հատկապես VIII), կազմված պիտի լինի 1295—1469 թ. թ. միջոցին, ավելի ուղիղ՝ Գեորգ (Գիորգի) Պայծառի թագավորության որոք՝ 1318—1346 թ. թ.: Հեղինակն անհայտ անձնավորություն ե, վորը, համենայն դեպս, մոտ պիտի լիներ կանգնած վրաց արքունիքին, հավանական ե նրա աստիճանափորներից մեկը (Ե. Թաղաջարիլի, օր. cit., XIV—XVI; հմմ. Իվ. Զավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, I, Տիգիս 1928, եջ 62—68):

## [ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՐՔԱՆԵՐԻ ՏԵՂԸ ՎՐԱՑ ԱՐՔՈՒՆՆԵՐՈՒՄ]

... Ծրապիզնի [արքա]ներն և Շարվան-շահն ու հայոց (սումելիների) արքան<sup>1</sup> [յերբ գալիս են Վրաց արքունիքը], չորեքյան հավասար չեն նստում... Զե՞ վոր ոսաց (ոսերի) յերկու արքաները, և կախից (կախերի) արքան, և աղվանից (ալվանների) արքան, ծանարաց արքան, [և] տայոց յերեք արքաները, և հայոց

(սոմելիների) արքան<sup>2</sup>, և տրապիդոնցիք և Շարվանշահն \* յերբ գալիս են Նաճարմագև, տասներկուան ել տեղ են գտնում նստելու, հապա չորեքյան ինչու չպիտի տեղավորվեն:

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> «Հայոց (սոմելիների) արքային հիշատակությունն այստեղ, անկասկած, անաքըռնիզմ ե, քանի փոք XIII—XV դարերում հայ Բագրատունյաց կամ Կորիկյանց «արքաների» մասին խոսք չի կարող լինել իսկ Ռուբինյանները դժվար թե գալիս լինելին Վրաց արքունիքը»:

<sup>2</sup> Նույնը:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ (XV Դ.)

«ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՈԾՄԱՆ ԾԻՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ».  
«ՍԱՄՑԻԵ-ՍԱԱԹԱԲԱԳՈՅԻ ԹԵՄԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ».

XV դարում, համենայն դեպս նույն XV դարուց վոչ առաջ պիտի լինին սահմանված այն յերկու վավերագրերը, վորոնց մեջ ներկայացրած են վրաց թեմերի ցուցակները: Այդ վավերագրերից մեկն ե «Թագավորական ոծման ծիսակարգությունը» (վրացերեն՝ «գանգերա դարբազորիսա», այսինքն սահմանադրումն պալատական ցերեմոնիալի), իսկ մյուսը՝ Սամցխե-Սաաթաբագոյին յենթակա թեմերի ցուցակը: Յերկուսն ել մեզ համար հետաքրքիր են այն աստիճանն, վորքան ել պարունակում են իրենց մեջ վրաց յեկեղեցուն յենթակա քաղկեդոնիկ թեմերի անունները թե Վրաստանում և թե Վրաստանից դուրս, մասսամբ Հայաստանում:

Առաջին վավերագրեր՝ «Թագավորական ոծման ծիսակարգությունը» հայտնի յե մի քանի վարիանտով, վորոնցից մեկը հրատարակել ե Թ. Ժորդանիան իր «Քրոնիկաներ»-ի I հատորում, Տփղիս 1892, եջ 45—46, մյուսը՝ Ա. Ցագարելի, Սведения о памятниках грузинской письменности, т. I, в. 3, Спб. 1894, стр. 294—295, նաև XXXVI, յերրորդն ու չորրորդն ե. Թաղաւշչիլին՝ Հնագիտական ուղեգորություններ և ծանոթագրություններ, վրացերեն, գ. I, Տփղիս 1907, եջ 78—80, 83—85:

Յերկրորդ վավերագրեր՝ Սամցխե-Սաաթաբագոյին յենթակա թեմերի ցուցակը՝ հայտնի յե յերկու վարիանտով, վոր հրատարակել են, նախ Դ. Բակրաձե, Արխеологическое путешествие по Гурии и Адчаре, Спб. 1878, стр. 81—82, ապա վերոհիշյալ ե. Թաղաւշչիլին՝ Հնագիտական ուղեգորություններ և ծանոթագրություններ, վրացերեն, գ. I, Տփղիս 1907, եջ 76—77: Ուսւերեն թարգմանությունը տես՝ Հ. Մարք, Исторический очерк грузин-

\* Բնագրում՝ Շարվանշահները:

ской церкви с древнейших времен,—«Церковные Ведомости», 1907, стр. 137—138, прил.:

Ստորև մենք առաջ ենք բերում յերկուսից կատարած այն քաղվածքները, վորոնք հայ-քաղկեդոնիկ թեմերին են վերաբերում:

## [ՔԱՂԿԵԴՈՆԻԿ ՅԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ՀԱՅՔՈՒՄ]

### I

Յերբ ոծվում ե ու գահ բարձրանում թագավորը, յեպիսկոպոսները պիտի նստեն հետևյալ կարգով.

1. Հրամայե Վրաց (Քարթլիի) կաթողիկոսը, և նստի թագավորի աջ կողմը բազմոցով ու բարձով...

3. Ներս մտնի Մեծ Հայքի (Սոմիլիթի) մետրապոլիտն\* և նստի կաթողիկոսից ցած բազմոցով ու բարձով...

10 || 8 || 11 Իշխանցին...

15 Արտահանի (Երուշնելի)...

25 || 23 || 26 Ալաշկերտցին (Վաղարշակերտցին)...

— 26 || 27,29 Անեցին...

27 || 25 || 28 Կարուցն (Կարելին)...

### II

3. Իշխանցու հոտը՝ Գուրջի-Բողազից սկսած այս կողմը (հյուս), ամբողջ Թորթումը, Տափիս-կարիի ներքև, Արտահանուջի՝ Սակրուլավի կոչվածից այս կողմը, Որդոնի լերան լանջի այն կողմը, Սակավասիձոն ամբողջ, Խսպիր-Տրապիզոնի լերան այս կողմը:

8. Արտահանեցու (Երուշնելիի) հոտը՝ Տալաշոյի վերին մասը, Արտահանը մինչև Կողայի (Կոլայի) սահմանը:

9. Ալաշկերտցու (Վաղարշակերտցու) հոտը՝ Կաղզվանի վերին մասը, Ալաշկերտի (Վաղարշակերտի) այս կողմը, Խնուսն և Դեվաբոինի այս կողմը:

10. Անեցվո հոտն՝ ամբողջ Զարիշատը (Զարիշտիանին) և Շիրակավանն (Շիրակոանի) և Մաղասբերդը (Մաղասբերեթի):

11. Կարսեցվո հոտն՝ ամբողջ Կարսն և Կողայի (Կոլայի) ու

\* Բ. վարիանտում «Մեծ Հայքի մետրապոլիտ»-ի փոխարեն՝ «յեպիսկոպոսակետը (Սամթավոյի):

Ուղթյաց (Ոլթիի) սահմաններից այս կողմը գտնվող Գգչեվանքն (?) ու Կաղզվանը:

13. . .

Բոլոր այս յեպիսկոպոսները ձեռնադրվում են Վրաց (Քարթլիի) կաթողիկոսից, վորը սրանց տերն է, իսկ նրանք սրա ստորագրյաներն...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն Գեորգ (Գիորգի) VII, 1395—1407:

2 Այսինքն Յերնջակը:

Ժ.

### ԱՆԱՆՈՒՆ (XV Դ.)

#### «ՀՈՒՇԱՐՁԱՆՆ ԻՇԽԱՆԱՑ»

«Հուշարձանն իշխանաց» (ձեզի երիսթավլթա)՝ այսպես ե կոչում անանուն հեղինակի այն յերկասիրությունը, վորն՝ իրքն յուրատեսակ պատմագրական գրվածք՝ առաջնահատուկ տեղ ունի գրաված վրաց գրականության մեջ։ Գրվածքը հրատարակել ե թ. Ժորժ անիան իր «Քրոնիկաներ»-ի II մասում (վրացերեն), Տփդիս 1897, եջ 1—19։ Իսկ համեմատաբար ավելի վաղ Մ. Բրոսսետ, Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie, SPB, 1851, p. p. 372—384 (Addition XXI. De l'origine des éristhaws du Ksan): Մանրամասն ուսումնասիրությունը տես՝ ի վ. Զավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականությունը (վրացերեն), ա. տպ., եջ 213—218։

Այս յերկասիրությունը, վորը Քսանի իշխանների (երիսթավների) տոհմային պատմությանն ե վերաբերում, ըստ յերևույթին, XIII դարուցն ե սկսվում և համում մինչ XV դարու սկզբները՝ Լանդ-Թեմուրի արշավանքներին հետևող անցքերի նկարագրությամբ (ի վ. Զավախիշվիլի, 216)։ Այս պատճառով հեղինակը XV դարու պատմիչ կարող ե համարվել։

#### [ԳԵՂՐԳ VΙ-Ի ԱՐԴԱՎԱՆՔՆ ԱԼԻՆՉԱՅԻ ՎՐԱ]

... Ապա Գեորգ (Գիորգի) թագավորն<sup>1</sup> արշավեց Ալինջայի վրաց, իմերցոց, մեսլսերի և շիրվանցոց ամբողջ զորքով, հասավ Ալինջա<sup>2</sup> և կոտորեց սուլթանի վորդու զորքը, վորն Ալինջա (Ալիջանի) բերդումն եր կանգնեցրած, և նրան հանեց [այստեղից], Քրիստոսի 1396 թվին, [կոտորեց] Թեմուր-Պահնի [հեծելազորքն] և հաղթող վերադարձավ...

ԺԱ.

## ԲԱԳԻԱՏ ԹԱԳԱՎՈՐ (XVI դ.)

«ՆԻԿՈՐԾՄԻԴԻ ՍԻԳԵԼԸ»

«Ափխաղաց, վրաց, ունաց, կախից և հայոց, շահնշահ և շարվանշահ, արքայից արքա... Բագրատն ու կողակիցն՝ Հեղինել թագուհին» 232 քրոնիկոնին կամ 1544 թվին տպած իրենց սիգելում (հրովարտակում), զորը վերաբերում ե նիկործմիդի տաճարի վերանորոգման, մի առ մի թվում են այդ գյուղերն ու ճորտերին, վրոնց նրանք նվիրաբերել են այդ տաճարին: Այդ սիգելն, ուր առանձնապես մեղ համար հետաքրքիր ե «նողովքներ» պարունակող վերջին մասը, հրատարակել ե Ս. Կակարածեն՝ «Կամոնագիր Բագրատ Կյուրապաղաղաւը» (վրացերեն), Տփղիս 1912, էջ 6—8:

[ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ ՅԵՆԹԱԿԱ ԻՇԽԱՆԱՎՈՐՆԵՐԸ]

«Նիկործմիդի յեկեղեցի իրավունքները խափանող ով ել ուղում ե լինի՝ գրսի պատրիարքները, կամ Ափխաղքի (Արխաղեթի) պատրիարքը, կամ Վրաց (Քարթլիի) պատրիարքը, կամ Ափխաղքի (Արխաղեթի)<sup>1</sup> արքայից-արքան, կամ իշխանաց-իշխանները, թեկուղ աթաքակներն ու սպասալարները, կամ Դադյանն ու Գուրիելը, կամ Շիրվանի և Հայքի (Սոմիկիթի) իշխանաց-իշխաններն ու իշխաններն<sup>2</sup> և կամ Ռաճի իշխանը կամ բերդապետները կամ հսկիչներն և կամ տանուտերներն կամ ամիրաց-ամիրան, ... [նողովյալ լինին] ...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

<sup>1</sup> «Ափխաղք»-ը արևմտ. Վրաստանի իմաստով ե գործածված:

<sup>2</sup> Թե այս դեպքում Հայոց վեր իշխանաց-իշխաններին և իշխաններին ունի ի նկատի այս վավերագիրը, դժվար ե ասել:

ԺԲ.

## ԱՆԱՆՈՒՆ (XVI դ.)

«ՄԵՍԽԱԿԱՆ ՍԱՂՄՈՍԻ ՄԱՏՅԱՆԸ»

«Մեսխական սաղմոսի մատյանը» (մեսխուրի դավիթնիս մատիանե) նույնպիսի նշանակություն ունի վրաց պատմագրության համար, ինչպես մեղ արդեն ծանոթ «Հուշարձանն իշխանաց»-ը, գուցե ել ավելի, քանի վոր պարունակում ե իր մեջ տեղեկություններ վոչ միայն Սամցիսե-Սաաթաբագոյի, այլև Վրաստանի այլ շրջանների մասին: Այս ուշագրավ գրվածքից միմիայն մի չնչին մասն ե հասել մեզ, ուր պահպանվել են տվյալներ զանազան անցքերի մասին սկսած 1561 թ. մինչև 1587 թ.: «Մատյանը» հրատարակել ե Ե. Թաղաջարի հին Յերեք պատմական քրոնիկա (վրացերեն), Տփղիս 1890 թ., էջ 81—115 (Մեսխական սաղմոսի քրոնիկան), ուսումնասիրությամբ հանդերձ, էջ CXXVII—CXLIX. նույնը ուղարկեն թարգմանությամբ՝ Е. Տակայ-շվիլի. Իստունի գրունտական լետոպիսը—Տրի հրատարակությունը (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, в. XXVIII, 1900), стр. 183—214 (III. Хроники Месхийской Псалтири):

Ի գ. Զագախիշվիլու (չին վրացական պատմական գրականությունը, ա. տպ., 231) ասելով, «Միխական սաղմոսի մատյանը, իրեւ ժամանակացի և [անցքերին] մասնակցի գրած յերկասիրություն, մեծ՝ ուղղակի անգնահատեկի նշանակություն ունի» վրաց պատմության համար, «քանի վոր յուրաքանչյուր դեպքի մասին [խոսելիս] վորոշ թվահամար ունի ցուցադրած»:

[ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՆՑՔԵՐ XVI ԴԱՐՈՒՆ]

... Քրոնիկոնի 266-ին<sup>1</sup>... ուրումք ավերեցին Գորին և կանգառան Զարիշատում...

... [Ղոբուտովի] 9-ին, շաբաթ առավոտ, Զուրձանի և Ծինծալի միջև յեկան Արզումի և Վանի փաշաները ...

... [Նույն ոգոստոսին] Լոռի մտավ [և այստեղից] Տփղիս հասավ [Լալա]-փաշան... Սոմիսիթեցիք շատ վասեցին [վերջինիս] ...  
... [Հոկտեմբերին] Լալա-փաշան կանգնած եր Քարթլիում, [Վորտեղից] յեկավ Սոմիսիթ, [ուր սկսեց] բանակցել [Քարթլիի Սիմեոն թագավորի հետ], վորն ել հիվանդ եր...  
... Պատրոն Դ'Վարդ'Վարեյի մոտ [Լալա-փաշանից] մարդ յեկավ, [և] նրան այլևս չթողին Ուղթիքում (Ոլթիում), [այլ] տարան Արքպում ծննդյան [առնի] նախորյակին...

Քրոնիկոնի 267-ին<sup>2</sup>, մարտի 23-ին, պատրոն Մանուչարն ուղարկեց Արքպատմ, [իսկ] Արքպատմից պատրոն Ղավարդ՝ վարեն և պատրոն Մանուչարը գնացին Կոստանդնուպոլիս։ Նրանք մեկնեցին ապրիլի 20-ին, յերկուշաբթի [որը] ...

[Նույն քրոնիկոնին] կալա-փաշան յերկրորդ անգամ յեկավ և վերանորոգեց Կարսը (Կարի)...

Քըսնիկոնի 268-ին<sup>3</sup>... հումանիստ կեսին վերադարձրին Բեքային, և յերկոքյան տերերը (Դպրոցի վարեն և Բեքան) գնացին Լոռի, վորս ավերեցին. ապա հաղթող վերադարձան...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

$$^1 \text{ } U_{\mu} \bar{u} \mu \bar{u} \text{ } 266 + 1312 = 1578 \text{ } \mu.$$

$$^2 \text{ } U_{\mu \nu \rho \sigma} \text{ } 267 + 1312 = 1579 \text{ } \mu.$$

$$^3 U_{\mu \nu \rho \sigma} 268 + 1312 = 1580 \text{ f.s.}$$

ΦΨ.

## ԱՆԱՆՈՒՆ (XVII Դ.)

## «ՃԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

XVII—XVIII դ. դ. անանուն բազմաթիվ ժամանակագիրներից մեկն և այն, վորը կցված և «Վրաց պատմա-ազգագրական ն. ընկերության» հավաքածուի № 342 ձեռագիր խորհրդատերին («Ժամանգուլանիշ»-ին): Ժամանակագրությունը սկսվում է 1388 թվից և հասնում մինչև 1656 թ.: Հստ հիշյալ ձեռագրի, վոր արտագրված է 1661 թվին, տեկստը հրատարակել ե. թ. աղայաշը՝ «Վաղեմի Վրաստան» (Վրացերեն) II, 1911—1913, եջ 77—79:

Մհացած նմանորինակ «Ժամանակագրությունները», զոր կազմված են ԽVIII դարում կամ XIX-ի սկզբներում, մենք կղեւ տեղենք հետևյալ հատորում:

[ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՆՑՔԵՐ XVI ԴԱՐՈՒՄ]

227<sup>1</sup>—այստեղ հայերը (սոմելիները) շեղվեցին<sup>2</sup> և թեռուրյան  
կյուրակելին ուտիս ունեցան:  
323<sup>3</sup>—այստեղ հայերը (սոմելիները) կրկին շեղվեցին<sup>4</sup>:  
325<sup>5</sup>—այստեղ խոնթքարը դուրս յեկավ և Յերևանը գրավեց,  
և նույն թվին շահ<sup>6</sup> Սեփին խեց այն նրանից:

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

$$^1 \text{ } U_{\mu\nu\rho\sigma} \text{ } 227 + 1312 = 1539 \text{ } \beta.$$

$$^3 U_{J\mu} h_{\nu\rho} u^{323} + 1312 = 1635 J\mu.$$

4 *Steu ծանոթ.* 2

$$^5 U_{J\mu} \bar{h}^u p^u \cdot 325 + 1312 = 1637 \text{ J..}$$

Ճ.Դ.

## ՓԱՐՍԱԴԱՆ ԳՈՐԳԻԶԱՆԻՁԵ (XVII Դ.)

«ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»,  
«ՈՍՄԱՆՑՈՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Փարսադան Գորգիզանիձեն XVII դարու վերջերի աշքի ընկնող հեղինակներից մեկն ե, վորի գրչին են պատկանում մի շարք պատմագրական և բանասիրական գրվածքներ, ինչպես ինքնուրույն, նույնպես և թարգմանական (պարսկերենից) և սրանց թուվում «Վրաստանի պատմությունը» (մի քանի մասից բաղկացած՝ ստվար հատորով), «Ոսմանցոց թագավորների պատմությունը», «Զամի-Աբաս» (մահմեղական որենսգիրքը)\*, «Վրաց-արաբերեն-պարսկերեն բառարանը» են:

Այս Փարսադանն իսկապես Գորեցի եր, բայց թե ով եր տոհմական ծագումով, սրա մասին հավաստի տեղեկություններ չկան: Հանգուցյալ Մ. Զանաշվիլի (Փարսադան Գորգիզանիձեն և նրա յերկերը, վրացերեն, Տփղիս 1896, էջ 21—22) կարծիքով, նա բնիկ վրացի պիտի լիներ, և ազգանուն՝ «Գորգիզանիձե», Գորգի Զանիձե կամ Գեորգ (Գիորգի) Զանաշվիլի յենաշակում. մինչդեռ M. Brosset (Histoire de la Géorgie, t. II, livr. 1, SPB 1849, p. 510) ու, նրան հետեւելով, ի վ. Զավախիշվիլի (Զին վրացական պատմական գրականությունը, առ հրատ., 1916 թ., էջ 234—235) այն կարծիքի յեն, վոր նա հայ պիտի լիներ: Մասնավորապես հետաքրքիր ե ի վ. Զավախիշվիլի (ինձ) գրույթը: — Զանաշած այն հանգամանքին, վոր Փարսադանն իր «Զամի Աբաս»-ի վրացերեն թարգմանության մեջ ինքն իրեն անվանում ե «գորելի քարթվելի» գորեցի վրացի (M. Brosset, op. cit., 513), հարգելի վրացագետն, այնուամենայնիվ, համոզված

\* Վորը վրաց մեջ գրագիտություն տարածող ն. ընկերության № 174 ձեռագրում «Մուսուլման դավանություն» ե կոչվում:

ե, վոր նա «հայ» պետք ելլինի, քանի վոր իր «Վրաստանի պատմություն» յերկի մեջ պատվավոր տեղ ե տալիս հայոց պատմության տվյալներին. բացի դրանից, Փարսադանի «հայ» լինելն, ըստ ի վ. Զավախիշվիլու, նկատվում ե նրանում, վոր նա իր այդ յերկի մեջ յերկի իր վաղեմի ազգային զգացմունքից դրդված՝ ձայն ե բարձրացնում ի պաշտպանություն վորն Թումանիշվիլու, վորին Բարձրաթաշվիլիները մեղադրում ելին կուտրասը արքայազնի սպանությանը մասնակցության մեջ: «Քարթլիում վրացիք, — ասում ե Փարսադանն իր պատմության մեջ, — բազմաթիվ են և հզոր, [իսկ] հայերը (սոմեիները) փոքրաթիվ և անզոր, և նրանցից (հայերից) այսպիսի բան դժվար ե սպասել (ասել). ապա թե վոչ վրացիք ուղղում ելին այս (արքայազնի) արյան [մեղքը] հայու վզին փաթթել» (հմմ. Ի վ. Զավախիշվիլի, օր. cit., 235. տեկստը տես ստորև, էջ 114):

«Զամի Աբաս»-ի թարգմանության մեջ Փարսադանը վորոշակի տեղեկություններ ե տալիս իր կենսագրության զանազան կետերի մասին: Այսպես, որինակ, նա նշած ունի, վոր 1691 թվին, յերբ նա ավարտել ե այս յերկի թարգմանությունը, 65 տարեկան ե յեղել (M. Brosset, op. cit., 511, 513). Հետևապես, պետք ե յերպակացներ, վոր նա ծնված պիտի լինի 1626 թվին: Մյուս կողմից, իր «Վրաստանի պատմություն» յերկի մեջ Փարսադանը նշած ունի, վոր այն ավարտել ե 70 տարեկան հասակում, ասել ե 1696 թվին (հմմ. Ի վ. Զավախիշվիլի, օր. cit., 235—236): Նույն յերկից տեղեկանում ենք, վոր նրան մասել ե իբրև հարազատ վորոգուն՝ Վրաց Ռուսում թագավորը, վորը քրոնիկոնի 344 = 1656 թվին նրան Սպահան ե ուղարկել, ուր և նա հաստատել ե մշտական բնակություն՝ մնալով Պարսկաստանում 40 տարի, և ծառայելով շահ Աբասին ու նրա վորդի Սուլեյմանին, ուրեմն 1656 թվից մինչև 1696 թ.»:

Ինչպես իր ժամանակին և M. Brosset (op. cit., p. 511) կարծիք հայտնեց, Փարսադանը Պարսկաստանում մահմեղականություն պիտի ընդուներ, քանի վոր այս առթիվ վորոշակի խոսում ե պարսից պատմիչ իսկանդեր Մուս չին: Յերբ շահը Վրաստանի խանից (Վրաց թագավորից) պահանջեց, վոր իր ներկայացուցիչը նշանակե Սպահանում, Ռուսում առաջարկեց Փարսադան-բեղին. սրան շահը պատասխանեց, վոր կհամաձայնվի, յեթե Փարսադան-բեղը իսլամ ընդունի. Փարսադան-բեղը համաձայնվեց և ստանձնեց պաշտոնը (B. A. Dorn, Beiträge zur

Geschichte der Kaukasischen Länder und Völker, aus morgenländischen Quellen. III. Erster Beitrag zur Geschichte der Georgier. Hauptsächlich nach Iskander Munschi und Geschichte der Szafiden [„Mémoires de l'Académie Impériale des sciences de SPB“, VII série, t. VI, livr. 4—5, 1844, p. 431], Հմմ. Ի գ. Զավալիսիւ վելի, op. cit., 236—237): Նույն Փարսադանն, ըստ M. Brosset-ի (op. cit., 514), վախճանված պիտի լինի 1703 թվին 77 տարեկան հասակում:

Հայաստանի և հայերի մասին տվյալները Փարսադանն ամփոփած ունի գլխավորապես «Վրաստանի պատմություն» յերկի մեջ, զորք նրա գործիք գործոցն ե, մասամբ ել «Ոսմանցոց թագավորների պատմության» մեջ: Առաջինը գեռ ամբողջապես հրատարակված չե. նրա միմիայն վերջին՝ չորրորդ մասը նախ հրատարակեց Դ. Զուբինով մի փոքր կրծատված՝ «Քարթլիս Յիսովրեա», հ. II, ՄՊԲ 1854, էջ 517—569. Նույնը Փրանսերեն թարգմանությամբ M. Brosset-ի՝ *Histoire de la Géorgie*, II partie, 1 livr., SPB 1856, p. p. 514—515. ապա յերկրորդ անգամ հրատարակեց լրիվ՝ կցելով յերրորդի մի մասն ել՝ ըստ Վրաց Պատմա-Ազգագրական նախկին ընկերության հավաքածուի № 2140 ձեռագրի՝ Սարգիս Կակաված անգամ. «Փարսադան Գորգիշանիձեյի պատմությունը», — „Bulletin Historique“, վրացերեն, Տփղիս 1925 թ., հ. II, էջ 198—320 (բնագիրը՝ 209—316), նաև առանձին արտատպությամբ, Տփղիս 1926, էջ XIII + 112 (բնագիրը՝ 1—108): Իսկ «Ոսմանցոց Խագաղորների պատմությունն» ի թիվս Փարսադանի մանր յերկերի և, ի միջի այլոց, «Վրացերեն-արաբերեն-պարսկերեն բառարանի», հրատարակել ե Մ. Զանաշվիլին՝ «Փարսադան Գորգիշանիձեն և նրա յերկերը», վրացերեն, Տփղիս 1896, էջ 72—78:

Փարսադան Գորգիշանիձեյի «Վրաստանի պատմության» հիմնական ձեռագիրը, զոր գտնվում ե Լենինգրադում՝ Գիտությանց ձեմարանի Արևելագիտության ինստիտուտի (Նախկին «Ասիական Թանգարանի») Georgica № 6-ում, իրոք, մի քանի մասից ե բաղկացած, վորոնց ընդհանուր բնութագիրը տալիս ե ի գ. Զավալիսիւ վելին (op. cit., 234—251):

«Նայած թե վ՞ր աղբյուրների վրա յե հիմնում հեղինակն իր պատմությունը, նրա յերկասիրությունը, —ասում ե ի գ. Զավալիսիւ վելին (ib., 240), —կարելի յե չորս մասի բաժանելու: I—Վրաց և Հայոց դարձից սկսած մինչ Թամարի թագավորությունը

(IV—XIII դ. դ.), II—Թամարից սկսած մինչ Հանգ-Թեմուր (XIII—XIV դ. դ.), III—Հանգ-Թեմուրից սկսած մինչ 1636 թ., և IV—1636—1696 թ.: Այս վերջին՝ IV մասն ե, վոր հրատարակել ե Դ. Զուբինով, իսկ Ա. Կակաված էնակ յերրորդի մի մասը: Ի գ. Զավալիսիւ վելին վաղուց պատրաստած ունի տպագրության III մասն ամբողջապես:

Խոսելով Փարսադանի «Վրաստանի պատմության» գանազան մասերի մասին, զորոնք տարբեր արժեք ունին՝ նայած թե ինչ աղբյուրների վրա յեն հենվում և զորպես են գրված, ի նկատի պիտի ունենալ հետեւյալը:

«Առաջին մասը... գլխավորապես բանավոր և «լուս» տեղեկությունների վրա յե հիմնված և այս պատճառով նա հեքիաթային բնույթ ե կրում, քանի զոր նրա յերկու գրական աղբյուրներն են, ինչպիսի յեն, որինակ, Հայոց պատմությունն և Խոսրովի ու Շիրինի գրույցն, ավանդությունների վրա յեն հիմնված» (ի գ. Զավալիսիւ վելին, op. cit., 243): «Քանի զոր Փարսադան Գորգիշանիձեյից առաջ այս մասին արդեն գոյություն ունեյին, համեսայն գեաս ավելի լավ, իսկ VIII—XII դ. մասին արժեքավոր պատմական յերկասիրություններ, այս պատճառով Գորգիշանիձեյի գրվածքի այս առաջին մասն,—ըստ ի գ. Զավալիսիւ վելու իրավացի գնահատման (ibid.), —վոչ մի նշանակություն չունի և վոչ ել ժամանակակցի համար և ունեցել Անալի զարմանալի տգիտությամբ լի այս մասը վնասից զատ ընթերցողին վոչ մի ոգուտ չեր տա: Այս միմիայն մի բանով ե ուշագրավ. յեթե այսպիսի մի բարձրաստիճան և թագավորին մերձակա ծառայողն ու պատմիչն, ինչպիսին յեր Փարսադան Գորգիշանիձեն, այսպես խառնախորտիկի նման ուներ խառնած հայրենի յերկը անցյան ու անցերն, այսպես հեքիաթաբար ուներ ներկայացրած այն, իսկ վրացական լավագույն պատմական աղբյուրները վոչ միայն կարգացած, այլև նույնիսկ աչքով տեսած չուներ, մնացած ժողովությունը, սովորական, միջակ կարողության և ուսման տերն՝ ել Բնակ պատկերացում պիտի ունենար: Ի հարկե, վհչ մի... Այս բանը պարզ ապացուցում ե Փարսադան Գորգիշանիձեյի աշխատության առաջին մասը»:

«Յերկրորդ մասը, —նույն ի գ. Զավալիսիւ վելու հետազոտության համաձայն (op. cit., 242—244), —ամբողջապես հենված ե Քարթլիս-Յիսովրեայի վրա: Այսուեղ հեղինակն իր աղբյուրին ե հետեւյալ, և բնագրի բովանդակությունն յերբեմն մոտավորա-

պես ունի առաջ բերած, յերբեմն՝ ավելի ռամկորեն»։ Իսկ «ընդհանրապես, այս յերկրորդ մասն ել պատմության համար վոչ մի նշանակություն վոչ ունեցել ե և վոչ ել ունի, քանի վոր լավագույն արժեքի բնագիրը նրա պղբյուրի՝ հասել ե մեզի»։

Համեմատաբար արժեքավոր ե, ըստ ի վ ջ վ ի լ ու, պատմության յերրորդ մասը, վորը «XIV—XVII դարերին ե վերաբերում», քանի վոր «հենց այս շրջանն եր, վոր չեր նկարագրված Քարթլիս-Ցխովերայի մեջ մինչ Վախտանգ Աբագան եր, վոր չախտանգ թագավորի կողմից ժողոված գիտնականների հետազոտության առարկան եր կազմում։ Հետեապես Փարսպան Գորգիշանիձեն և Վախտանգյան հանձնաժողովն այս տեսակետից միևնույն նպատակն են ունեցել՝ վերականգնել վրաստանի պատմությունը» (ibid., 249)։ «Ինչպես կատարեց Փարսպան Գորգիշանիձեն իր պարտականությունը։ Վոչ մի վրացական աղբյուր և վավերագիր, վորի գտնելը հեշտությամբ կարող ելին Վախտանգի գիտուն մարդիկն և իրոք ձեռին ել ունեցին, նա (Փարսպանը) Սպահանում չուներ։ Այս պատճառով Գորգիշանիձեն այս շրջանն ևս կամ համաձայն բանագոր ավանդությունների պիտի գրեր, — հապա նրա յերկասիրության այս մասն ել իր նշանակությունն կիրցներ, — կամ թե չե պարսկական պատմական աղբյուններից պիտի քաղեր բոլոր տեղեկություններն, ինչ վոր Վրաստանի վերաբերյալ այստեղ կգտնվեր։ Բարեբաղաբար, Գորգիշանիձեն այս յերկրորդ ճանապարհով գնան ե գերադասել» (249—250)։ «Երա տեղեկությունները քաղված են գլխավորապես Միրոն Հուսենի և իսկանդեր Մունչի յերկասիրություններից։ Ըսդ սմին, նա հաճախ բառացի յե թարգմանում բնագիրը։ Նրա ժողոված տեղեկություններն ընդարձակ և նոր նյութեր են տալիս Վրաստանի պատմության այնպիսի՝ մթությամբ պատաճ շրջանի մասին, ինչպիսին յեն XIV—XVII դարերը» (եջ 250)։

Յեվլս առավել արժեքավոր ե Փարսպան Գորգիշանիձեյի վերջին՝ չորրորդ մասը, վորը պարունակում ե 1636—1696 թ. թ. անցքերի նկարագրությունը, վորը նա գրի յե առել իրեւ ժամանակից և ականատես, քանի վոր հենց ինքն այս առթիվ ասում ե. «Յես, Փարսպանս, ասում եմ այս. ճշմարիտ աստվածն վկա. տաս տարեկան հասակից սկսած մինչ յոթանասուն տարին ինչ վոր ինձ պատահել ե և արժանի յե գրոց մեջ գրելու համար, ճըշմարիտն այս ե» (հմմ. Ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ի, օր. սիտ., 235)։

Զնայած այն հանգամանքին, վոր Փարսպան Գորգիշանիձեյի

«Վրաստանի պատմության» ա. մասը լուրջ պատմական յերկասիրության տպագորություն չի թողնում, այլ առասպելի բնույթ ե կրում, այնուամենայնիվ այն առանձնապես հետաքրքիր ե հայագիտական տեսակետով, քանի վոր պարունակում ե, ի միջի այլոց, Հայոց դարձի պատմությունն ու Խոսրովի և Շիրինի զրույցն ամենայն մասրամանությամբ, վորը հեղինակը գրի յե առել գըլիս վոր ապես բանագությունների հիման վրա ավանդությունների հիման վրա, մասսմբ ոգտագործելով (Հայոց դարձի վերաբերմամբ), ինչպես մենք պարզած ունինք, և գրավոր աղբյուրուն երը, բայց այլանգությակ ձեւվով (Ագաթանգեղոս, Խորենացի, Դաշնաց Թուղթ, Վարագա Խաչի պատմությունն ըստ «Յայսմաւուրք»-ի են): Այս նյութից Հայոց դարձի պատմությունը մենք ամբողջական թարգմանությամբ դնում ենք ստորև, իսկ Խոսրովի և Շիրինի զրույցը, վորն ավելի գեղարվեստական քան պատմական յերկի նշանակություն ունի, տանում ենք IV հատորն, ուր, ի միջի այլոց, ամփոփած կունենանք համապատասխան նյութեր վրացական գեղարվեստական գրականությունից ու բանահյուսությունից: Բացի դրանից, ներկա հասորում մենք տալիս ենք մի կտոր՝ քաղաքաց նույն Ա. մասից՝ Բագրատունյաց ծագման վերաբերյալ: Իսկ նույն Ա. մասի մնացած նյութն, ինչպես և Բ. մասի ամբողջ նյութը մենք դիտմամբ բաց ենք թողնում, քանի վոր այն լոկ կրկնություն ե Քարթլիս-ցխորեց այլ մեջ ներմուծած յերկերի հայտնի տվյալների, վոր մենք արագեն տված ունինք ներկա հատորին սկզբնական գլխներում։ Իսկ ինչ վերաբերում ե յերկրորդ և չորրորդ մասերին, վորոնք նախորդ մասերի հետ համեմատած ավելի արժեքավոր են, այն մենք ոգտագործած ունինք ինչպես հարկն ե:

Քաղվածքների թարգմանությունը «Վրաստանի պատմության» Ա. անտիպ մասից մենք կատարած ունինք անմիջապես Լենինգրադի Գիտությանց Ճեմարանի Արևելագիտական ինստիտուտի (Նախկին Ասիական Թանգարանի) Georgica № 6 ձեռագրից (in folio՝ շքեղ կազմով, վորը հետեւյալ վոսկեղող մակագրությունն ունի. „История Грузии собранная Фарсадана Георги Джанизева“), նաև Գ. և Դ. մասերից՝ համաձայն Ա. կակառած այս ի հրատարակության՝ «Փարսպան Գորգիշանիձեյի պատմությունը», Տփղիս 1926, եջ 93—106 և 1—92. իսկ քաղվածքը

Ները «Ոսմանցոց թագավորների պատմությունից» համաձայն՝ Մ.  
Զանաշվիլու հրատարակության՝ «Փարսադան Գորգիջանիձեն և  
Նրա յերկերը», էջ 72—78\*.

Ի վերջո, անհրաժեշտ ենք գտնում ընդգծել, վոր Փարսադան  
Գորգիջանիձեյի Պատմության Ա. մասից քաղաք [1—9] գլուխները,  
վոր վերաբերում են «Հայոց դարձի» պատմությանն և հատկապես  
Տրդատին, Հռիփսիմեյին, Գրիգորին ևն, բացի նրանից, վոր տես-  
դեցիող են, նաև ըստ եյության ամբողջապես առաջ առաջ ելի  
բնույթի էն կը ունեմ:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ա. Մ. Ա. Ս. Ց<sup>1</sup>

[1.] ԱՅՍՏԵՂ ՓՐԱՆԳՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԴՈՒՏՏՐ  
ՀՌԻՓՍԻՄԵՅԻ (ՀՈՌՈՄ-ՍԻՄԵՅԻ) ՈՒ ՆՐԱ  
ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ\*

Հռիփսիմեն (Հռոռմ-սիմեն) թողեց աշխարհիս հաճույքներն  
ու թագավորությունն և քառասուն անրիծ կանանց հետ հանդեր-  
ձյալ աշխարհն վորոնելու յեկավ (յեկան) Հայոց յերկերը (սոմեխ-  
ների թագավորությունը): Նրանք յեկան Վաղարշապատ (Վաղար-  
շափաթ) քաղաքն՝ Տրդատ (Տրդադ) թագավորի հողը (յերկերը),  
այստեղ, ուր այժմ եջմիածնի (Եջմիածինի) յեկեղեցին ե գտնվում  
(կանգուն ե), և ուր հայոց (սոմեխների) պատրիարքի [աթոռա]-  
նիստն ե: Յեկ այս կանանց պատմությունը\*\* ստորև կդրվի, թե  
ինչպես անարդարացի կերպով նահատակվեցան իրենց ուղեկիցնե-  
րով հանդերձ: Այն կինը, վորը վիրապի (հորի) մեջ Գրիգորին  
հաց ու ջուր (ջուր ու հաց) եր հասցնում՝ հապաղելով՝ ժամկետն  
անց յեկավ և յերկար սպասելուց հետո նույնպես հաց ու ջուր  
(ջուր ու հաց) բերեց և վիրապի (հորի) մեջն իջավ, իսկ Գրիգորը  
վիրապից (հորից) ձայն տվեց. «Մեզ ինչո՞ւ մոռացար»: Նա այս-  
պես զեկուցեց. «Անիծյալ ե Տրդատ թագավորը, վորն այսպիսի  
անարդար և անիրավ գործ կատարեց, վոր ամբողջ այս յերկերն  
ամենից, ինչ վոր կատարվեց, զթությունից և կարեցությու-  
նից լաց ե (են) լինում»: Այն կանանց գործն ամբողջապես Գրիգո-  
րին զեկուցեց: Նա ևս հույժ վշտացավ և այն կնոջը ձայն տվեց.  
«տակավին կենդանի յե այն խոզը»: Բավական եր, վոր նա այս  
ասեր, յերեք որ անց Տրդատը խոզ դարձավ և գահընկեց յեղավ  
(գահից վայր ընկալ) և նրա ծառաներն (հպատակներն) ու իշ-

\* Բնագրում՝ ամբալի (հմմ. հայերեն «համբալ» բառը):

\*\* Նույնը:

\* Փարսադան Գորգիջանիձեյի մասին տես, ի միջի այլոց. Լ. Մելիքսեր-  
Բեկ, Հայերը վրաց հին գրականութեան մէջ,—«Գեղարութեան» VII, Տիգ. 1922,  
էջ 44—45:

Զարմանալի զուգադիպությամբ վոմն Փարսադան-բեր գորոշ դեր ե խա-  
ղում Վեպատանի պատմության մեջ XVIII դարու սկզբներին: Բայց այդ Փար-  
սադանը Տիկինացի յե ազգանունով՝ Ղուկանենց, վորին ոուս պատմաբան Ա. Սոլովյովը «Փօրսեան-եօք» ե անվանում. Տես. Ս. Соловьев, История России  
с древнейших времен, т. XVIII, М. 1868, стр. 31. Մեսոպ եպիսկոպոս [Տէր-  
Մովսիսան], Զաքարիա նկարչի ձեռագիրը և Դավիթ-բէկի մասին յիշատակա-  
րան,—«Բանքեր եջմիածնի Գիտական Խնստիտուտի», I—II, 1922, էջ 135. Լին,  
Խոջայական կապիտալ, Յերեվան 1934, էջ 265: Հետեւապես, այդ յերկու Փար-  
սադաններին չպետք է շփոթել իրար հետ:

պատմում [և] քարոզում: [Յեկ] բոլորը փառաբանեցին աստծուն՝ իբրև ստեղծողին, ու նրա սրբերին: Այս որը բոլորը սուրբ Գրիգորի ձեռոք մկրտվեցան: Յեկ ջրից դուրս գալով՝ բոլորը հարյուր քսան հաղար ելին, և բոլորը սպիտակ շորեր հագան: Սրանից հետո սուրբ Գրիգորը սկսեց յերկրներ շրջեր, ամեն տեղ շինել տվեց յեկեղեցիներ և քարոզությամբ [նոր] կրօնը ներմուծեց, մեռն տվեց [հայերին]:<sup>2</sup>

## [2.] ՀՐՈՄԻ ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (ԿՈՍՏԱՆՏԻԼԵ) ԹԱԳԱՎՈՐԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԱԼՈՒ ՈՒ ՆՐԱ (ՆՐԱՆՑ) ԳՈՐԾԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ\*

Տրդատի (Տրդադի) թագավորության տամնելոթ տարին լրանալուն պիս լուր (ամբավի) հասավ, վոր Հռոմի Կոնստանդին (Կոստանտիլե) թագավորը քրիստոնյացավ: Այս լուրը շատ դուր յեկավ Տրդատին (Տրդադին) ու Գրիգոր Աստվածաբանին (sic)\*\*: Յեկ Յերեղանի յերկրից (sic) վաթսուն հաղար մարդ յերեք տարվա պաշարով ու ոռնիկով, ձիով, զենքով ու շորով ապահովված իրենց հետն տարան Տրդատ (Տրդադ) թագավորն ու Գրիգորը մեծ ընծաներով հանդերձ՝ բազում գանձերով, ձիր ու պարզեներով (փեշքաշով), և գնացին Հռոմ (Ոհոոմ?) Կոնստանդին (Կոստանտիլե) թագավորի տեսության: Հենց վոր վերջինիս զեկուցին, վոր հայոց (սոմելիների) թագավորը ձեր տեսության ե (ե՞ն?) յեկել վաթսուն հաղար մարդով և Գրիգոր Աստվածաբանն (sic)\*\*\* ել առաջնորդում ե նրանց, հրաման յեղավ Կոնստանդին (Կոստանտիլե) թագավորից և Պետրոս (Պետրե) պապից՝ իրենք իրենց զորքով ընդառաջ գնան նրանց: Յերբ [յերկոքյան թագավորներն ու հայրապետներն] իրար տեսան, հույժ հավանեցին (սիրեցին) Տրդատի (Տրդադի) ու Գրիգորի հեղությունը և սրանց քրիստոնյանալով ուրախ ելին, քանի վոր վաթսուն հաղար մարդով յերեք տարի ժամանակով այսպես տքնել ելին մի տեսության համար. և ինչ աշխարհա հիմնավորվել ե, այսպիսի գործ ուրիշ վոչոք չի կատարել, վոր Հայքից (Սոմիիթից) վաթսուն հաղար մարդով Հռոմ գան քրիստոնեյունն ուժեղացնելու նպատակով: Յեկ

\* Բնագրում՝ տմբավի, հմմ, սույն հատորի եջ 89, ծանոթ.:

\*\* Ուղում ե ասել՝ լուսավորչին:

\*\*\* Տես նախորդ ծանոթ.:

ինամիյաբար և յեղբայրաբար յերդիցին և բազում թանկարժեք պարզեներ նրանց (հայերին) ել մատուցին: Վաթսուն հազար մարդկանց վեց ամիս հյուրասիրեցին: Ինչ վոր [հայերին] ուղում եյին, [յերբեք] մերժում չեյին ստանում. [ամեն ինչ] տալիս ելին նրանց (հայերին) անհաշիլ: Բազում գանձեր մատուցին Տրդատ [Տրդադ] թագավորին, և նմանապես սուրբ Գրիգորին մատուցին պատրիարքական զգեստն և զիմին դրին ականակուռ թագը, և ականակուռ խաչն ու գավազանն ել տվին ձեռին: Յեկ Կոստանդնուպոլսից (Կոստանտիլ-պավլեյից) հայսկույս [բոլոր կողմերում] պապը նրան իրեն փոխանորդ-պատրիարք ձեռնադրեց և չնորհեց նրան իրավունք ապաշխարանքի ու նղովքի, այնպես վոր ում թողություն տա, կապաշխարպի, և ումն [ել] ճշմարիտ դատաստանով նզովե, անիծյալ կլինի: Այսպես հարստացյալ՝ ճանապարհ գցեցին նրանց: Խաղաղ և ուրախ վերադարձան իրենց պետությունն, և ուրախություն ընկապ [նրանց] յերկրում: Բազմեցին իրենց գահի վրա [և] սկսեցին ճշմարիտ կերպով [կառավարել], յերկիրը [կերպալինեցին]. և հենց վոր յերկիրը խաղաղվեց, Տրդատը (Տրդադը) զորքն ու թագավորական տունը կարգավորեց. ապա ցանկացավ իր հոր արյան վրեծն հանել Արտաշրի (Արտաշելի) փոխարեն Շապուհ (Շափր?) թագավորից<sup>3</sup>:

## [3.] ԱՅՍՏԵՂ ՏՐԴԱՏ (ՏՐԴԱԴ) ԹԱԳԱՎՈՐԻ ԱՐԾԱՎԱՆՔՆ [ԻՐ] ՀՈՐ ԱՐՅԱՆ ՎՐԵԺՆ ՀԱՆԵԼՈՒ\* ԱՐՏԱՇՐԻ (ԱՐԴԱՇԵՐԻ) ՎՈՐԴԻ ՇԱՊՈՒՀ (ՇԱՓՈՒՐԻ) ՎՐԱ

Այս ժամանակ Արտաշրը (Արտաշերը) վախճանված եր: Նրա վորդի Շապուհին (Շահփուրին) թագավոր կացուցին: Տրդատը (Տրդադը) մեծ զորք ժողովեց, Շապուհի (Շահփուրի) դեմ յելավ և ավերեց նրա յերկիրն՝ ամայի դարձնելով քաղաքներն ու քաղաքելով բերդերը: Այս լուրը կուսակաները շտապով ծանուցին թագավորին, [այն ել] վոր Տրդատը (Տրդադը) մեծ զորքով հարձակվել ե ու ավերել յերկիրը: [Շապուհը] շտապեց, ամեն տեղից զորք ժողովեց և գնաց ընդդեմ [Տրդատի]: Յեկ հանեցին զորք յերկու կողմից և կազմեցին ուղմեր, նշանակելով աջակողմյան ու ձախակողմյան և առաջապահ ու վերջապահ [գնդեր]: Յեկ սկսվեց պայքար... Շապուհը (Շահփուրը) [ստիպված յեղավ] փախչել, իսկ

\* Բնագրում՝ վորոնելու:

Տրդատին (Տրդաղին) իրավամբ տրվեց [իր] հոր արյան [վրեժն] հանելն [ու] հաղթելը: Յեկ փախավ Շապուհն (Շահփուրն) և նրա զորքը. և հայոց (սոմեխների) զորքը հետամուտ յեղավ՝ ամենուրեք գրավելով բերդեր ու քաղաքներ: Յեկ Տրդատը (Տրդաղը) հետամուտ յեղավ մինչ Հնդկաստան նահանջող Շապուհին (Շափուրին): Յետեկից ընկան, և իրանի յերկրում ել վոչ մի տեղ չըմաց, վոր նա չգրավեր. և ամեն տեղ իր մարդկանց նշանակեց թագավոր ու իշխան, և ինքն իր աթոռանիստն (թախտն) վերադաշավ: Ապա նրա (Տրդատի) մոտ դեսպաններ յեկան Շապուհից (Շափուրից) աղաճանքով, բայց նա ունիշդիր չեղավ, և դեսպանները հուսահատ վերադաշան: Շապուհը (Շափուրը) հույսը կըտրեց և այլ հանապարհով, Կոնստանդին (Կոստանտիլ) արքային դեսպան ուղարկեց աղաջելու և շատ ձիր (նվերներ) ուղարկեց և նամակ գրեց, վոր միջնորդ հանդիսանա [նրա ու] Տրդատի (Տրդաղի) միջև և հաշտեցնի նրանց, վորպեսզի [Տրդատը] սրանից ել ավել չավերի նրա (Շապուհի) յերկիրը: Կոնստանդին (Կոստանդիլ?) արքան այսպես գրեց Շապուհին (Շահփուրին). «Յեթե դուք հաշտվել եք ուղում, պահ տվեք ինձ Դավիթ մարդարեյի թագը, վորը ձեր գանձարանումն ե պահվում, վորպեսզի նրա տեսակ մի թագ շինել տամ ինձ համար, և ձեր թագն ելի ձեզ կվերադարձնեմ: Յես իմ թագը նրա հորինվածքով պիտի շինեմ: Այս Դավիթ թագավորի թագն՝ առաջներում, յերբ Նաբուքորոնոսոր (Նոփոքալինե՞՞) Բաբելոնի\* արքան Յերուսաղեմն ավերեց, այնտեղ գտավ և նրանից հետո այն ժառանգությամբ իրանի արքաներն ունեցին»: Յերբ կայսեր պատասխանն ու թագ ինդրելը Շապուհին (Շափուրին) զեկուցին, վերջինիս այս դուր յեկավ, և նա վստահելի մարդու ձեռքով ուղարկեց այն թագը կայսեր: Կայսրը՝ տեսնելով թագը՝ չափազանց հավանեց այն, և հրավիրեց լավ վարպետներ, վորոնց ձեռք զցեց թագը և հրամայեց նրանց մի այսպիսի թագ շինել այնպես վոր վոչոք չկարողանա ասել վհրն և նոր և վորը՝ հին: Վարպետները սկսեցին շինել և այնպես շնորհքով շինեցին, վոր հին և նոր թագերը բերողի առաջն դրին և ասացին. «Քո բերածն ելի յետ տար»: Սա նորը վերցրեց և հինը թողեց: Յեկ Կոնստանդին (Կոստանտիլին) ել այս եր ուղում: Ապա [Կոնստանդինը] դեսպան ուղարկեց և Տրդատ (Տրդաղ) արքային ու Շապուհին (Շահփուրին) հաշտեցրեց:

\* Բնագրում՝ Բաղդադի: XVII—XVIII դ. դ. վրաց աղբյուրներում Բաբելոնի փոխարեն սովորաբար Բաղդադ է գործածվում:

#### [4.] ԱՅՍՏԵՂ ՏՐԴԱՏ (ՏՐԴԱՂ) ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՀՆ ՅԵՎ ՆՐԱ ՎՈՐԴՈՒՌ ԽՈՍՐՈՎԻ՝ ԹԱԳԱՎՈՐԱՆԱԼԸ

Տրդատը (Տրդաղը) վաթսուն վեց տարեկան վախճանվեց: Նրա վորդին Հոռմի (Հոռոմի) արքայի աջակցությամբ դարձավ թագավոր. իննը տարի թագավորեց: Շարդիզը (sic) սրա ձին եր և Շիրինն ել սրա աղջիկն եր. զավակները փոքր մասցին: և Խոսրովը վախճանվեց և թագավորում եր նրա քույր Մահրանուն (Մհրանուն) (sic): Շարդիզի և Մահրանուի ու Շիրինի պատմությունն ու գործերը, [նաև] իրանի Խոսրով թագավորի Շիրինի վրա սիրահարվելը տես ներքեւ: իրանի թագավորների [ցանկ]ում դասված է (գրում ե). Մահրանուն (Մահ բանուն) Տրդատի (Տրդաղի) աղջիկն ե և Խոսրով յերկրորդ թագավորի քույրը: Յեկ Խոսրովից հետո նրա վորդի Տիրանը (Տերանը) թագավորեց: Սա ևս յերկու վորդի թողեց. մեկի անունն եր Արշավիր (Արշվիեր) և մյուսինը Վաղարշակ (Վաղար շափաթ): Արշավիրն (Արշվիերն) [իր] հորից հետո թագավորեց. իշխեց քսան տարի: Սրանից հետո սրա վորդի Պապին Ներսես հայրապետը\* թագավորեցրեց, [և Պապը թագավոր գարձավ] նրա (Ներսեսի) վկայությամբ: [իսկ Պապը] սպանեց մեծն Ներսեսին՝ սուրբ Գրիգորի ազգականին: Սա (Պապը) վատարարու յեր: [Ներսեսը] սրան արգելում եր [վատ բաներ անել], և նա չեր հրաժարվում այդ անելուց: Յեկ լավ բաներ սովորեցնելու համար [Պապը] Ներսես պատրիարքին թույնով մահացրեց: Հենց վոր Հոռմի մեծ արքա Թեոդոսը (Թեօվաթորոսը) լաց այս լուրը՝ պատրիարքին թույնով մահացումը, ձերբակալել տվեց հայոց (սոմեխների) արքային և նրան ել սպանել տվեց և արքայությունն Արշակունյաց շառավիր Վարպետատին (Վարագային) տվեց: Սա (այսուեղ) Վարպետատը (Վարագայն) յոթը տարի իշխեց հայոց (սոմեխների) յերկրում և գնաց կայսեր մոտ ու իրանի արքա Շապուհի (Շափուրի) հետ սկսեց բանակցել՝ այսպես ասելով. «Յեթե ձեր քրոջն ինձ կտաք [ի կություն], յետ ել [ձերը կլինեմ] և իմ յերկիրն ել ձերը կլինի: Վոմանք ծառաներից (հպատակներից)՝ յերկմիտ լինելով՝ այս լուրը ծառուցին կայսեր: Վերջինս զորք կանչեց, և խաբուսիկ կերպով տարան Վա-

\* Բնագրում՝ «հաիրապիտ» բառն ե, վորը հայերենի վրացերեն տրանսկրիպցիան և Տիգիսի հայերի արտասանությամբ:

բազգատին (Վարազային) և սպանեցին: Արա սերունդն ելին յերեք յեղայիներ. սրանց իշխեցրեց. մեկի անունն եր Պապ, մյուսինը Արշակ, յերրորդինը Վազարշակ (Վազարշաբաթ): Այս պահին Հռումի արքա Թեոդորը (Թեվաթորսը) վախճանվեց: [Յեկ] մինչ այս հայոց (սոմեխների) արքաներն ու կաթողիկոսները Տրդատից (Տըրդադից) և Գրիգորից հետո Հռումի արքային ու պապին հսազանդ ելին: [Իսկ] նրանից հետո, ինչ Թեոդոր (Թեվաթորս) կայսրը վախճանվեց, իրանի արքայի հրամանով իշխեցին [Արշակունիք]: Թեոդորից (Թեվաթորսից) հետո հայոց (սոմեխների) յերկրում իշխեց Շապուհը (Շափուղը)՝ Արշակունյաց շառավիղը:

## [5.] ՅԵՐՐՈՐԴ ԽՈՍՔՈՎԻՆ ԻՇԽԵՑՐԻՆ

[Այս Շապուհ] կարձ ժամանակ տիրեց և սա ել սխալմունք գործեց, և սրան ձերբակալել տվլեցին ու գերի տարան: Յերբ Շապուհին (Շամփուրին) իշխեցրին, այն ժամանակ իրանի արքա յերրորդ Շապուհը (Շամփուրը) վախճանվեց, և նրա յեղայրը Զաքիրին (sic) թագավորեցրին. և սա ել իր վորդի Շապուհին (Շահփուրին) թագավորեցրեց հայոց (սոմեխների) յերկրում. վեց տարի կացավ Զաքիրին՝ իրանի արքան, ապա մեռավ: Նրա վորդին՝ հայոց (սոմեխների) արքան՝ հենց վոր լսեց իր հոր մահվան մասին, թողեց հայոց (սոմեխների) թագավորությունն և գնաց՝ [իր] հոր գահի (թափտի) վրա բազմելու (թագավորելու). և հայոց (սոմեխների) տերությունն յերեք տարի անտեր եր: Յեկ Սահ[ա]կ պատրիարքն իրանի արքայից ինդրեց հայերի (սոմեխների) համար թագավոր [Աշանակել]: Շապուհը (Շափուրին) իր վորդի Վահրամին (Վարամին) հայոց (սոմեխների) տեր նշանակեց (տվեց), սակայն հայոց (սոմեխների) իշխանները՝ չընտելանալով նրա հետ՝ չուղեցին նրան ու վոնդեցին: Կրկն մնաց հայոց (սոմեխների) տերությունն անտեր՝ յերեսուն տարի: Արշակունյաց հարստությունը (տոհմը) բնածինջ յեղավ, [նաև] նրանց թագավորությունը: Մինչ այս հայերի (սոմեխների) և վրացիների (քարթվելիների) վրա թագավորում ելին Արշակունյաց շառավիղները, և այդ ժամանակ հայոց (սոմեխների) քրոնիկոնն եր համարվում (գրում) յերեք հարյուր յերեսուն և վեցն՝ Արշակունիներից հետո: Արշակունիներից հետո [ամբողջ յերկիրն] այս ծովից մինչ այն ծովը Բագրատունիները գրավեցին: Են գլխից Աշոտը (Աշոտանը) տիրեց, հինգ տարի լսվ տիրեց և վախճանվեց: Ապա տի-

րեց Աշոտի (Աշոթանի) վորդի Սմբատը (Սունբատը). սա քսան և չորս տարի տիրեց, և սա ել վախճանվեց: Յեկ սրա յեղբորորդի Աշոտը (Աշոթան) տիրեց. սա յոթը տարի տիրեց, և սա ել վախճանվեց: Ապա տիրեց Աշոտի (Աշոթանի) յեղբայր Սբասը (Աբազը); և սա քսան և չորս տարի տիրեց: Յեկ սրա տերության [որոք] շենացավ հայոց (սոմեխների) տերությունը: Յեկ սա շինեց Սանահնի ամենասրբունու տաճարն և այլ շատ բարություն և վողորմություն արավ: Յեկ սրանից հետո սրա վորդի Աշոտը (Աշոթանը) տիրեց, և սա ել բարփոք տիրեց քսան և հինգ տարի, ապա վախճանվեց: Յեկ սրա վորդի Սմբատը (Սունբատը) տիրեց, և տիրեց տասն և յերեք տարի ու վախճանվեց: Յեկ սրանից հետո սրա քեռորդի Մուշեղը (Մուշիկը) տիրեց, տասը տարի տիրեց և մեռավ: Սրա վորդի Աբասը (Աբազը) տիրեց, տասնումնեկ տարի տիրեց, և վախճանվեց: [Յեկ տիրեց]... և ապա վախճանվեց: Յեկ տիրեց Սմբատի յեղբայր Գագիկը (Գոգին). սա տիրեց տասնեւերկու տարի և վախճանվեց: Յեկ սրա վորդի Սմբատը (Սունբատը) տիրեց հայոց (սոմեխների) քրոնիկոնի չորս հարյուր վաթսուն և չորսին<sup>6</sup>: Մինչ այս վերոհիշյալ տերերը հայեր (սոմեխներ) ելին: Ամենից առաջ Քարթլիի տեր (sic) իվանեն վրացի գարձավ, և տիրեց յոթը տարի, և վախճանվեց. և վրացիք իրենց կրօնի ծիւսկատարությամբ հանձնեցին նրան հողին: Յեկ սրա վորդի Գեորգիկին (Գիորգիկին) տեր գարձրին, և սա լավ կառավարեց յերկիրը վրաստանի և իրենն ել: Սա իր կենդանության որոք իր վորդի Դավթին տվեց [յերկիրն] և սա շինեց շատ տաճարներ և վանքեր, և կոչվեց Դավիթ Շինող. քսան և հինգ տարի թագավորեց, և վախճանվեց և իրեն իսկ [ձեռա]կերտ Խախուլի [աստվածածնա] Գելաթում թաղվեց: Յեկ սրա վորդի Գեորգը (Գիորգին) թագավորեց, և ուր ել սրա հայը շենք եր սկսել կառուցել և անավարտ թողել՝ տաճարներ թե վանքեր, սա վերջացրեց և նշանակեց յերեցներ-վարդապետներ... և վախճանվեց: Յեկ սրա վորդի Դեմետրը (Դեմետրեն) տիրեց, և սա շինեց Մետեխի տաճարը... Յեկ սրա վորդի Դավիթը տիրեց՝ հայոց (սոմեխների) քրոնիկոնի յոթը հարյուր քառասուն չորսին<sup>7</sup>: Մինչ այս ժամանակ հայերից (սոմեխներից) հետո տիրում ելին վրացիության մեջը (sic). յերեսն ուժեղ թշնամուց շատ անգամ (sic) անտեր են մնացել և ցիր ու ցան յեղել՝ կազմելով յոթն [իշխանություն] (?): Վերոհիշյալ թագավորներն յերեք հարյուր քսան տարի յեն տիրել: Մինչ հայոց (սոմեխների) քրոնիկոնի յոթը հարյուր քառասուն յերկու թվա-

կանը<sup>8</sup> վերոհիշյալ տերերն են տիրել։ Սակայն սրանցից հետո բաժանման առաջ և հետո ել շատ Բագրատունիներն են տիրել, վորոնց բոլորի գործերն ու անուններն և ծագումն (հայր և վորդիությունն) և նրանց ժամանակն և նրանց հայրերի անունները մասամբ չեմ գտել և մասամբ ել, ինչ գտել եմ, ստորև կդրվի աստուծով<sup>9</sup>։

## [6.] ՓՐԱՆԳՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԴՈՒՏՏՐ ՀՈՒՓՍԻՄԵՅԻ (ՀՈՌՈՄ-ՍԻՄԵՅԻ) ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՍՈՒՐԲ ՆՈՒՆԵՅԻ (ՆԻՆՈՅԻ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ<sup>10</sup>

Ավելի վերեն ե [այս] պատմությունը<sup>\*\*</sup>, բայց այստեղ ել վոշնչ չի խանգարի [գրել], այն պատճառով, վոր նախ մեծն արքակայսեր դստեր Վաղերիս (Վեղեթո) թագուհուն ենք հիշում, նրա բարիքներն ու աստվածամբությունը ... [վորը] Պետրոս առաքյալի քարոզչությամբ քրիստոնեացավ, յեկավ Յերուսաղեմ աղոթելու... Սուրբ Հակոբի յեղորդից ստացած ուներ կենարար խաչի (Ճշմարիտ փայտի) նշանը, [վորը] հասցրեց Հոռմ (Հոռոմ), և այստեղ մնաց, ուր նրա վորդիք ու սերունդը հասան մինչ սուրբ Հոփիսիմեն (Հոռոմ-սիմեն): Այս Վաղերիս (Վեղաթո) թագուհին քրիստոնյաներից եր ծնված։ Սա թողեց հարմանությունն և յերկրիս բարիքներն, ու սքեմ հազար և խոռվեց անցողական [կյանքից], և նրա վոգին դիմեց կանանց ու կուսանց, նամանավանդ ամենասրբունի Մարիամին ու նրա յեկեղեցուն։ Յեվ այստեղ նրան հանդիպեց, իբրև ծնող մայր, Գայանեն՝ աստվածային գործոց ուսուցանող կինը...։ Այս ժամանակ Հոռմում (Հոռոմում) նըստած եր Դիոկետիանոս (Դիօքակլիստիանե) կայսրը, [վորը] կոստացած եր։ Սա ամուսնանալ (կին ուղել) ցանկացավ։ Կանչեց նկարիչներն, վորոնց իր թագավորության [զանազան կողմերն] ուղարկեց։ և ամեն տեղ այսպիսի հրաման գրեցին. «Ով վոր անըրիծ աղջիկ ունենա, ցույց տվեք, վորպեսզի այս նկարիչներն այսպես նրանց տեսքն ու ամբողջ կազմվածքը պատկերագրեն» [և] վորպեսզի իբրև կենդանի յերևա, վորին հարսնացու յենք ուղում։ Ուր ել գնացին, թագավորի հրամանը կատարեցին, և ամբողջ յերկիրն ու քաղաքները շրջեցին, յեկեղեցում, տանը և դաշտի

\* Բնագրում՝ ամբազի. Հմմ. եջ 89, ծանոթ.\*\*

\*\* Նույնը.

վրանումը նստածներին դիտեցին. և ով վոր աղջիկ ուներ, ըոլուրին կենդանի պատկերագրեցին և վորոնք՝ անբիծներն՝ անցողական կյանքն զիջեցին և աշխարհից հեռացան՝ աղերսելու ամենասրբունու տաճարին, սրանց յեկավ պատկերագրեցին. և վոր տաճարուն ել սուրբ Հոփիսիմեն (Հոռոմ-սիմեն) մտած եր, նույն տաճարի գուռն կոտրեցին։ Հոփիսիմեյին (Հոռոմ-սիմեյին) ամբողջ կազմվածքով և գեղեցկությամբ իբրև կենդանի պատկերագրեցին և ուղարկեցին թագավորին։ Թագավորը հենց վոր տեսավ Հոփիսիմեյին (Հոռոմ-սիմեյին), վորը աշխույժ և գեղեցիկ եր, չափազանց դուր յեկավ։ Հրաման արձակվեց թագուհու կայարանը բերել Հոփիսիմեյին (Հոռոմ-սիմեյին) և թագավորի հարսանիքն անել։ Այս լուրը ծանուցին Հոփիսիմեյին, և նա կանչեց՝ իբր իր ծնողին՝ իր դայակ Գայանեյին և նրա դաստիարակներին (վարդապետներին) ու կից գտնվողներին<sup>10</sup>:

## [7.] ԱՅՍՏԵՂ ՀՈՒՓՍԻՄԵՅԻՆ (ՀՈՌՈՄ-ՍԻՄԵՅԻՆ) ԽՐԱԾ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՏԱԼԸ

[Հոփիսիմեն] դայակով ու դաստիարակով և ուղեկիցներով հանդերձ այստեղից փախավ (փախան) և հասավ (հասան) Յերուսաղեմ։ Յեկ կենարար խաչի (Ճշմարիտ փայտի) նշանը նակախած ուներ վզից և կանգ առավ այստեղ, ուր [Քրիստոսի] սուրբ գերեզմանն եր։ Սրանք ևս գնացին համբուրելու այն և աղոթելու. շատ զոհեր ընծայեցին և աղաչում եյին իրենց վզիների փրկության մասին, վորպեսզի սատանայի վորոգայթից պահպանվեն և ծածկած մնան։ Գնացին Գեթսեման (Գեսամանիա), դայակ Գայանեն սուրբ Հոփիսիմեյին (Հոռոմ-սիմեյին) ձեռից բռնեց և յերկրպագեց, և հողի վրա ընկավ, և զոհաբերեց, և սկսեց աղոթելաղերսել կանանց մեջ գոված ամենասրբունի Մարիամին, [և] արտասվալից աչքերով ու ծնկաչոք աղաչեց նրան (Մարիամին). «Հոփիսիմեյին (Հոռոմ-սիմեյին) պահիր քեզ ծառա, և վզոքի չզիջես՝ վոչ հզոր արքաներին և վոչ ել գայթակղիչ սատանային. այս՝ մեծ արքայի գուստին՝ անբությամբ քո հարսն ու ծառան դարձրու»։ Նույն գիշերն ամենասրբունի Մարիամն յերազում յերեաց և այսպես հրամայեց. «Այստեղից գնացեք Միջազգետք յերկիրն՝ Ասորիք (Ասորիստան), այնտեղ քաղաք Ուռհայում (Հոռոսապերում?) կտավի վրա պատկերագրած ե Հիսուս Քրոստոսի յերեսն, [այն ժամանակ], յերբ հայոց (սոմեիների) արքա Սրբա-

ըը (Աքբարը) ստրկության եր կարոտ և այն կտավի վրա յերեւ-  
սը նկարել տվեց»: Հենց վոր այս յերազը տեսան, գնացին Ասու-  
րիք (Ասորիստան), տեսան կտավի վրա անձեռագործ պատկերը,  
հայտնապես յերկրագեցին, շատ զոհաբերություն արին և այն-  
տեղ ել ամենասրբուհուն տեսան յերազում: [Ամենասրբուհին] հրա-  
մայեց. «Այստեղից գնացեք հայոց (սոմեխների) պետությունն,  
ուր սուրբ Թաղենուն (Թաթենուն): Հիսուս Քրիստոսի աշակերտն՝ ե  
թաղած»: Այստեղից (Ուռհայից) յեկան և հասան Վարագա (Վա-  
րաքի) բարձր սարը. գեղի արևելք այն սուրբ սարից տեսան  
(տեսավ) կենարար խաչի (ճշմարիտ փայտի) նշանը<sup>11</sup>. [ամենասրբ-  
ություն] դարձյալ յերևաց յերազում և հրամայեց. «Յես ցանկացա  
կանդ առնել այստեղ. դուք գնացեք. աստված ձեզ կառաջնորդե»:  
Սրանցից ծերերն ու տկարներն այստեղ կենարար խաչի (ճշմարիտ  
փայտի) նշանին ապավինեցին: [Իսկ] Հոփիսիմեն (Հոռոմ-սիմեն)  
ու Գայանեն յերեսուն և վեց քահանաներով ու վարդապետներով  
և անքիծներով ու ուղեկիցներով հանգերծ հասան Վաղարշապատ  
(Վաղարշաբաթ) քաղաքն, ուր այժմ Եղմիածնի (Խեչմիածինի)  
տաճարն ե կանգուն Յերևանյան յերկրում. այստեղ մի այգու  
հնձանին [կից] տանն իջան. սրանցից վոմանք մի քիչ ուղունք ու  
մանրուք ունեյին հետն, հաց առնելու գնացին, առան և բերին  
ու կերան, քաղցից ազատվեցին: Այսպես թե այնպես, առաջվա-  
պատմությանը\* հասանք, նույն տեղը հասանք: Դիոկետիանոս  
(Դեվակիլիտե) արքան իր ամուսնության գործը կարգադրեց, և  
թագավորներին ու իշխաններին մեծապես զարդարելով ուղարկեց,  
վորպեսզի Հոփիսիմեյին (Հոռոմ-սիմեյին) հարսնացու բերեն: Յերբ  
գնացին այստեղ, այլև չանդիպեցին նրան: Տեղացիները զե-  
կուցին. «Վաղուց ե, ինչ այստեղից գնացին»: Այս լուրը ծանու-  
ցին Դիոկետիանոս (Դեվակիլիտիանե) արքային, [վորը] չափա-  
զանց ցավեց և բարկացավ, և ամեն տեղ գիր ու մարդիկ թըսց-  
րեց նրան վորոնելու, և այլ թագավորներին ու արքաներին յեկա-  
նամակներ գրեցին այսպես. «Այս կանայք մեզանից գնացին. ում  
զավառն (թեմն) ել մասնեն, մեղ մոտ ուղարկեցեք»: Յեզ մի  
համակ [ել] Տրդատ (Տրդադ) արքային գրեցին: Սրանք (հայերն)  
և կազմակերպեցին վորոնում ու հարցուփորձ: Յեզ քաղաք  
վաղարշապատի (Վաղարշաբաթի) ծայրի մի այգու հնձանին [կից]  
տանն եյին իջել: Վորոնողները տեսան Հոփիսիմեյի (Հոռոմ-սի-

մեյի) գեղեցկությունն ու սքանչելիությունը, զարմացան և նրա  
մեծ գովասանքը Տրդատ (Տրդադ) արքային զեկուցին: [Տրդատն]  
ուրախացավ և սա յեկա նրան իրեն հարմացու [ունենալ] ցան-  
կացավ: Այստեղ Տրդատ (Տրդադ) արքան հարսանիքի պատ-  
րաստվեց [և] հրամայեց իր նախարարներին ու գործականներին  
(վեղիբ-վերիներին) ու արքունականներին գնալ Հոփիսիմեյի  
(Հոռոմ-սիմեյի) մոտ:

**[8.] ԱՅՍՏԵՂ ՓՐԱՆԳՍԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԴՈՒՍՏՐԻ ՍՈՒՐԲ  
ՀՈՒՓՍԻՄԵՅԻ (ՀՈՐՈՄ-ՍԻՄԵՅԻ) ՅԵՎ ՏՐԴԱՑ (ՏՐԴԱԴ)  
ԹԱԳԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ\***

Յերբ Հոփիսիմեյի (Հոռոմ-սիմեյի) չքնաղությունն ու գեղեց-  
կությունը Տրդատին (Տրդադին) զեկուցին, սա հրամայեց, վոր  
թագավորներն ու իշխանները զան և հարմացուի զարդարանքը  
մատուցին և մեծամեծների մայրերն ու կանայք առջևից ընթա-  
նան, մեծ պատվով հարմացուին տունը բերեն: Սրանք այսպես  
եյին կարծում, վոր որիորդին դուր կգա, ավետարեր ուղարկեցին  
[հայտներու], վոր՝ «Թագավորն իր յերկրի թագունությունը ձեզ  
մատուցեց, այդ հնձանից դուրս արի և թագավորի տունը գնա՞  
դահի (տախտի) վրա նստիր ու թագ դիր գլխիդ»: Հոփիսիմեն  
(Հոռոմ-սիմեն)<sup>12</sup> լսելով այս խոսքերը՝ լաց յեղավ և սկսեց աստ-  
ծուն աղաչել. «Դու ստեղծեցիր ինձ. ուրիշներին մի տար ինձ. այս-  
քան իմ աշխատանքն ու հոգսերն ապարդյուն մի համարիր»: Այս  
աղերսանքի և աղոթքի մեջն եր [Հոփիսիմեն], յերբ թագավորից  
ուղարկած բազում այլ և այլ թանկարժեք գործվածքներ, վոսկի,  
արծաթ, ակներ և մարգարիտներ մատուցին մի մասն որիորդին  
և մի մասն՝ ուղեկիցներին: Առավել լաց յեղավ Հոփիսիմեն (Հո-  
ռոմ-սիմեն), սկսեց գլխին վայ տալ և դիմեց աստծուն լացուկո-  
ծով ու աղերսանքով: Զայն լսեց յերկնքից. «Մի վախիր, յես քոնն  
եմ և դու իմն ես, զորացիր»: Յերկնքի այս ձայնը թագավորն ել  
լսեց և զորքն ել և բոլորն յերեսի վրա վայր ընկան և վուանք  
փախան, գնացին ու թագավորին զեկուցին. «Վոչ ձեր ուղարկածը  
հագավ, և վոչ ել յեկավ ձեզ մոտ»: Թագավորը բարկացավ և հրա-  
մայեց. «Գնացեք թրեկելով բերեք, քանի վոր հոժարակամ չի  
գալիս»: Գնացին և ուժով բերին: Յեզ նրա ուղեկիցները լացու-

\* Բնագրում՝ ամբավի: Հմմ. եջ 89, ծանոթ.\*:

\* Բնագրում՝ ամբավի: Հմմ. եջ 89, ծանոթ.\*:

կոծ բարձրացըին ու սկսեցին գլխին վայ տալ հողի վրա ընկան և աղաչեցին աստծուն ու ոգնություն խնդրեցին Հիսուս Քրիստոսից. «Ազատի Հոփիսիմեյին (Հոռոմ-սիմեյին), թագավորություն և բարիքներ չցանկացողին, վորը քեզ ծառայելու յեկավ այս ոտար և անհայտ՝ աղքատ յերկիրը. հզոր և անորեն արքայից ազատիր»: Տրդատն (Տրդադն) որիորդի մոտ մտավ սենյակը: [Իսկ] ովքեր ել մեջն եյին, դուրս վոնդվեցին: Յեկ հարսանյաց ձայները բարձրացըին, սկսվեց գոռում-գոչում և յերգեցողություն ու յերածշտական գործիքների ձայնակցություն, ուրախություն և խաղ: Յեկ արքան գգվելու փաթաթվեց որիորդին, ուզում եր համբուրել: Որիորդն յետ քաշվեց: [Թագավորը] նրան բռնեց, դժվարացավ, ինն ժամ մարտնչում եյին: Ոգնականությամբ աստծո թագավորը հոգնեց: Իսկ որիորդը նրան անձնատուր չեղավ: Այսպիսի ուժեղ և անվեհեր մարդն, ինչպիսինն եր, վորպես ամենքը գիտեն, Տըրդատը (Տրդադը), վորից վորքան քաջարի և անվեհեր հզոր մարդիկ են ծեծվել, այժմ Հոփիսիմեյից (Հոռոմ-սիմեյից) նեղվեց աստծու ուժով: Արքան դուրս յելավ և կանչեց որիորդի դայակ Գայանեյին, վորպեսզի սա հանգստացնե որիորդին, վոր ամուսնանա արքայի հետ: Գայանեն գնաց և արքայական ննջարանի դրանը նստեց [Ա] Փրանկերեն լեզվով սկսեց խոսել որիորդի հետ: Տրդատն (Տրդադն) այնպես եր կարծում, իբր թե հանգստացնում: Ե իր հետ ամուսնացնելու համար: Իսկ Գայանեն ասում եր նրան (Հոփիսիմեյին). «Յերանի քեզ, վորդյակ Հոփիսիմե (Հոռոմ-սիմե), վոր Հիսուսի վորդի յես հիշվում և ամենասրբուհի Մարիամին հյուր ես լինում: Յերանի քեզ, վորդյակ, վոր սրբությամբ սընվեցիր: Յերանի քեզ, վորդյակ, վոր անցողական արքայությունը զիջեցիր և մեծ համբերությամբ թողիր գահ (տախտ) [Ա] պսակը, հեռացար մերձավորներից ու ազգականներից և չցանկացար այս աշխարհի բարիքները՝ Հիսուս Քրիստոսի համար: Զորացիր, դրախտում Հիսուսից կորհնվես»: Այլապես ել [աստված նրա] լայն սիրտըն ամրացրեց: Թագավորը մի մարդ ուներ, վորը Փրանկերեն լեզուն գիտեր. ինչ վոր Գայանեն Հոփիսիմեյին (Հոռոմ-սիմեյին) ասում եր, բոլորը լաւ եր [Ա] ամեն ինչ թագավորին զեկուցեց. «Դուք այս կնոջը (Գայանեյին) բերիք, վորպեսզի որիորդին խաղաղացնե. սա ավելի յեկս ամրացրեց նրան»: Թագավորը բարկացավ և դուրս թրեել ու ատամերը փշել տվեց Գայանեյին, վորին ուրիշ տեղ տարան. իսկ թագավորը նորից որիորդի մոտ մտավ և ձեռները ձգեց գգվելու: Բայց որիորդն ինչպես առաջ,

այժմ ել ել ավելի ընդդիմադրում եր. ցերեկվա ինն ժամն անցանելուց հետո մինչև գիշերվա ժամի յերեքը [նրանք] մարտնչում եյին, թագավորի շորերն ամբողջ պատառուտեց, մերկացրեց: Ապա որիորդն անցավ գոնով և գնաց այն այգին, ուր կանգ եր առել, բարձր ձայնով իր ուղեկիցներին կանչեց. «Ուրախացեք, սուրբ մայրեր, աստծո ուժով հաղթահարեցինք կարող և հզոր թագավորին»: Նաև շատ ուրիշ սրտառուչ խոսքեր ասաց, և հեռանալով նրանցից՝ մի բարձր ժայռի վրա բարձրացավ և լացովկոծով ու ծնկաչոք սկսեց աստծուն աղաչել: Ինչ վոր նա աստծուն գանգատվեց և խոստվանեց, բոլորի գրի առնեն անհնարին ե: Նա աղաչում եր իր հզոր համար և տակավին ծնկաչոք եր, յերբ թագավորի գահիներն յեկան և անվայել վերաբերվեցին դեպի Հոփիսիմեն (Հոռոմ-սիմեն), շատ ծեծեցին և քնքույշ ձեռներն ու վոտները մազե պարանով կապեցին և նախ և առաջ լեզուն կտրեցին և մարմնից սքեմը պատառուտեցին և յերեսով հողին զարկեցին, չորս տեղ ցից դրին և նրաց վրա ձեռներն ու վոտները կապեցին, շուրջը կրակ վառեցին՝ նրան, ով իր որում վարդի տերեկն անգամ չի գիպել և [մարմնի] արտաքո մասերն այրեցին: Սրանից ավել ել վոչինչ չեր ասում. «Մարիամի վորդի, ոգնիր այս ծանր տանջանքներում կարելցությամբ առ իմ յերիտասարդությունը: Հոգիս պարզեցիր ամենասրբուհուն՝ ձեր մորը: [Անեղ] դատաստանի որը կատարվելիք տանջանքը հատուցիր այստեղ»: Այսպիսի բաներ ասաց և վախճանվեց: Մինչ նա հոգին կավանդեր, վորը ձղեցին և աչքերը հանեցին: Հենց վոր հոգին իր տիրոջը հանձնեց, մարմնը պատառապատառ արին: Լացով և գլխին վայ տալով յեկան նրա ուղեկիցները: Ուղում եյին սուրբ և նահատակ Հոփիսիմեյի (Հոռոմ-սիմեյի) մասունքը մի տեղ հավաքեյին և գերեզմանին հանձնեյին. յերեսուն յերկու սուրբ կանայք և անբիծ որիորդներ եյին նրանք: Յեկ սրանց ել զարկեցին: Յեկ մեծ ուրախությամբ նահատակվեցին: Սրանց [Աս] կոտորեցին և սրանց միսը շներին շպրտեցին: Յեկ շները վոռնոց սկսեցին ու չմոտեցան, և փախան ու այն քաղաքից հեռացան: Նահատակուհներն իրենց սքեմով յերեսները հողին ընկած եյին: Մյուս որը դայակ սուրբ Գայանեյին իր յերկու ընկերներով դուրս հանեցին ձախ կողմն [Ա] ընկերների հետ միասին բազում տանջանքով սրանց ևս նահատակեցին: Սրանցից յերեք քահանա [Ա] մեկ կին՝ սուրբ նունեն (Նինոն) փախուստի դիմեցին: Նունեն (Նինոն) գնաց Քարթլի, [ուր] և տարածեց քրիստոնեյությունն և Միհրան (Միրիան) թա-

գավորի յերեք որպա ննջեցյալ վորդուն կենդանացրեց: Նմանապես նունեյից (Նիսոյից) Գորգասալությամբ մկրտվեց Վախտանգը (sic): ... [Յեկ] այս[պիսի] հրաշագործությամբ քրիստոնեացան Գիւանի ծովից սկսած մինչ Արիազղը (Արիազղեթ). Հավատացին [միմիայն] դիդոները, [վորոնք] տեղահան յեղան Արմազից (sic) և դեպի Յալբուղի բարձր սարը գնացին և ամուր տեղում բնակվեցին: Յեկ յերբ Տրդատ (Տրդադ) թագավորը խոզ դարձավ՝ սուրբ Հոփիսիմեյին (Հոռոմ-սիմեյին) նահատակելու պատճառով, Գրիգոր Աստվածաբանն (sic)\* Արաքսի (Արագի) ափին [Խոր]-Վիրապի վանքումն եր: Իբրև գերի՝ նրան այնտեղից Տրդատի (Տրդադի) ոգնության Վաղարշապատ (Վաղարշաբաթ) քաղաքը բերին: [Գրիգորը] ձայն տվեց թագավորին, [վորը] խոզ եր դարձած ու տասն և հինգ որ մնում եր իբրև խոզ: Զղջաց իր գործերը: [Իսկ] Գրիգորը նրան որհնեց, [և] նա (Տրդատը) մարդ դարձավ՝ առաջվանից ավելի լավ, և քրիստոնեացավ՝ [ինչպես] ինքն, [նույնպես] և նրա [ամբողջ] յերկիրն ու զորքը: [Գրիգորը] վեր յելավ և դեկուցեց թագավորին. «Քանի վոր այսպիսի անարդարացի կերպով կոտորեցիր [այն]<sup>1</sup> աստծուն ծառայելու համար իշխանությունն ու յերկրի բարիքները զիջող՝ անբիծ սրբերին ու նրանց ուղեկիցներին, պարտ ե քեզ, վոր դու նահատակության ծիսակատարությամբ նրանց հանձնես գերեզմանին և վկայից տաճար կառուցես»: Թագավորին [այս] դուր յեկավ և Հոփիսիմեյին (Հոռոմ-սիմեյին) իր դայակով և ուղեկիցներով հանդերձ իրենց հին սքեմով [հրապարակ հանեցին] ու նրանց թաղման կարգն կատարեցին և նույն հնձնում թաղեցին ու վրայից մենաստան շինեցին, [վորն] այժմ ել կա. [և] յեպիսկոպոսներ և այլ աստիճանավորներ ու ծառաներ նշանակեցին այնտեղ, և շատ գյուղեր շնորհեցին: Յեկ պարտ ե քրիստոնյաներին, ով վոր կարողություն ունենա, նրա (Հոփիսիմեյի) նահատակության որը նրանց (Հոփիսիմյանց) գերեզմանի մոտ գնա աղոթելու, համբուրե այն և զոհաբերություն անի և վորորմություն տա: Սակայն [այն որվանից], ինչ մահմեղականները (մուսուրմանները) քրիստոնյաներից իշխանությունը խլեցին, պարզեած գյուղերը խլեցին: Բայց և այնպես, սրանց գերեզմանի վրա քրիստոնյաները գալիս են աղոթելու, և զոհաբերություն են անում, և մոմի ու ինկի գին մուծում, այնտեղ ապրող վանականներին ու աշխարհականներին, սքեմավորներին և ծառաներին ապրուստ տալիս՝ ով ինչի տեր ել ե...»:

\* Ուղում ե ասել՝ Լուսավորիչը: Հմմ. վերև՝ եջ 92, ծան.\*\*:

[9.] ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՅ (ԲԱԳՐԱՏՈՆՆԵՐԻ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ\*,  
ՎՈՐ ՀԱՅՈՑ (ՍՈՄԵԽՆԵՐԻ) ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵջ Ե  
ԳՐՎԱԾ. ՆՐԱՅՑ ԳԱԼԵ ՎՐԱՍՏԱՆ

... Յոթն յեղբայրներ Յեկից սերնդից, վոր յեկան Փիլիստինացով (Փիլիստան) յերկրից Ռաքիելի (Արաքիելի) հետ միասին, փոխեցին իրենց անունները. մեկն անվանեցավ Սուշեղ (Սուշեղ), յերկբորդը՝ Բագրատ, վորը Բագրատունյաց (Բագրատոնյաց) [նախա]հայրն ե, յերրորդը կոչվեց Աբգար (Ապգար): [Այս Ռաքիելը] մեկին տարավ տան փեսան իրեն մոտ. [Իսկ] սրանցից յերկուսին փեսայացը հայոց (սոմեխների) թագավորին: Յեկ չորս յեղբայրները գնացին Քարթլի... Գուրամին նշանակեցին իշխան (երիսթավ) և կուրապալատ. սա Մցիւեթում [սուրբ] խաչ յեկեղեցու հիմքը դրեց: [Իսկ] մնացած յերեք յեղբայրները գնացին փեսայացան Ներսեսի վորդի Բակուրին<sup>12</sup>...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Փարսպան Գորգիջանիձեյի նկարագրած Հայոց դարձի պատմությունը տարբերվում է վրացերեն լեզվով վաղուց գոյություն ունեցող համապատասխան աղբյուրներից, վորոնք են՝ «Գրիգոր Պարթևի վկայաբանություն» ու «Հոփիսիմյանց վկայաբանությունը» (սրանց մասին տես այս մեր աշխատության Ա. հատորի Գ. վլսի Յ-րդ ծանօթությունը, եջ 20—23): Սա փայլուն ապացույց ե նրան, վոր հեղինակը բավկանին անտեղյակ ե յեղել վրաց հին գրականությանն ու նրա առանձին նշանաբներին, իրեն հետաքրքրող մասնավոր հարցերումն անպամ:

<sup>2</sup> Վորքան ել առասպեկտական լինի այն վոճ, վորով Փարսպան Գորգիջանիձեն նկարագրում է Հայոց գարձի պատմությունը, մի բան վոր սկզբից և յեթ աչքի յի ընկնում ընթերցողին, այդ՝ այն ե, վոր նա անմիջապես թե միշտ ինքը կը պատմուի առաջնական առաջնական անդամները գոտում ե, բացի Ագաթանգեղոսից և նորդապար (հավանական յերկրորդը) գոտում ե, բացի Ագաթանգեղոսից և նորդապար, այսպես կոչված «Դաշանց Թղթի» ազդեցության ներքո: Հմմ. Կանորենացուց, այսպես կոչված «Դաշանց Թղթի» ազդեցության ներքո: Պարիս բավետ վ. Շահնազարենան, Դաշանց Թղթի. Քննութիւն և հերքումը, Պարիս 1862:

<sup>3</sup> Տես նախորդ ծանոթ.:

<sup>4</sup> Խոսով և Շիրինի զրույցը տես այս աշխատության IV հատորում:

<sup>5</sup> Այսինքն 336 + 551 = 887 թ. (?):

<sup>6</sup> Այսինքն 464 + 551 = 1015 թ. (?):

\* Բնագրում՝ ամբավի: Հմմ. եջ 89, ծան.\*\*:

7 Այսինքն  $744 + 551 = 1295$  թ. (?);

8 Այսինքն  $742 + 551 = 1293$  թ. (?);

9 Այս գլուխն ես, առավել քան նախորդ և հետագա գլուխներն, առասպելի բնույթ ե կրում:

10 Այս գլուխն նկատվում ե Թիովետիանոսի կնոշ Պրիսկայի և դատեր Վաղերիայի անցքի նկարագրության ազգեցությունը (Dictionnaire universel et complet des conciles, par l'abbé A. d. Ch. Peltier, Paris 1847, t. II, p. 514), «որոնք հալածուեցան քրիստոնէութիւնը չուրանալու համար, սակայն անոնք ըստ ուժանց տկարացան և կուռքերու զոհեցին» (Մաղաքիա ա. ե. Օրմանեան, Ազգապատում, I, 81):

11 Այս գլուխն նկատվում ե «Յայսմաւուրք» գրքում «մեեեկի ի և փետրպարի իջ» ներք մուծած հատկածի՝ «Յօն երկման Վարագայ սուրբ նշանին և սքանչելեաց նորին» ազգեցությունը: Տես՝ Յայսմաւուրք, կ. Պոլիս 1834. J. Bayan, Le Synaxaire Arménien, Paris 1930, pp. 94—95 (1138—1139):

12 Այս տեղեկությունները կրկնություն են Սմբատ՝ վորդու Դավթի «Բագրատունյաց պատմության» համապատասխան տվյալների, վորոնք կրկնվում են և Քարթլիս-ցխորեբայում (տես այս աշխատության Ա. հատորի յերկրորդ պրակի Ա. գլուխը, եջ 135):

## ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Գ. Մ. Ա. Ի. Ց

### [ԼԱՆԳ-ԹԵՄՈՒՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ]

... Թավրիզում նստած Թեմուրին լուր հասավ, «Վրացիք մուտեցան Նախիջևանին (Նախչավանին). սուլթան Մահմադի վորդի սուլթան Թահրից Ալինջի բերդը խլեցին և Արաքսի (Արագի) հայնկույս [գտնվող յերկրները] գրավեցին»...

... [Ապա] Թեմուրը գնաց Ղարաբաղ ու ձմեռն այստեղ անցկացրեց. և գարնանը նրան լուր հասավ, վոր Բագրատ [Վրաց] թագավորը<sup>1</sup> Տփղիսումն ե գտնվում առանց զորքի. աննկատելի կերպով Թեմուր արքան Ղարաբաղից գնաց... [Գրավելով Տփղիսը Թեմուրը] հանգից քաղաքից, և Բագրատ թագավորին հետն վերցնելով՝ գնաց Ղարաբաղ... [իսկ] Բագրատ թագավորը Թեմուրի (Թեյմուրի) դրդմամբ (հրավերով) մահմեղականացավ (թաթարացավ) Ղարաբաղում...

... Թեմուր արքան իր վորդի Մի[է]րան-շա[է]ի հետ խոռվեց այն պատճառով, վոր վրացիք սուլթան Թահրից Ալինջի բերդը խլեցին...

... Թեմուր արքան գրավեց Թուրքստանը, Հնդկաստանը, Խուսաստանը, Ղիչախի գաշտը (գաշտի Ղիչախի), Խորասանը, Զարուհստանը, Խորասանը, Գիլան-Մազանդարանը, Իրան (Երան)-Արարտ, Փարսն ու Արաբստանը, Լորստան-Թյուրքստանը, Շիրազն ու Քիրմանն, Աղքարեջանն ու Հայաստանը (Սոմխիթը), Դաղստանն ու Գուրջանը, Մալաթիայից հայսկույս [գտնվող] Անաստիայի յերկիրը... [և] յերբ Մալաթիայից հայսկույս [գտնվող յերկիրը] գրավեց՝ Դիարբեքիրով իջավ...

... [Յերբ Թեմուրը գտնվում եր] Բաղդադ քաղաքում, ... Աղըր-բեջանից լուր ստացավ. «Տասը տարի յե կովում ենք և Ալինջի բերդը չենք կարողացել գրավել դարձյալ վրացոց ձեռին և այն»: Զայրացավ Թեմուր արքան և Բաղդադից Թավրիզ յեկավ և չորս

ամսվա հանգիստ տվեց զորքերին Վրաստանի վրա յենելու համար...

... [Յերբ Թեմուրն] յեկավ Թավրիզ, նրան զեկուցին. «Արդեն տասը տարի յե, վոր [թաթարաց] զորքն Ալինջի բերդի համար պատերազմ և մղում և չի կարողանում այն վերցնել. դարձյալ վրացիք ունին այն գրաված»: Այս լուրն արքային վիշտ պատճեց, և Վրաստանի վրա արշավեց: Յերբ [Թեմուր] արքայի արշավանքի մասին Ալինջայում գտնվող վրացիք խմացան, հոժարակամ դատարկեցին բերդը, նաև դատարկեցին Գեղարքունյաց (Գեղաքունի) ծովի շրջակայքն ու Անի քաղաքն շրջակա բերդերով, հանվեցին տեղից և գնացին Վրաստան...

Այս եղից մեծ զորք կանչեցին Յերգնկայի (Երգնկի) յերկրի վրա: Այս կողմերում, ուր քրիստոնյաներ եյին բնակվում, վոմանց կոտորեցին, վոմանց գերի տարան և ավերեցին, և յեկեղեցիներն ու վանքերը քանդեցին, տներն այրեցին, ծառերն ու այգիները կտրատեցին, քաղաքներն ու բերդերն և գյուղերը քանդեցին ու ավերեցին, և ուր ել տղամարդ ընկավ նրանց ձեռը, կոտորեցին և կանանց յերեխաներին գերի տարան: Այս այն պատճառով յեղավ, վոր Ալինջի բերդում գտնվող վրացիք նրանց յերկիրն եյին յեկեւ արքան խնդրեց [հանձնել այն իրեն] և նրանք մերժեցին ասելով, թե նրանք մեր յերկրումն չեն գտնվում...

Թեմուր արքան Հովհան (Իվանե) աթաբակին և [Վրաց] թագավորի յեղբայր Կոնստանտին ին զորագլուխ նշանակեց և Սամցխեից (Տիգ) Ափխազք (Արխազեթ) կանչեց... Լաշա-Գեորգի (Գիորգի) վորդի Դավիթը... լեռնաստանից հայակույս [գտնվող] յերկրին մինչ Արաքս (Արագ) գետն ինքը տիրեց...

... [Թեմուրը] Քարթլիով անցավ, Տփղիս քաղաքում հյուրասիրվեց Բագրատ թագավորի կողմից և ձիաներին ու զորքին հանգստացրեց, Ղարայազում վորսի յելավ... և այստեղից հանվեց ու վորսով Ղարաբաղ գնաց...

... Արաքս (Արագ) գետից մեծ առու անցկացրին, յերկայնությամբ վեց աղաջ, լայնությամբ տասն հինգ ադլի<sup>2</sup>, խորությամբ տեղակեր յերեք ադլի, տեղտեղ հինգ ադլի և տեղտեղ վեց և ութ ադլի փորեցին, ակունքը պինդ կապեցին, այնպես վոր ծանծաղուտի ժամանակ Արագի ջրի յերբորդ մասին կհավասարվեր: Քառասուն որվա ընթացքում փորեցին...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այրինքն Բագրատ V, 1360—1395:

2 Յերկարության չափ եր հին Վրաստանում, հավասար 10,160 մետրին (Խլ. Զավախիւլիիլի, Վրացական նումիզմատիկա-մետրոլոգիան, վրացերեն, Տրդ-ղիւ 1925, հջ 134—135):

## ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Գ. և Դ. Մ Ա Ս Ի Ց

[XVI—XVII ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

... Գասկրի տեր և Աստարայի տեր Մուրագ սուլթանը թալիշի զորքով... Աստարայից Շիրվա[ն]ի վրա գնացին և հեշտությամբ վերցրին Բագվի բերդը, նաև գրավեցին Շիրվան-Շամախիան. այստեղից անցան Ղարաբաղ, ուր նրանց առանց պատերազմի ներկայացան այստեղի իշխաններն ու զորապետները. այստեղից [ել] Նախիջևան (Նախչվան) հասան և՝ այստեղի զորքն ել հետը վերցնելով՝ գնաց[ին] Թավրիդ...

Շահ-Խսմայելի վորդի Շահ-Թամազն իր հորից հետո թագավոր նստեց քրոնիկոնի 190-ին<sup>1</sup>: [Այս] Շահ-Թամազ դաշնը գնաց Ղարաբաղ, ուր տերերից վոմանց փոխեց և վոմանց ել բեզար և խարածա գրեց, իր անվամբ փող կտրել տվեց վրացիներին, մեսսերին, կախերին և շամախեցոց...

...Լուարսար (Լվարսար) Քարթլիի թագավորը<sup>2</sup> չհանգստացավ, և վոչ ել ընծաներ մատուցեց [Շահ-Թամազին], և ավերում եր Գանձակը (Գանջան), Յերեվանն (Երեվան) ու Շիրվանը...

Շահ-Թամազ դաշնա արշավեց Քարթլիի Լուարսար (Լվարսար) թագավորի վրա քրոնիկոնի հարյուր ութուն ութին<sup>3</sup>. Շահ-Թամազ դաշնը գնաց Ղարաբաղ... տասն և յերկու հազար ընտեր ձխով... և ... առանց զգուշացնելու Լուարսարին (Լվարսարին) մութ գիշերը կանչեց... Մանելով Տփղիս քաղաքն և՝ [այստեղ] բերդապան ու բերդապահներ նշանակելով՝ Ղարաբաղ վերադարձավ...

[Շահ-Թամազն] Անիի ճանապարհով գնաց Շորագյալ (Շորեկալ), վորտեղից անցավ Սամցին...

...Արզրումի բեզիարբեզ Սկանդար-փաշան [քրոնիկոնի 235-ին]<sup>4</sup> յեկել եր... ու Արտանուջի բերդը պատելու...

...Շերմազանը, վոր Լուարսար (Լվարսար) թագավորից եր

[կարգված] Լոռի-Փամբակի (Լոռի-Փանբագի) տեր, Շահ-Թամազը սպանել տվեց, [և] նրա տեղը՝ Լոռի-Փամբակն (Լոռի-Փանբագն) ու Աղջաղալան՝ դաշնը տվեց Դվարդի վարեյի (Դորդի որեյի) վորդի աթաբակ Քայխոսրովին... ապա [դղլաշները] Ղարաբաղ վերադարձան, ուր թագավորը ձմեռը [ք]իշլաղ (եշլաղ) եր սարքել...

...Յերբ Լուարսար (Լվարսար) թագավորն Աչաբեթի ամբոցում եր կանգնած, դաշնը Գորուց հանվեց և գնաց դեպի Ղարաբաղ...

...Ճա[հ]վերդ սուլթանը՝ Գանձակի (Գանջայի) տերը՝ վորդ դաշնից կուսակալ եր նշանակված... [քրոնիկոնի 240-ին]<sup>5</sup>... Արաքսի (Արագի) հայսկույս [գտնվող] զորքերը ժողովեց և յեկավ [Լուարսար] թագավորի գեմ...

[Յերբ Լուարսարի (Լվարսարի) վորդի Սիմեոն (Սվիմոն) թագավորը<sup>6</sup> մտադրվեց Տփղիսը գրավել], այս լուրը Ղարաբաղի աիլողը հասավ. [և] նա ել Արաքսի (Արագի) հայսկույս [գտնվող] զորքերը ժողովեց և ոգնության յեկավ քաղաքին...

...Քրոնիկոնի յերկու հարյուր քառասունին<sup>7</sup>... [Տփղիս] քաղաքի ու Սոմիխթ-Սաբարաթիանոյի թագավորությունը [դաշնը Սիմեոնի յեղբայր Դավթին] չնորհեց... իսկ Սիմեոն (Սվիմոն) թագավորը հանգիստ չեր թողնում նրան և... Սոմիխթ-Սաբարաթիանոն ավերում եր և ջանում եր քաղաքը գրավել, սակայն չվերցրեց: Քրոնիկոնի 250-ին<sup>8</sup> Սիմեոն (Սվիմոն) թագավորը զորք ժողովեց՝ Վրաստանի հեծելազորն և հետևակ զորքը, և քաղաքի վրա յեկավ. և այս լուրը Դավթիթ թագավորին զեկուցին, և նա ել զորք ժողովեց՝ Սոմիխթ-Բարաթյաններին, քաղաքացիներին և թաթարներին, և իր յեղբոր գեմ գնաց պատերազմելու...

...Մեծ զորքով յեկավ Լալա-փաշան և գրավեց Աղքաբեջանը, Քյուրդստանն և Յերեվանը (Երվանը), և Նախիջենվանը (Նախչենանը), և Ղարաբաղը, և Շիրվանը (Շրվանը), [Տփղիս] քաղաքն ու Գորին, Լոռին (Լորեն) և Աղջաղալան, և Ախալցիխեն, և մեսսերի յերկիրը, և բոլոր բերդերում պահապանները նշանակեց...

...[Ապա] յետ կանչվեց Լալա-փաշան, վորը զրաված ուներ Կախքը (Կախեթը), Շիրվանը (Շրվանը), Դաղստանը, Գանձակը (Գանջան) և Աղքաբեջանը, Քյուրդստանը, Վանն ու Նախիջենը (Նախչենը), Սամցին ու Յերեվանը...

...Շահ-Արքան արքան ձմեռը Թավրիզում մնաց, գարնանը Յերեվանի (Երեվանի) բերդը պատեց, Գեորգ (Գիորգի) թագավորը...

դավորը<sup>9</sup> Քարթլիի զորքով և կախքի (Կախեթի) տեր Աղեքսանդրը (Ալեքսանդրեն) զորքով նրան ոգնության հասան:

Գեռորդ (Գիորդի) թագավորի և Աղեքսանդր (Ալեքսանդրեն) տերոջ Յերեղանի (Երեղանին) ոգնության համար ելք ունելը զորքով: Գեռորդ (Գիորդի) թագավորը Քարթլիի զորքով և կախքի (Կախեթի) տեր Աղեքսանդրը (Ալեքսանդրեն) զորքով ոգնության գնացին Յերեղանին (Երեղանին) և բերդը գրավեցին. և դաշնը վրացիներին և կախերին շատ բաներ ընծայեց....

... Մեծ զայրութով և բազում զորքով [Շահ-Աբաս] դաշնը յեկավ Ղարաբաղ...

... Ուժսուն հազար ծուխ վրացիներից, հայերից և հրեաներից, նաև իշխաններին և ազնվականներին տեղահան արին և Մազանդարանում տեղավորեցին և վոմանց այլ յերկրները ցրեցին...

... Յերեղանի խանի մի յերամակ (թարուն) սուլթանը խընդրել եր դաշնից...

... Ղարաբաղի բեգլարբեգն անմիտ և հպարտ մարդ եր...

... Վրացիք, իմերներն (իմերեներն) և կախերը Գանձակը (Գանջան), Պարտավան (Բարդան) ու Ղարաբաղն ավերեցին...

Թեյմուրաղ տերը Գանձակ (Գանջա)՝ Ղարաբաղ դնալու ավելից թեգանեցն ցանկան ավերել. լեռն (Լեվան) Դադյանը (Դադիանը) Ողիշի զորքով, Աղեքսանդր (Ալեքսանդրեն) թագավորն իմերքի (Իմերեթի) զորքով, մեսխերի իշխաններն ու ազնվականները, վրացիք և կախերը՝ բոլորը ժողովեցան և ավերեցին Գանձակ (Գանջա)՝ Ղարաբաղը մինչ Արաքս (Արաղ): Թեյմուրաղ-տերը Պարտավունն (Բարդայունն) եր նստած և Գանձասարի հայոց կաթողիկոսը<sup>10</sup> մեծ զորքով և պարզմով Թեյմուրաղ տիրոջ մոտ յեկավ և այսպես գեկուցեց. «Խոնթքարն ու դաշնը վոտքի յեն յելել. սրանից լավ ժամանակ այլևս չի կարող լինել. յոթներքյան Վրաստանի զորքերը հետդ ունիս, քառասուն հազար թվանքչի յես կտամ քեզ, սույն զորքով Թավրիզ գնա և յոթն որում Թավրիզն ավերիր... և մինչ վորտեղ ել դաշնը զորք ժողովի, Աղբարեջանի տերերին փոխեցեք, ամեն տեղ ձեղ հլուներին նստացրեք և ինձ ել խոնթքարի մոտ ուղարկեցեք, վորպեսզի նրանից զորք հասցնեմ ձեզ ոգնության: Յեթե դաշնը վոտքի յելին, կոխվ սկսենք և նրանք վրացիների հետ չեն կարողանապատերազմել, այն պատճառով, վոր վրացիք փախչելու ճանապարհը հեռու ունեն. իսկ յեթե փախչեն, գիտեն, վոր չեն փրկվի.

Նրանց ճանապարհին կկոտորեն. ուրեմն փախչելու միտք վոչոք չի ունենա. նրանք հարկադրված կլինեն պատերազմ սկսել և պայքարել, և հազթանակը ձեզ կմնա, և իշխանավոր արքաներիդ ել կորհնենք և քրիստոնեյական աշխարհն ել քեզնով կազատվի ու կուժեղանա»:

[Թեյմուրաղ]-տերն այս՝ հեռու [տանող խոսքերն] ըմբռնեց և այսպես պատասխանեց. «Դեռ Ղարաբարադն ունիմ գրաված և Շիրվանում իմ հալատակի վորդին և տիրում. այս ձմեռը կգնամ Քարթլի, խոնթքարին ընծա կուղարկեմ, զորքս կհանգստացնեմ և գարնանն ավելի մեծ զորքով կգամ»: Կաթողիկոսն հասկացավ այս և իր լեզվով ասաց. «Կոկի գուղեռ» (sic): Տերը նկատեց, թե ինչ ասաց, ժպտաց և այսպես պատասխանեց. «Քեզ ել և Դատուղաւնին ել հետո կտանեմ, Գորի կհասնեմ: Զորքն ընչափետ կհասնի տուն»: Վանականը նորից բացահայտ զեկուցեց. «Ճավար-վոչխարի համար Դադյանին (Դադիանին) և իմերցոց թագավորին վոր հետդ չըերեցիր, Քարթլիում և Կախեթունն (Կախեթունն) ել կգրտնելիր այդ, և իրանի (Երանի) արքան միթե այդքան քեզ թույլ կտա, վոր դու այսպիսի զորք կրկին ժողովես: Այսորվազը զորքիդ կմասնեն և տավար-վոչխարի փոխարեն քեզ գերի կտանեն»: Զեղափ, [Թեյմուրաղը] վանականին չմեց, Գանձակից (Գանջայից) տեղահան յեղափ, և Դատուղաւնին ընտանիքով և նրա ամբողջ իրերով ու կայքով, նաև հայոց կաթողիկոսին ել իր աթոռի զարդով Գորի տարավ<sup>11</sup>... Դատուղիանի յերկմտությունը, Ղաջարների բնաջինջ անելլ, Թեյմուրաղ-տիրոջ կողմից Գանձակ (Գանջա)՝ Ղարաբաղի ավերումը, Դատուղիանի Քարթլի տանելլ՝ այս բոլորը Շահ-Սեփի-դաշնին զեկուցին:

... Դատուղիանն իման-դուլի-խանի յեղբայըն եր, դաշնին դավաճանեց, Ղարաբաղն ավերել տվեց և ինքն Ուրում գնաց...

... Դաշնի մոտ ելին... մելիք Սադաթը, Սոմիկիթի մելիք Աթաբեզն իր յեղբայըներով.... Սոմիկիթի մելիքին նամակ գրել տվեցին Վրաստանի իշխանների հասցելին...

... Հրաման ստացվեց դաշնից, վոր սարդարն իր զորքով գնա Վանի բերդի վրա և Շիրվանի բեգլարբեզը Ղարաբաղի զորք Ռոստոմ-թագավորի<sup>12</sup> պահապան կանգնի...

... Զիարում քնակվում ելին հայ վաճառականները... [Թոստոմ] թագավորը ժողովեց Սոմիկիթի ու Սաբարաթիանոյի զորքերն, և գնաց Գորի...

Սուլթան Մուրադ իսկոն թքարի գալլ և Յեթե

վանի (Երեվանի) բերդի գրավումը քրոնիկոնի 325-ին<sup>13</sup>: Խոնթքարը գրավեց Յերեվանը (Երեվանը), հասավ Թավրիզ, ավերեց Աղբերեջանն, և Քյուրդատանի ճանապարհով վերադաշտվ ութերորդ ամսին Շահ-Սեփի-ղաենն յեկալ և բազում զորքով ու պայքարով Յերեվանը (Երեվանը) կրկին գրավեց, և շատ մարդ կոտորվեց...

... [Մոստոմ] թագավորը հրամայեց [Տփղիս] քաղաքի մոռւրավին. «Զորքի մեջ կանչիր, ով վոր պատրաստ լինի՝ թաթարներին, վրացոց և հայերին (սոմեխներին)...»:...

... Դիասամիձե կաթողիկոսն և Ռեվազ Բարաթաշվիլին ու Սոմեխիթի մելիք Ղորխմագրեղը բազում սպառնալիքների տակ խաբվեցին...

... Սոմեխիթի մելիքը դաենից վախեցավ և նրա ցանկացածն ու գրած նամակները [Մոստոմ] թագավորին մատուցեց...

... [Մարիամ] թագուհին... Սոմեխիթի Դարբազ գյուղը [Մցիւթի] Սվետիցիսովելի [տաճարին] նվիրեց...

Այս պահին Բարաթաշվիլի Սիառըն ու Թումանիսչվիլի Բայանդուրը (Բախնդուրը) իրավացի իրար կպան: Բոլոր որենսգրությանց մեջ ճշմարտապես ընդունված ե, վոր թագավորներին չպետք ե վիրավորել և պետք ե խուսափել նրանց դատելուց, նամանավանդ չպետք ե համարձակել նրանց անվայել բան ասել և նրանց արյան մեջ խառնվել: Բարթիում վրացիք բազմաթիվ են և հզոր, [իսկ] հայերը (սոմեխները) փոքրաթիվ և անզոր. և նրանցից (հայերից) այսպիսի բան գժվար ե սպասել (ասել). ապա թե վոչ վրացիք ուզում եյին այս (արքայազնի) արյան [մեղքը] հայու վղին փաթաթել: Այս պատճառով ի վիճակի չեյին հայերը (սոմեխները), վոր այլապես՝ յերդումով և հավաստիացումով կլուծվեր [հարցը], և Սիառը Բարաթաշվիլին հայտնեց, վոր Թումանիչվիլի Բայանդուրը (Բախնդուրը) հրացանով զարկեց արքայազնին<sup>14</sup>: Նա ասաց՝ հեռացիր: Այս պատճառով դատի կանչեցին Բայանդուրին, և աստծո հրամանով յեղավ դատաստան: Յերկու կողմերն յեկս ըստ իրենց կրօնի ծիսակատարությունն արին: Թագավորն ու թաթարները հայերի (սոմեխների) կողմը կանգնեցին և թագուհին ու վրացիները Սիառը կողմը կանգնեցին... [Յերը] Բայանդուրը (Բախնդուրը) սուրը վերցրեց և... Սիառը քթին զարկեց..., թաթարներն ու հայերը բարձրածայն սկսեցին աղաղակել ալման, ալման<sup>15</sup>...

Քրոնիկոնի 344-ին<sup>16</sup>... Մոստոմ թագավորը Սպահանի (Իսպահանի) մոռւրավությունն ինձ՝ Փարսադանիս տվեց...

[Ապա] Աղբբեշանի վեղիրից չափար յեկալ [հաղորդելու, վոր] Մոստոմ թագավորը վախճանվել է Գորում և Աղբբեշանի վաշխատուն[ները] գլուխ են բարձրացրել ու Արաքսի (Արագի) ջուրն անցել...

... Սոմեխիթի մելիքի յեղայր Մահմադ-սուլթանին հյուրընկալ (մեհմանդար) կարգեցին և ուղարկեցին իբրև չափար, վոր Թեյմուրազ-տիրոջն առաջնորդե և մեծ պատիվսերով դաենի մոտ գտա...

... [Աղբբասանդը (Աղբբասանդը) արքայազնի] քույրը Լոռի տեր՝ Շահ[հ]վերդիւնի հետ ամուսնացավ...

... Գուրիելը հասցրեց Բագրատին Արզում... Արզումի փաշան Շիխալի-խանն [եր]...

... Իրանի (Երանի) սարդարը Ղարաբաղումն եր կանգնած [իր] զորքով...

... Մինչ դեսպանը Յերեվան (Երեվան) կհամներ, սուլթան Սուլեյման խոնթքարը վախճանվեց...

... Գանձակի (Գանջայի) խան Արաս-Ղուլի-խանը յերբ իշխում եր կախքում (Կախեթում), նրան հրամայեցին. «Նալարալի-խանի մոտ գնա Տփղիս»: Յերեկոյան Տփղիսում հավաքվեցին. և Գուրգիւնի մոտ յերբեմն Քարթլիումն եր լինում և յերբեմն Սոմեխթ-Սարարաթիանո յեր գնում...

... Դանձակի (Գանջայի) խան Արաս-Ղուլի-խանը յերբ հրամայել... «Այժմ արքան վողորմած ե [գեպի քո վորդին], վորին Քարթլիի թագավորությունը ջնորհեց, և կախքը (Կախեթը), և թուշերին. և Գանձակի (Գանջայի) խանն ու Արաքսի (Արագի) հայնկույս [գտնվող] զորքը ոգնության հասավ»...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն  $190 + 1312 = 1502$  թ.

2 Այսինքն Լուարսար I, 1534—1558:

3 Այսինքն  $188 + 1312 = 1500$  թ. (sic):

4 Այսինքն  $235 + 1312 = 1547$  թ.:

5 Այսինքն  $240 + 1312 = 1552$  թ.:

6 Այսինքն Սիմեոն I, 1558—1600:

7 Այսինքն  $240 + 1312 = 1552$  թ.:

8 Այսինքն  $250 + 1312 = 1562$  թ.:

9 Այսինքն Գեորգ X, 1600—1605:

10 Նույնը:

11 Հիշատակելով այս գեպը համաձայն Քարթլիս-յիսորեբայի Քրանսերեն

թարգմանության, Այսու իր վերջին աշխատություններից մեկում (աես յետ-  
մահու հրատարակությունը. Այս ժմուշայական կապիտալը և նրա քաղաքա-  
կան-հասարակական դերը հայերի մեջ, Յերեան 1934, էջ 150) կցում ե  
նետեյալ մեկնաբանությունը «Հետաքրքրականն, ինարկե, այդ մերժումը չե,  
այլ այն, վոր Դանձասարի կաթողիկոսն իր հոգեոր պաշտոնին միացրել եր  
աշխարհական իշխանություն գահերեցությունը. Ուրեմն, պահպանվել եր այդ  
հիմնարկությունը (Դանձասարի կաթողիկոսությունը. Լ. Մ.-Բ.), թեև այ-  
լափոխված կարկատնած ձեի տակ Յեկ յեթե սկսենք վորոնել այդ վեղարա-  
կիր գտներեց իշխանի ստորադրված «վասարներին», այսուեղ կդուենք ավելի  
բազմակողմանի ձևափոխումներ, կարկատնաներ. Այս բոլորը թելադրում եր  
միջավայրի այն կերպարանավորումը, վոր ստեղծվել եր անկման և ավերման  
խուլ շղանում»:

12 1634—1658 թ. թ.:

13 Այսինքն  $325 + 1312 = 1637$  թ.:

14 Այսինքն Քարթիի Լուարասր արքայազնին՝ 1656 թվին:

15 Այս դեպքի մասին համառոտ տես. Ս. Կակաբաձե, Крестьянский  
вопрос и крестьянские движения в восточной Грузии в XVIII веке,  
«История классовой борьбы в Закавказье». Сборник статей. Книга первая,  
Изд. ЗКУ, 1930, стр. 157):

16 Այսինքն  $344 + 1312 = 1656$  թ.:

## ՊՍՄԱՆՑՈՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Տասնույթ եր կուերորդ թագավոր նստեց [ոսմանցոց յեր-  
կրում] յերբորդ սուլթան Մուրադը<sup>1</sup>; Սրա զորքը գրավեց Նախի-  
ջևանը (Նախչվանը), Աղբեկջանը, Շիրվանը, Ղարաբաղն և Տփղիսի  
ու Գորու բերդերը...

Տասներութերորդ թագավոր նստեց նրա (սուլթան-Ահ-  
մադի) յեղբայր սուլթան Մուրադը<sup>2</sup>; Սա գրավեց Յերեվանն ու  
Բաղդադը<sup>3</sup>.

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 1574—1595 թ. թ.:

2 1623—1635 թ. թ.:

ԺԵ.

## ՍՈՒԼԻԱՆ-ՍԱԲԱ ՈՐԲԵԼՅԱՆ (XVII—XVIII դ.)

„ԲԱՌԱՐԱՆ“, „ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՐԻ  
ՅԵՎՐՈՊԱ“, „ԳԻՐՔ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԻՔԻ“

Սուլիան Որբելյանը, վորը՝ կուսակրոնհռթյուն ընդունելով՝  
Սարա կոչվեցավ և, այդ պատճառով, Սուլիան-Սարա Որբելյան  
(Սուլիան-Սարա Որբելյանի) անունով և հայտնի, վերածնության  
շրջանի վրաց հին գրականության ամենաշանավոր գեմքերից  
մեկն է: Հայտնի յե բազմակողմանի բեղմնավոր գործունեյությամբ  
գրականության զանազան բնագավառներում:

Ծագումով վրաց իշխանական Որբելյան տոհմիցն լինելով  
(նրա ծննդաբանությունը տես. Գ. Զիտարեթի և  
Գուգարեխի տապանաքարերը, վրացերեն, — Bulletin du Musée  
de Géorgie, III, 1927, էջ 126. Գ. Լեռնիձե, Սուլիան-Սա-  
րա Որբելյան, Գիրք իմաստության կերծիքի, վրացերեն, Տրվ-  
ղիս 1928, հավելված), Սուլիան Որբելյանը ծնվել է 1658 թ. և  
վախճանվել 1725-ին, ուրեմն 67 տարեկան հասակում: Ահավասիկ և  
նրա ինքնակենսագրությունն յերրորդ գեմքով գրված, վորը կըց-  
ված է նրա «Բառարան»-ին, համաձայն Վրաց Պատմա-Ազգա-  
գրական ն. ընկերության հավաքածուի № 1658 և Վրաց մեջ գրա-  
դիտություն տարածող ն. ընկերության № 1510 ձեռագիրների  
(տես Սուլիան-Սարա Որբելյան. Վրացերեն բառարան, պրոֆ.  
Հովսեփ Դիմիտրի և պրոֆ. Ակադ Շանիձե յի խմբա-  
գրությամբ, Տրվղիս 1928, էջ 477—478, curriculum vitae).

«Գրքիս աշխատասիրողին Սուլիան-Սարա Որբելյանուն հի-  
շեցեք աղօթքով՝ Արչիլ թագավորի և Գեորգ (Գիորգի) թագա-  
վորի ու արքայակն Լեռնի (Լեռնի) մորեղբոր վորդուն, Վրաս-  
տանի դատավոր, պատրոն Որբելյու վորդուն: Այս թագավորների  
հրամանով գրվեց այս գիրքը բազում աշխատանքով և հոգսերով,  
քանի վոր Վրաց (Քարթլի) յերկրում բառարան այլև չեր-

գտնվում և յերեսուն տարում հաղիլ կազմեց՝ մեխաբանությամբ,  
քանի վոր աշխարհական եր, և ազնվատոհմ և աշխարհիկ գործե-  
րից ազատ: Այս պահին քրոնիկոնի \* 1658 եր: Սրանից հետո  
կուսակրոն (մոնազոն) գարձավ և Գարեսչի բազմալերանց սուրբ  
[Հովհաննու] Մկրտչի վանքը մտավ, քրոնիկոնի 1698 մարտի  
18-ին յեղավ կուսակրոն (մոնազոն): Քրոնիկոնի 1710 գեկտեմ-  
բերի 1-ին գնաց Խորասան (Խվարասան) Քայխոսրո թագավորի  
հրավերով, և փետրվարի 20-ին յետ ճանապարհ գցեցին բազում  
ընծաներով, մայիսի 11-ին յեկավ Քարթլի: Քրոնիկոնի 1712 ապ-  
րիլի 23-ին Վախտանգ թագավորի հետ միասին Սպահան գնաց,  
նոյեմբերի 2-ին յետ ուղարկեց, գեկտեմբերի 20-ին յեկավ Քարթ-  
լի: Քրոնիկոնի 1713 ոգոստոսի 17-ին փախավ Փրանգստան, տե-  
սավ Ֆրանսիա, ձենովա, Սիկիլիա. Ֆրանսիական թագավորը,  
Հոռոմի պապն և մեծ գուքսը (գրանդուկան) շատ լավ ընդունեցին.  
բոլոր մարդիկ զարմացան: Ինչ վոր նրանց յերկրներում հազվա-  
գյուտ և թանկագին բան կար տեսնելու, բոլորը ցույց տվին:  
Սրբազն (սուրբ) պապը սուրբ խաչի մասը, սուրբ նահատակ  
Կղեմենի (Կղեմենտոպի) գլուխն և շատ ուրիշ մասունքներ ընծայեց,  
ոգոստոսի 18-ին ճանապարհ գցեց: Ճանապարհին սուրբ տանն  
ու շատ սուրբ տեղերին ուխտ յեղավ: Հոկտեմբերի 20-ին հասավ  
Մալթա: Դեկտեմբերի 8-ին ֆրանսիական թագավորի նավը յեկավ,  
ճանապարհ ընկավ: Քրոնիկոնի 1715 հունվարի 19-ին յեկավ Կոս-  
տանինուպոլիս: Մի տարով այստեղ ուշացավ. ֆրանսիական գեւ-  
պանատանն եր իշել ամենայն աշակցությամբ:

«Այստեղ սկսեց [արտա]գրել բառարանն ոգոստոսի տասին և  
քրոնիկոնի 1716 հունվարի քսանին ավարտեց»:

Այլ ձեռագիրներում կան, ի միջի այլոց, և հետեւյալ լրացու-  
ցիչ տվյալներ (ibid., 478).

«Ծնվել ե Սուլիան-Սարա Որբելյանը վրաց 348 քրոնիկոնին  
[= 1658] հոկտեմբերի 24-ին, յերբ լատինացվոց չորս նոյեմբերին  
հ[ր], կիրակի օրը, կես գիշերվա պահին»:

«Սարան վախճանվեց Քրիստոսի 1725 [թվի] հունվարի  
26-ին մեծն Մուկվայում, Սեսենցկայում, Արչիլ թագավորի պա-  
տառում և նույն [պալատի] յեկեղեցում թաղվեց Դարեջան արքա-  
յագստեր հրամանով և շատ ծախքերով և հուղարկավորությամբ  
և մեծ պատվով»:

\* Այստեղ և ստորև քրոնիկոնը պետք է հասկանալ իբրև թվական Ք. Ծ.-ից  
հաշված:

Որբելյանի կենսագրությունից առանձնապես հետաքրքիր են նաև տեղեկություններ, վորոնք սփոռած են ուրիշ հիշատակարաններում. 1. վոր նա կուսակրոնություն ե ընդունել կրկնակի ամուսնությունից հետո. 2. վոր նա կաթոլիկություն ե ընդունել Յեկրոպա յեղած ժամանակ, իսկ ըստ Մ. Թամարաշվիլու (Histoire du catholicisme en Géorgie etc., վրացերեն, Տփղիս 1902, էջ 311—347), նոյնիսկ մինչ Յեկրոպա դնալը. 3. վոր նրա անսապարհորդությունը դեպի Յեկրոպա վոչ թե փախուստ ե յեղել, այլ դեսպանություն քաղաքական նպատակով պապական միսիններների ուղեկցությամբ, յերբ նա քանիցս ներկայացել ե Հոռմի պապին, Լյուդովիկոս ԽIV-ին՝ Վերսալում (1714 թ. մայիսին), յերբ առիթ ունեցավ ծանոթանալու հոչակավոր առակախոս Լաֆոնտենի հետ, ևն:

Որբելյանի գրեթե բոլոր յերկերում մենք այսպես թե այնպես տվյալներ ենք գտնում Հայաստանի և հայերի մասին:

Այս յերկերն են.

1. «Վրացերեն բառարան», ա. հրատ. Ռ. Երիսթավիլի խմբ., Տփղիս 1884. բ. հրատ. Հ. Դիվահանձելի և Ա. Շանիձելի խմբ., Տփղ. 1928:

2. «Ճանապարհորդություն դեպի Յեկրոպա», հրատ. «Յիսկարի» հանդիսի 1852 թ., հունվար (№ 1), էջ 1—16, փետրվար (№ 2), էջ 17—31, մարտ (№ 3), էջ 32—65, ապրիլ (№ 4), էջ 45—81 (թերթ): Բացի դրանից, մեր տրամադրության տակ եր Տփղիսի պետ. համալսարանի գնած նորագյուտ ձեռագիրն, ուր, ի միջի այլոց, զետեղված ե այս «Ճանապարհորդության» տեկստն ավելի ընդարձակ, քան 1852 թվին հրատարակածը, հետեւյալ վերնագրով. «Հանուն հոր և վորդվոր և հոգույն սրբության Որբելյանի վերադարձը Ֆրանսիայից և մուտքն Իտալիա 1711 (Տ. 1) թվի հունիսի տասնեւինսին:

3. «Գիրք իմաստության կեղծիքի»\*, ա. հրատ. ՍՊԲ 1857. բ. հրատ. Պ. Ռ. միկայալի լուսական, Տփղ. 1871. գ. հրատ. (ընտիր առակներ), Ստ. Զարափովի, Տփղ. 1874. դ. հրատ. Գ. Զարկվիանի և ընկ., Տփղ. 1881. ե. հրատ. Ն. Մթվարելի միկայալու խմբ., Տփղ. 1892. գ. հրատ. Գ. Լեռնիձելի խմբ., Տփղ. 1928: Բացի դրանից, կան թարգմանություններ. ուստի և բայց Կнига мудрости и лжи (Грузинские басни и сказки

\* Յեկ վոչ թե «Իմաստության և կեղծիքի», ուստի մудрости и лжи:

XVII—XVIII стол.) Саввы-Сулхана Орбелиани. Перевод и об'яснения А.Л. Цагарели. Спб. 1878. *անգլիերեն՝ The Book of Wisdom and Lies, a Georgian Handbook of the Eighteenth Century, by Sulchan-Saba Orbeliani, translated with notes by Oliver Wardrop. Printed by Wil. Morris at the Kelmscott Press, 14, 1895. գերմաներեն՝ Die Weisheit der Lüge. Gesprochen von Sulchan-Saba Orbeliani. Übersetzt aus dem Georgischen von Prof. Dr. M. von Tseretheli. Einleitung von Dr. Surab Awalischwili.*

Առաջնում մեզ համար հատկապես հետաքրքիր ե «կտակագրությունը» (անգերձնամակի), այսինքն առաջարանը, ուր հեղինակը խոսում ե ոգտագործած աղբյուրների մասին, ապա՝ բուքառարանում մի շարք բառեր, վորոնք Հայաստանին և հայերին են վերաբերում: Իսկ յերկրորդում ուշագրավ ե հեղինակի տպավորություններն Յեկրոպայում (Հայկիունիայում, Հոռմում, Կ. Պոլսում) գտնվող հայերի մասին: «Բառարան»-ից քաղած տեղեկություններն առաջ ենք բերում համաձայն 1928 թ. հրատարակության, իսկ «Ճանապարհորդություն»-ից քաղածը՝ համաձայն 1852 թ. հրատարակության և վերոնշյալ նորագյուտ ձեռագրի: Ինչ վերաբերում ե «Իմաստության կեղծիքի» գրքից հանած առակն (№ 99. Գլխատապակներ), այդպիսին մենք տանում ենք այս աշխատության IV հատորը, գեղարվեստական գրականության բաժինը\*:

Ա. Բ. Ա. Ռ. Ա. Ռ. Ա. Ն. Ի. Ց

### [ԲԱՌԱՐԱՆԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ]

Յես, Սուլիման-Սարա Որբելյանս, պատանեկության և ջահերությանս պահին, շատ աշխատանք թափեցի այս գրքի վրա, քանի վոր վրացերեն լեզվով բառարան այլևս չկար [Ա] քանի վոր քանի վոր վրացերեն լեզվով բառարան այլևս չկար [Ա] քանի վոր

\* Որբելյանի բազմաթիվ յերկերից հիշատակելի յենակ Քիլիլա և Դամանայի չափածո թարգմանությունը վորը մինչ այդ սկսել եր Կախքի թագավոր Դավիթը (վախճ. 1604 թ.) և ապա շարունակել Վախտանգ VI թագավորի հրամանով, վոր պարտիկ և ավարտել վ մն հ ա յ Սպահանում: Որբելյանի թարգմանությունը 1839 թ. կրնատել ե վոր Մելիքագ Աշխարհբեկի Բերությանությանը (Ե. Տակայշվիլի, Описание рукописей «Общества распространения грамотности среди грузинского населения», т. I, стр. 347).

այն, վորին Վախտանգ հինգերորդ թագավորը վրացերեն բառափունջ (սիտղ'վիս-կոնս) կոչեց, ժամանակի ընթացքում անհետացել եր: Քանի վոր այս պատվական գիրքը կորել եր, վրացերեն լեզուն [ել] ըստ իրենց քմահաճույքի այլանդակել ելին. [ապա] Վախտանգ թագավորի քեռին՝ Գեորգ (Գիորգի) թագավորը հրամայեց ինձ ձեռնարկել սրան. և յես մի փոքրիկ բառարան տեսա, վորը նրանց (հայերեն) լեզվով բառովիրք ե կոչչում<sup>1</sup>, և յես ել նրանց որինակով ձեռնարկեցի [սրան] և կազմեցի, վորքան ել ուժու ներում եր...»

...Աշխատեցի, վորքան ել ուժս ներում եր, [ոգտվել] հեղեն, լաթին, հայերեն (սոմլուրի), ոռուերեն և արաբերեն գրքերից և քաղվածքներ անել այնտեղից...

#### [ԶԱՆԱԶԱՆ ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ]

**Աղբում—կարնովքաղաք** (կարնովքայքի):

*U, P, w, q, q, b, w, p, w, q, n, u, q, p, e - (°)\*;*

Արմենիա (ստալ)՝ յերպայերեն Արարատ:

Բարթուղիմեռս (Բարթումե) — առաքյալ Գալիլեյցի. Հնդկաստանումն եր, Քրիստոս քարողեց՝ յեկավ Հայք (Սոմիսիթ), և այնտեղ հայերը (սոմելիները) նրանից՝ կենդանուց՝ կաշնպոկեցին<sup>2</sup>. Նրա մարմինը Ձերլիփա կղզումն եր և ապա Բենեվինթոս քաղաքում, իսկ հետո յերբորդ անգամ Ոտոն (sic) կայսը Հռոմ տարափ:

$\beta \vdash \theta_L \vdash u - (\circ)$ :

Յեփը լաւ (Եպիպատ) գետը՝ ( $^{\circ}$ )

**ՅԵՐԱԿԱԿԱ** (ԵՐԱՎԻՆՊԱԽԱՆԻ) - (°):

Նվիրակ (նիվիրակի) լեռնուան էւ հաւեռեւ (առաջ

\* Հարցական նշան ենք դնում այստեղ և ստորև, յերբ բառին կից չկա նրա մեջնությունը:

լսուրի) են, և վիրապ կ կոչվում է գործակալը (+ Քրանկերը են նունացա):

Ն կ ի ր ա կ \*-\* վ ա ր դ ա պ ե տ (նիորակիմոնձղուարի) — (°):  
Ս ո մ ե լ ս (սոմեխի) — հայկազն (հասոխանի) (3,38 Յեսայա):

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ի նկատի ունի XVII դարու վերջերում գոյություն ունեցող մի ինչ վոր «բառգիրք» հայերեն լեզվով՝ հավանական է ձեռագիր որինակներից մեկը, կամ Յերեմիա վարդապետի «Բառգիրք Հայոց»-ը (ապ. Յալիկօնայ 1698): Համաձայն դոց. Խիլիս Աբրամյանի՝ անտիկ հետազոտության, Ս. Որբելյանն, ի միջի այլոց, ուստագործել է նաև 1666 թ. Ամստերդամում հրատարակած Աստվածաշա- շնչին կցված «Եանգ մատենական»-ը (եջ 774—829):

\* Բնագրում՝ նուչա (sic.).

## \*\* Բնագրում՝ նվիրակաց:

Վեն, 1822, էջ 509—510. Գ. Մրուանձեան, Համով-հստով, 1904, էջ 95—96.  
Մ. Օրմանիան, Աղքապատում, I, Կ. Պոլիս 1912, էջ 29, § 10:  
Յ Խոսքը Եջմիածնական նվիրականության և վերաբերում, վորի մասին  
հետագայում գործ և և Անտոն Ա. Կաթողիկոսն իր «Հականառության» մեջ  
(առև «Մամետղյերա, վրացերեն, Պ. Կարբելովի խմբ., Տիգ. 1892, էջ 596):

Բ. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԻՑ

## [ԱՅՅԵՐԸ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ]

[1.] ՀԱԼԻԿՈՌԵՆԻԱ

...[Այստեղ] տեսա՝ կապանքներում ձգած չորսի չափ վրացի  
(Քարթվելի) քաղաքացիներ եյին, մեկ տերտեր (տերտերա), [և]  
յերեք ուրիշներ. ինձ գովեցին մի հայոց (սոմեխի) յեկեղեցի,  
վորը սակայն] չտեսա ...

[2.] ՀՈՒՄ

[1714 թ.] հուլիս ամսվա 30-ին նրանց (Լաթինացվոց) տոմաւ  
րով ոգոսառուի տասն եր, սուրբ Լավրենտիոս (Լավրենտի) սար-  
կավագի տոնը. նախ ինձ տարան ցույց տալու [նրա վանքը], և  
նրա սններն ու յեկեղեցին տեսանք, պատարագն այնտեղ լսեցինք.  
այնտեղ դաստիարակվում են հույների (բերձենների) և հայերի  
(սոմեխների) վորդիք՝ պապի հաշվին, վորոնք փախչելով եյին  
յեկել կամ նեղն ընկած լինելով. յերիտասարդ տղաները մեր այ-  
ցելության պահին քառասումի [չափ] եյին: ...

Ոգոսառու ամսվա 4-ին ... գնացինք Մարիամ Յեղիպատացվո-  
յեկեղեցին. ասում եյին փոքր ե, սակայն հին եր և լավ կառուց-  
ված. հայերից (սոմեխներից) ովքեր վոր գալիս են [Հռոմ], այն-  
տեղ են իջնում, այնտեղ են մնում ստանում (խմում և ուտում),  
ովքեր մեռնում են, այնտեղ են թաղվում: [Այնտեղ] նկարած և  
դրիգոր Պարթեն ու նրա տանջանքները: ...

Ոգոսառու ամսվա 8-ին ... ձաշից հետո գնացինք այնտեղ, ուր  
պապի հաշվին դաստիարակվում են հույն (բերձեն), հայ (սոմեխ)  
և արար տղաները, նաև ուրիշները՝ [եթիովացի], լաթին (^),  
ուուս, յեղիպատացի, գերմանացի (նեմաս), բունացի (բոշնալ),  
պարսիկ, յերբայցի, թուրք, ասորի ևն ...

Ոգոսառու ամսվա 9-ին գնացինք մի տեղ, ուր կարդինալնե-  
րից մեկը վանք եր կառուցել. յեկեղեցին փոքր եր, ուր յերկու

քահանա կար. քանի աղքատ և վոնդված լութերան կար, կամ  
հայ (սոմեխ), թե ասորի, վորքան ել աղանդավոր կգար, [բոլորին]  
այստեղ եյին պահում, ուտեցնում-խմեցնում (խմեցնում-ուտեց-  
նում), հազցնում, կրոն սովորեցնում ու արձակում<sup>3</sup>: Քառասուն  
մեկ տարի յե, ինչ շինել եյին, յերեք հազար չորս հարյուր ինը-  
սուն և ութ հոգի յեն [կաթողիկ] դարձրել և Քրիստոսին նվիրել-  
իմ այցելության պահին վաթսունի չափ եյին, բայց բոլորին  
չտեսա, վոմանք գրսումն եյին...

[3.] Կ. ՊՈՂԻՍ

Հարկատու յեն տասնեհինգ տարեկանից մինչ վաթսուն տա-  
րեկանը.—

Հույն (բերձեն)<sup>4</sup> քառասուն յերեք հազար.

Հայ (սոմեխ)<sup>5</sup> տասն և յոթ հազար.

Հըեայ՝ տասն և յերկու հազար.

Ֆըանկ ամբողջն՝ յերկու հազար.

Քըիստոնյա յեկվորները՝ չորս հազար.

Գերի տաժանակիր<sup>6</sup> և այլ՝ յերկու հազար.

Թուրք (թաթար) [ամբողջը]<sup>7</sup> չորս հարյուր յոթանասուն և  
հինգ հազար.

Ֆըանկերն և թուրքերը (թաթարները) հարկ չեն  
վճարում...  
—————

\* Բնագրում՝ «կատարդի»-ի, այսինքն կаторգա.

## ՎԱԽՏԱՆԳ VI (XVII—XVIII Դ. Դ.)

## ՈՐԵՆՍԳԻՐՔԸ

Լևոն (Լեվան) Վրաց (Քարթլիի) թագավորի վորդի՝ Վախտանգ արքայազնը պատվավոր տեղ ունի գրաված վրաց գրականության մեջ իրեւ բանաստեղծ. բայց համեմատարար ավելի մեծ է նրա հոչակն իրեւ «մեկենասի», վորդի ձեռնի բեցությամբ 1709 թ. կազմակերպվեց առաջին տպարանը Վրաստանում և ամբողջ Այսրկովկասում (ուրեմն 67 տարով առաջ քան Միմեն կաթողիկոսի հիմնածն Եջմիածնում)՝ Տփղիսում, ուր, ի թիվս բազմաթիվ գրքերի (մեծ մասամբ յեկեղեցական), 1712 թվին արտադրվեց Շոթա Ռուս թագու (Ռուս թագելու) «Ընձենավոր»ի կամ, ուղիղ, «Վագրենավոր»ի անդրանիկ հրատարակությունն իր իսկ խմբագրությամբ, վորը մինչ որս չի կորցրել գիտական նշանակությունը: Նրա պատվերով թարգմանվեց պարսկերենից «Քիլիլա և Դամանա»-ն (վորն ի վերջո գլուխ բերեց Սուլիան-Սար Որբելյանն), և մի շարք այլ յերկեր ու բառարաններ. խմբագրվեց հսկայական՝ «Քարթլիս-ցիսորեբա» կոչված Վրաց տարեգրությունն և, վերջապես, կազմվեց 7 զանազն որենսգրքերից ժողոված «Վրաց Որենսգիրք»-ը:

Ծնված լինելով 1675 թվին, Վախտանգ արքայազնն իր հոր՝ Լևոն (Լեվան) թագավորի Պարսկաստան լինելու պատճառով 1703—1712 կառավարում եր Վրաստանը. և հենց այս ժամանակաշրջանին ե պատկանում ամբողջ այն շինարարական գործունեյությունը, վորը՝ նրա անվան հետ կապելով՝ ամենայն մանրամասնությամբ նկարագրած ունին հետագա վրաց պատմիչները՝ Վախուշ 2 տն (Քարթլիս-Ցիսորեբա, II, 70—73 = M. Brosset, Histoire de la Géorgie, II, p. p. 99—104) ու Սեխնիս Զինիս ձեն (Ք. Յ., II, 323), վորոնք, ի միջի այլոց, շեշտում են և նրա «հոգսերը» Քարթլիում ջրաբաշխութիւնը զարգացնելու նկատմամբ

(Առըլսոյի և Ղարայազի շրջաններում շինած առուները նրա անունով կոչվում երին «Վախտանգի առուներ»): 1712—1719 թ. թ. միջոցին նա ապրում եր Պարսկաստանում (Վպահան, Քիրման)՝ ստանձնելով 1716 թվից իրանի սպասալարի պաշտոնը, վորին միաժամանակ չնորհված եր Թավրիզն ու Պարտավը: 1719—1724 թ. թ. նա կրկին կառավարում եր Քարթլին իբրև Վախտանգ VI թագավոր, 1724-ին ամբողջ ընտանիքով և բազմաթիվ շքախմբով ու ուղեկիցներով քաշվեց Ռուսաստան, ուր բնակվում եր յերբեմն Մոսկվայում և յերբեմն Պետերբուրգում, իսկ վերջերն Աստրախանում, ուր և վախճանվեց 1737 թվին. թաղված ե նույն քաքում՝ ոռւսաց մայր յեկեղեցում:

Վախտանգ VI-ի գրական ժառանգությունից առայժմ հրատարակված են, բայց «Վագրենավոր»-ի խմբագրությունից, «Քարթլիս-Ցիսորեբա»-ն (Հրատ. Մ. Բ ռ ո ս ե, ՍՊԲ. 1849—Քրանսերեն թարգմ. M. Brosset, Histoire de la Géorgie, t. I, SPB, 1849—1850), «Վախտանգ արքայազնի որենսգրություն» կոչվածը (Դ. Չ ռ ւ բ ի ն ո վ ի «Վրացերեն Քրեստոնատիա», ա. Հրատ. ՍՊԲ 1846, եջ 394—455) \*\* և Պարսկերեն-վրաց երեն բառարանային նյութերը (տես Յուրի Մանի և Կ. Դոնդուշյի հոգվածները ժողովածուում. Etudes persanes-géorgiennes. I. Publication du Commissariat de l'Instruction Publique de la République Céorgienne de l'Union Soviéétique. Leningrad 1926):

Վախտանգ VI-ի ձեռներեցությամբ թարգմանած գործերից մեզ համար հատկապես հետաքրքիր ե այսպես կոչված «Հայոց որենսգրությունը», վորն իսկապես 2 մասից ե բաղկացած, ընդամենը 451 հոդվածով, վորոնցից առաջինը՝ 1—150 հոդվածները՝ «Ասորա-Հոռմեյական Դատաստանագրքի» թարգմանությունն ե հայերենից (Ներսես-Լամբրոնյան խմբագրությամբ), իսկ յերկրորդը՝ 151—451 հոդվածները՝ Միհիթար Գոշի «Դատաստանագրքի» Հայոց»-ի:

Այս գործն ե, վոր մենք հրատարակեցինք 1927 թվին հետևյալ ընդարձակ վերնագրով. Corpus juris armeniaci. Versio Georgica jussu regis Wachtangi VI facta. Edidit Leo Melikset-

\* Հմմ. մեր այս աշխատության I հատորի ա. գլուխ 6-րդ ծանոթությունը (եջ 14):

\*\* Տես այս «Որենսգրության» նոր լույս տեսած Քրանսերեն թարգմանությունը Joseph Karst, Code Géorgien du roi Vakhtang VI [«Corpus juris Ibero-Caucasici I, 1, 2], Strasbourg 1934, 1935.

Век [«Monumenta georgica». Leges. № 2], sumptibus universitatis Tphilisiensis, Tphilisis 1927—I. Օրէնք [յաղթող] թագաւորաց քրիստոնէից Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լեռնի թագաւորաց Հոռմամայեցոց [Եջը 3—41]. II. Միթթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց [Եջը 42—156]. Ի հայերէն բնագրաց համահաւաքեալ և ի բարբառ վրաց հանդերձ այլայլութեամբք վերածեալ յաւուրս արքայորդոյն Վրաց Վախթանգայ և հրամանաւ նորին ի միջոցի 1703 և 1711 ամաց տն. ի լոյկ էած Լեռն Մելիք սեթի է կ: Արդեամբք Համալսարանին Հանրապետականի Վրաց որ ի Տփղիս ի թուրին Հայոց ՈթչԶ և ի Ծ. Ք. 1927 (տես Եջ XIV):

Համաձայն Ե. Թաղայշշվիլու (Описание рукописей, т. II, стр. 615) և մեր հետազոտության, «Հայոց Որենսդրությունը» թարգմանված պիտի լինի հայերենից վրացերեն 1703—1711 թ. թ.: Այս դրույթի հետ համաձայն ե և ի վ. Զավախիշվիլին (Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, գ. I, Տփղ. 1928, Եջ 121). մինչեւ Ս. Կակարածեն մեր վերոհիշյալ աշխատության մասին գրած գրախոսականում (տես նրա ժողովածուն. Recueil historique, վրացերեն, II, Տփղ. 1928 Եջ 131—132, հատկապես 132, ծան. 1) ջանում ե ճշտել հիշյալ թվերը, վերագրելով այդ աշխատանքը 1706-ի մոտերքին:

Վախտանգյան «Որենսդրք»-ից և մամնավորապես «Հայոց որենսդրություն»-ից քաղած տեղեկությունները մենք ստորև առաջ ենք բերում համաձայն Վրաց մեջ գրագիտություն տարածող ն. ընկերության հավաքածուի № 3683 ձեռագրի, վորը հիմք ե ծառայել 1927 թվի մեր հրատարակության, մասամբ նաև № 107 թ. ձեռագրի (տես մեր հրատարակության IX—X և 3, 100 Եջերը):

\* Այս աշխատության առաջաբանում տրված ե, ի միջի այլոց, մասնամասն բիթիոգրաֆիա Վախտանգ VI-ի «Վրաց Որենսդրքի» առանձին հատվածների հրատարակության, վոր կատարվել ե զանազան ժամանակ զանազան անձանց ձեռքով այն ե՝ այսպես կոչված «Դեմրդ Պայծառի», «Բեքա և Աղբուղայի», «Կաթողիկոսական» և «Վախտանգ VI-ի», ներառյալ և մեր հրատարակած «Հայոց»-ը (ուրեմն ընդամենը 5), մինչդեռ մնացած յերկուսն, այն ե՝ այսպես կոչված «Մովսիսական» և «Հունական»-ը, դեռ հրատարակված չեն: Ամբողջական «Որենսդրքի» ուլսական թարգմանությունը հրատարակվել ե յերկու անգամ. Сборник законов грузинского царя Вахтанга VI, ш. հրատարակարիչ Սենատի, ՍՊб 1828 թ., բ. հրատ. Ա. Գրինելի և Դ. Բագրամելի խմբագրությամբ, Տփղիս 1870 թ.:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

«Վախտանգին» միտք հղացավ և նա ջանաց ի մի ժողովելու որինաց բոլոր գրքերը, վորոնք ժամանակի ընթացքում ցրված ելին այլ թագավորություններում կամ Քարթլիում: Յեվ այսպես նա վիճուեց, գտավ և ձեռք բերեց՝ շատերին հարկադրելով այն և բազում աշխատանքով ստացավ [պատվիրածը] ... Յերրորդ [հերթին]<sup>1</sup> Մեծ Հայքի (Սոմխիթի) հովկապետայ Գրիգոր Լուսավորչի դամբան Եջմիածնից բերել տվեց՝ հայոց (սոմեկների) թագավորների դատաստանագրքերն, և այնտեղից թարգմանել տվեց լրիվ և առանց հապավման» (որենսդրքի ներածությունը):

«Հայոց (սոմեկների) որենսդրությունը փոխադրված է հենց այն լեզվից Վախտանգ վեցերորդ վրաց (քարթվելների) թագավորի որոք և տրված ե նրանից վրաց (քարթվել) ժողովրդին նրա՝ արքայագն և Քարթլիի կառավարիչ յեղած ժամանակ, 1703 և 1711 թվականների միջոցին» (Հայոց որենսդրության վերնագիրն, ըստ № 107 թ. ձեռագրի):

«Ցանկացանք դատաստանաց գիրք գրել. նախ աստվածաշնչն չից Մովսիսի սահմանած որենքներն, ապա հունաց (բերձենների) և հայոց (սոմեկների) գրքերից թարգմանածը, նույնպես և կաթողիկոսի և Գեորգ (Գիորգի) թագավորի ու Յեքայի սահմանած որենսդրությունները ժողովեցինք...» (Վախտանգ արքայագնի որենսդրության ներածականը):

## ՀԱՅՈՑ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ 291 ՀՈՒՎԱԾԸ

Յեթե տիրոջն ուխտ անե վաճականը կամ քահանան կամ սարկավագը, պետք ե վոր այն պահե և հեռու մնա մսակերպությունից: Յեթե առանց ուխտի ել պահե, լավ ե: Իսկ յեթե իրենց կամքով չկարողանան պահել պետք ե բացահայտ կերպով ուտեն, և յեթե ուղղում են, պահեն: Ով փարխեցիությամբ պիտի ընդունի թե հացին կամ պասվան կերակուրին միս ե դիմել, այսպիսին որենքը չի ցանկանա: Յեկեղեցուն ուխտ տվողը հայտնի ե: Յեվ յեթե մեկը՝ կնոջից բաժանված կամ ամուսնացած՝ միանգամ յեկեղեցու անունը մեծարե, առավել յեկեղեցական կդարնա, վանականները՝ սուրբ և անարատ: Սակայն հույսները (բերձենները) և անորեն ու վատաղգի հայերը

(սռմեխները)\* իրար վոր բամբասում են, յերկումն ել հավատալի յե: Ըստ կանոնաց միս չուտեխն ուտելուց լավ ե, բայց չբամբասեն: Հայի (սռմեխի) մեջ\*\* ել շատ կդանվի որինապահ, դրսում յեթե վոք իրար ասեն՝ դու ուտում ես և յես վոչ<sup>4</sup>:

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Առաջինը՝ Մովսիսական, յերկորդը՝ Հունաց. ապա շորրորդը՝ Կոթողիկոսի որենագիրքը, հինգերարգը՝ Գեորգ (Գլորգի) թագավորի որենագիրքը, վեցերորդը՝ Աղուղայի որենագիրքն ե, վերջապես, յոթերորդը՝ Վախտանգ արքայազնի որենագիրքը (տես. Ե. Տակայավիլի, Օписаніе рукописей, II, 614—616):

2 Հավանական ե հայրապետանոցից, քանի վոր ձեռագրատուն այն ժամանակ չկար:

3 Թե վորքան «լրիվ և առանց հապալման» ե կատարած հայոց թագավորների, ասել ե՝ «Ասորա-Հոռմեական Դատաստանագրիք» և Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ի թարգմանությունը հայերենից վրացերեն, ցույց ե տալիս մեր կազմած համեմատական աղյուսակը (տես մեր վերոհիշյալ աշխատության 238—245 էջերը):

4 Այս հոդվածը համապատասխանում ե Մխիթար Գոշի Դատաստանագրքի ա. մասի 52 հոդվածին, վորք կարգացվում է այսպես. «Յալազու դատաստանաց մասին» ուլսականաց. Որք յուխտի անդ իցեն երբցունք կամ սարկաւունք և կամ այլոք ի պաշտօնէիցն եւ հեռի իցեն ի մասյ և միտք իւր յօժարեսցին ի ճաշակել համարձակ կերիցէ եւ մի գաղտաբար. ապա թէ կամեսցին, պահեսցեն. ընդունին կանոնք գերկոսին: Ապա թէ ոք պիղծ համարեսցի կամ զբանջար և զնաց որ մսոտ իցէ, ոչ ընդունի զնա կարգ եկեղեցւոյ: Ուխտական՝ յայտ է, զի զամուսնացեալս և զկուսանս եւ որք միանզամ յեկեղեցի են՝ անուանէ. ապա ուրեմն վայրապար է ազգացն Յունաց եւ մեր զմիմիանս բամբասիւ զի զերկոսին ասէ ընդունիլ կանոնաց: Արդ՝ բարիոք է չուտեխն, քան ուտեխն, թէպէտեւ ոչ բամբասի, որպէս ի մեզ գտանին բազում պահողք. այլ արտաքոյ գտատատանի է զմիմեանս գտաելն» (հրատ. Վահան վ. Բատամեանցի, էջ 151—152):

ԺԵ.

## ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ (XVII—XVIII Դ. Դ.)

,ՔԱՐԹԼԻ-ՑԽՈՐԵԲԱՌ-ՑԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XIV դարու անանուն հեղինակի «Ժամանակագրության» մասին խոսելիս (Ե. Գլուխի) մենք նշել ելինք, վոր այն՝ սկսվելով Գեորգ (Գլորգի) Լաշայի թագավորությունից՝ հասնում ե մինչ Գեորգ (Գլորգի) Պայծառի թագավորությունը: Գեորգ (Գլորգի) Պայծառի ժամանակվա անցքերի նկարագրությամբ վերջանում ե վհչ միայն հիշյալ «Ժամանակագրությունն», այլև այսպես կոչչ ված «Քարթլիս-ցխորեբա»-յի հին խմբագրությունն, ինչպես այն հասել ե մեզ, որինակ, Մարիամ թագունու վարիանտում (հրատ. Ե. Թ աղաջ շ վիլու, Տփղիս 1906, էջ 1—785): XIV—XVII դարերի Վրաստանի պատմությունը գրի առնելու համար XVIII դարու սկզբներին Վախտանգ VI թագավորի ձեռներեցությամբ «գիտուն մարդկանցից» գումարված հանձնաժողովը սկսել եր ի մի հավաքել բոլոր այն տեղեկությունները, վորոնք հիմք պետք ե ծառայելին նույն «Քարթլիս-ցխորեբա»-յի լրիվ խմբագրությանը: Այդ նպատակով կազմվեցին «Քարթլիս-ցխորեբա»-յի շարունակությունները, վորոնցից առ այժմ, ինչպես ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի ւ ի ն (Հին վրացական պատմական գրականությունը, ա. տպ., էջ 273) իրավացիորեն նկատում ե, հայտնի յե չորսը.—

1. Առաջին շարունակությունն առանց վերնագրի, վորը սկսվում է 1220 թվից և համարմ ե մինչ 1453 թ., հրատարակել ե ե. Թ աղաջ շ վիլին «Քարթլիս-ցխորեբա»-յի Մարիամ թագունու վարիանտի հավելվածների բաժնում՝ հավելված Ա, էջ 850—891:

2. Յերկրորդ շարունակությունը, վորն «Բագրատունյաց թագավորության պատմությունը» վերնագրին ե կրում, սկսվում է 1452 թվից և համարմ մինչ 1605 թ., հրատարակել ե նույն ե. Թ աղաջ շ վիլին նույն հավելվածների բաժնում՝ հավելված Ա, էջ 892—

\* Հնդգծած բառերը համապատասխանում են Մխիթար Գոշի «մեր» բառին:

\*\* Հնդգծած բառերը համապատասխանում են Մ. Գոշի «ի մեզ» բառերին:

973. տես նաև Ք. Յ. I, Բ բ ո ո ե յ ի հ ր ա տ ., 476—477 և (շարունակությունը) Ք. Յ., II, Զ ո ւ բ ի ն ո վ ի հ ր ա տ ., 259—306. Փրանս-սերեն թարգմանությունը՝ M. Brosset, Hist. de la Géorgie, II, 1856, p. p. 322—376 (Suite des Annales).

3. Յ ե ր բ ո ր դ շարունակությունը՝ «Վրաստանի պատմությունը» վերնագրով՝ սկսվում է 1373 թվից և համում մինչ 1703 թ.: Առաջին անգամ հրատարակեց Մ. Բ բ ո ո ե ն միաժամանակ վրացերեն (վիմատիպ) և ֆրանսերեն թարգմանությամբ՝ Chronique Géorgienne, par M. Brosset, Paris 1829, 1830, p. p. 1—150 (վրացերենը), LV + 106 (ֆրանսերենը): Նույնի վրացերեն տեկստն յերկրորդ անգամ հրատարակեց (իբրև արտատպություն առաջինից) Զ. Ճ ի ճ ի ն ա ձ ե ն հետևյալ վերնագրով՝ «Վրաստանի պատմությունը Մեծն Մոռւրավի տվյալներով», Տփղիս 1910, եջ 1—77: Այս «Պատմությունը» հայտնի ե գրականության մեջ առանձնապես «Պարիզի Քրոնիկա» (Պարիզիս Խրոնիկա) անվամբ:

4. Զ ո ր բ ո ր դ շարունակությունն այն ե , վոր՝ պարունակելով իր մեջ այսպես կոչված «Բագրատի թագավորության պատմությունն» և սկսվելով XIV դարուց՝ համում ե մինչև Գեորգ (Գիորգի) XI թագավորի Սպահան գնալը 1696 թվին, հրատարակել ե Մ. Զ ա ն ա շ վ ի լ ի ն , «Նոր Քարթլիս Ցխովրեբա» վերնագրով, գրքույկում՝ «Նաշրումի», I, Տփղիս 1907, եջ 1—54 («Բագրատի թագավորության պատմությունը», 36—54):

## I

### [XIII—XIV ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

... Լանգ-Թեմուրի ընդարձակ պատմությունը գրի ե առնված մեկնաբանություններով հանդերձ պարսից մատյաններում<sup>1</sup>, և հայերն ել այլ կերպ ունին նկարագրած այն<sup>2</sup>...

... Լանգ-Թեմուրը նվաճեց արեւելյան բոլոր յերկրները... և յեկավ Հայք (Սոմիսիթ), ու գրավեց ամբողջ Հայքը (Սոմիսիթը): Հրի ու սրի յենթարկելով, նաև գերելով ու իսպառ ավերելով Հայքը (Սոմիսիթը), ինչպես մանրամասն (մեկնաբանություններով) գըրշած ե Հայոց պատմության մեջ<sup>3</sup>: Նվաճելով բովանդակ Հայքն (Սոմիսիթն): Նա (Լանգ-Թեմուրը) շատերին գերեց, շատերին հրի ու սրի յենթարկեց, և շատերին ել տիրեց՝ գարձնելով իր իշխանության ներքո, ապա՝ այնտեղից գնալով՝ նվաճեց Կարսը (Կարի) և գրավեց նրանց բոլոր բերդերն ու ամրոցները. իսկ հակա-

ռակորդներին և անհնազանդներին ամբողջապես յենթարկեց հրի ու սրի. և մնաց այստեղ մի ձմեռ, քանի վոր վերջինս սաստիկ եղ և դաժան: Յեկ աթարակն ել գնաց նրա մոտ և հնապանդիեց նրան, քանի վոր ի վիճակի չեր հակառակվել նրան. և նա շատ պատվեց աթարակին:...

... Իսկ ձմեռն անցնելուց հետո [Լանգ-Թեմուրը] շարժվեց Քարթլիի վրա, ... անցավ Աշոցքը (Աքոցք)՝ գերելով և իսպառ վկերելով բոլոր շրջակայքն, [ապա]՝ կանգ չառնելով այստեղ՝ յեկավ և անցավ Թուեղքն (Թրիալեթն) ու Սարարաթիանոն... Քրիստոսից 1393 թվին:...

... [Ղարայագում] (Ղարաբայում) վորսորդություն անելուց հետո Լանգ-Թեմուրը մտագրվեց գնալ Ղարաբաղ, յեկավ ու գնաց և հետն տարավ ձերքակալված Բագրատ [Ղաց] թագավորին, և համութով Ղարաբաղ՝ մի առ ժամանակ բնակվեց այստեղ:...

... [Յերկրորդ անգամ արշավելով Վրաստանի վրա] Լանգ-Թեմուրը գնաց Ղարաբաղ, ուր և մնաց մի առ ժամանակ... [Լանգ-Թեմուրը] յեկավ Ղարաբաղ ահ ու յերկյուղ զցելով և բազմաթիվ զորքով, և նրա զինվորները չելին տեղավորվում վոչ քաղաքներում և վոչ գյուղերում. և զինվորներն [այնքան] շատ ելին, վոր անհնարին եր համբել:...

... Յերբ Լանգ-Թեմուրն յեկավ Ղարաբաղ, նրան շատ ընդդիմագրեց Թիբրասուլթանը և շատ չարիքներ արավ անձամբ Լանգ-Թեմուրին ու նրա զորքին...

Ապա Վրաստանը գրավեց Գեորգ (Գիորգի) թագավորը: Լանգ-Թեմուրը՝ լաելով այս՝ ... անհամար զորք պատրաստեց և իր վորդվոց հետ միասին ... ուղարկեց այն այստեղ:... Նրանք յեկան Յելնջակ (Երինջակ) և շրջապատեցին Յելնջակի (Երինջակի) բերդ վորն այն պահին Վրաց (Քարթլիի) թագավորի ձեռին եր, և դը, վորն այն պահին Վրաց (Քարթլիի) թագավորի գեմ: Սկզբում նրանք սաստիկ պատերազմ սկսեցին բերդապահների գեմ: Սկզբում նրանք չկարողացան գրավել բերդը, և մի առ ժամանակ մնացին այստեղ, բայց հետո գրավեցին, քանի վոր բերդապահներին վոչոք ոգոնություն չհասավ և նրանք չատ նեկն ընկան, ապա հենց իրենք թության չհասավ և նրանք շատ երգի իմանգ-Թեմուրի ու դուրս յեկան, և հետեւցին Լանգ-Թեմուրին: Իսկ զին բերդն ու դուրս յեկան, և հետեւցին Լանգ-Թեմուրին: Իսկ լանգ-Թեմուրի վորդիք ուղղվեցին Վրաստանի կողմը, հասան Մանգլիս, ուր և կանգ առան:...

... Յերբ Լանգ-Թեմուրը գտնվում եր Թավրիզում, յեկավ, վորդվեսզի տեսնի այն բերդը, վորն առաջներում նրա վորդիքն ելին գրավել և վորն Ալինջա եր կոչվում: Անհամար զորքով և բազում

իրերով ու պեսպես վրաններով դուրս գալով այստեղից՝ հասալ և տեսավ այն Ալինջա բերդը, վորն առավել ամրացրեց, ապա գնաց և կանգ առավ Գեղարքունյաց (Գեղաքունիի) լճի շրջանում: Լսելով այս՝ Գեղորդ (Գիորդի) թագավորն ուղարկեց իր յեղբորը բազում ընծաներով...

... Այդ պահին Հայքի (Սոմխիթի) շրջակայքի մի տեղում, վոր կոչվում եր Մերդին (Մարտին), կար մի իշխան, վորի անունն եր Յեսայա (Եսաիա):...

... Ապա Աղբուզայի վորդի Հովհան (հվանե) աթարակը բազում ընծաներով գնաց Լանդ-Թեմուրի մոտ, վորը վողորմած յեղավ նրա հանդեպ, պատվեց և [իր հերթին] շատ պարզմակը շնորհեց:

Յեկ գնացին [նույն Լանդ-Թեմուրի] մոտ Հայքի (Սոմխիթի), Սամցխեյի և Կարսի բոլոր իշխանները...

... Ապա Գեղորդ (Գիորդի) թագավորը Լանդ-Թեմուրի մոտ ուղարկեց Յեսայա Հայոց (Սոմխիթի) իշխանին, վորպեսզի նա (Լանդ-Թեմուրը) չարշավի Քարթիլի վրա, քանի վոր հնձի և բերքահավաքի ժամանակն եր...

... Բայազիթն Ոսմանի սեռիցն եր: Իսկ Լանդ-Թեմուրը պատերազմ սկսեց նրա հետ և հաղթեց՝ ձերբակալելով Բայազիթինոնթքարին:...

Իսկ բռնակալ Լանդ-Թեմուրի մահից հետո [թաթարները] նուրից նվաճեցին Սրաբստանը [և] Անատոլիան, [վորոնք Բայազիթինոնթքարի վորդոց ձեռին ելին]...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Ի նկատի ունի Շերեփագինի պատմությունը:

<sup>2</sup> Հեղինակն ուզում է ասել, զոր Լանդ-Թեմուրի պատմությունը գրելիս սպասողած ունի պարսկական և հայկական աղբյուրները. իսկ հայկական աղբյուրներից, Ս. Կալպաքանիի կարծիքով, ոգտագործած պիտի ունենա Թովմա Մեծովեցու «Պատմութիւն Լանդ-Թամուրայ և յաշորդաց իւրոց»-ը (տես. Կարապետ վ. Շահնազարեանի հրատ., Պարիզ 1860) վորը, սակայն, վիճելի յե:

<sup>3</sup> Նույնը:

II

## ԽՎ-ԽՎԻ ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

... Բագրատ թագավորը հզոր եր և հոչակավոր: Սա տիրում եր Քարթիլին և Սոմխիթին. և [սրան] հնազանդ ելին Լոռիի բդեշխաներն (պատիախները), Կախքի (Կախեթի), Շիրվանի (Շարվանի) և Սամցխեյի [տերերը]:...

Քրոնիկոնի 164-ին<sup>1</sup> զ’աեն Ուզում-Հասանը զորք ժողովեց և յեկավ Սոմխիթ՝ մոտենալով Բարաթյանների և Որբեթի ստորոտին...

... [Ապա] թաթարները թողին Տփղիսն ու Սոմխիթը, վորը գրավեց Բագրատ թագավորը...

Քրոնիկոնի 173-ին<sup>2</sup>... [թաթարներն] յեկան և մոտեցան Տաշիրին...

... Քրոնիկոնի 174-ին<sup>3</sup> յեկավ զ’աեն Յաղուբը, ... [վորը] հրամայեց, վոր Սոմխիթն ավերեն...

... [Ապա] Խալքիբեկ [կոչվածը՝ զ’աենի իշխաններից մեկն]... յեկավ Սոմխիթի և Որբեթի ստորոտը...

Լուարսաբ թագավորը գրավեց Տփղիսն և իր ձեռքն գցելով Տփղիսի բերդն՝ ամրացրեց այն: Այս պահին Շահ-Թամազը գըտնվում եր Ղարաբաղում, և լսելով Տփղիսի առման մասին՝ ընտիր զորք հավաքեց և գաղտագողի շարժվեց Տփղիսի վրա... Գրավելով զորք հավաքեց և գաղտագողի շարժվեց Տփղիսի վրա... Գրավելով զորք հավաքեց և ամրացնելով այն բերդը՝ Շահ-Թամազը կերպարձալ Ղարաբաղ: Ապա սրա (Շահ-Թամազի) հետ հաշտվեց Կախքի (Կախեթի) բաղ: Ապա լեզու (Լեզուն) բատրոնը, և Շահ-Թամազը գնաց Հայոց (Սոմխիթի) յերկրի Նախիջևանը (Նախչևանը), և հնազանդեցրեց բուրում անհաջանդներին, վորոնց իր իշխանությանն յենթարկեց... լոր անհաջանդներին, վորոնց իր իշխանությանն յենթարկեց...

Քրոնիկոնի 223-ին<sup>4</sup>... Բագրատ Խմերքի (Խմերեթի) աերը Սամցխեյումն եր և լսելով Սոմխիթի գրավումը՝ նա յեկա յեկավ Շահ-Թամազի մոտ...

Քրոնիկոնի 231-ին<sup>5</sup> Խոնթքարի փաշաներն յեկան... Սրանից հետո [խոնթքարը] նորից ուղարկեց Արզումի փաշային, և Դիարբեքիրի և ուրիշ շատերին...

Իսկ բազմաթիվ ոսմաններ յեկան քրոնիկոնի 233-ին<sup>6</sup> Բասեն (Բասիան) և հասան այնտեղ ուր կանգ ելին առել ոսմանները...

Քրոնիկոնի 241-ին<sup>7</sup>... Պահենը (Շահ-Թամազը) գնաց և իշավ Սոմխիթ...

... Խոհթքարը տվեց [Ստամբուլ փախած Դադյանին] բազմա-  
թիվ զորքեր Արզումեցվոց և Տրապիզոնեցվոց, վորոնք յեկան  
Սատղեպելա...

... Ապա Շահ-Թամազը ժողովեց բազմաթիվ զորք և յեկավ  
Ղարաբաղ, ... [վորտեղից] անցավ Շիրվան...

Ապա Շահ-Թամազը գնաց Ղարաբաղ և մի քիչ ժամանակից  
հետո նորից շարժվեց Տփղիսի վրա...

... Այդ պահին [Քայլառուսութեամագալար յեկել  
եր Արզումի փաշա Խականդարը... քրոնիկոնի 244-ին<sup>8</sup>:

Սրանից հետո խոնթքար Սուլթան Սուլեյմանը դուրս յեկավ  
և [սկսեց] դաւենի վոխը հանել, շինեց Կարսը (Կարի), ու վերա-  
դարձավ, և յեկավ\* Բասեն (Բասիան): Ապա Շահ-Թամազը՝ աենը  
բազմաթիվ զորք ժողովեց և յեկավ Արտահան (Արտան): Ապա  
Շահ-Թամազն իր վորդի Միրզա-Խամայիլին (Խոմեյիլին) ուղարկեց  
Կարս (Կարի), և նա նվաճեց Կարսը (Կարի), գրավեց բերդեր ու  
ամրոցներ, և [բոլոր] նրանց, վորոնք խոնթքարի հպատակներն  
(Ճորտերն) եյին, հրի ու սրի յենթքարկեց և ցիր ու ցան արավ,  
իսկ իսքը նվաճեց Կարսը (Կարի):<sup>9</sup>...

Քրոնիկոնի 244-ին<sup>9</sup>... դաւենը հանվեց տեղից և գնաց Ղարա-  
բաղ՝ տանելով հետը [Վրաստանից վերցրած] բազմաթիվ գերի-  
ներ: ... Յեկ չգնաց Շահ-Թամազն Յերեվանու:...

... Յեկ նշանակեց [Շահ-Թամազը] խաներ Ղաղախում, Շամշա-  
դինում (Շամշադիլում), և սուլթան նշանակեց Գանձակում (Գան-  
ջայում):....

Շահվերդ սուլթանը՝ Գանձակի (Գանջայի) խանը՝ դաւենից  
այս վայրերի պահապան եր նշանակվել. ևս լսելով, վոր Լուտարսար  
թագավորը զորք և ժողովել նա ևս Արաքսի (Արագի) հայու-  
կույս [գտնվող կողմերից] զորք ժողովեց և յեկավ թագավորի  
դեմ...

Քրոնիկոնի 248-ին<sup>10</sup> թաթարները կալանավորեցին Սուլխանի  
տեր Բագրատի վորդի Արչիլին. Սիմեոն (Սվիմոն) թագավորն  
յեկավ դպրաշներին վրեժն հանելու, և սկսեց իր զորքերը ժողո-  
վել վորպեսզի Տփղիսի բերդը վերցնի: Լսելով այս՝ Ղարաբաղի  
տեր կուսակալը ժողովեց Արաքսի (Արեգի) գետի հայսկույս [գտըն-  
վոր յերկրների] զորքերն և [Տփղիս] քաղաքին ոգնության յեկավ:

\* Վար. հասավ:

\*\* Վար. և խոնթքարը գնաց:

... [Սիմեոն (Սվիմոն) թագավորի յեղբայր Դավթին թաթար-  
ները] քաղաքի (Տփղիսի) և Սոմնիթ-Սաբարաթիանոյի թագա-  
վորությունը չնորդեցին...

Իսկ Սիմեոն (Սվիմոն) թագավորը չեր հանգստանում, և ավե-  
րում եր Սոմնիթ-Սաբարաթիանոն և աշխատում եր գրավել [Տըփ-  
ղիս] քաղաքը... 1568 թվին Քրիստոնիութեան Տեղեկանալով Սիմեոնի  
(Սվիմոնի) գալու մասին [Տփղիս] քաղաքի վրա՝ Դաութիսանն և  
ժողովեց սոմնիթ-բարաթյաններին, թաթարներին և քաղաքացի-  
ներին...

Իսկ Դաուգիսանը հաղորդեց սրա (Սիմեոնից՝ Տփղիսի գրավ-  
ման) մասին Շահ-Թամազըն, ... իսկ Շահ-Թամազը հաղորդեց Շամ-  
խալին, վորին կոչում եյին Զերքեղ, և Շաքիի սուլթանին ու զա-  
րբացգվոց...

Ապա խոնթքարին բաժին մնաց Իմերքն (Իմերեթն), Ողբարը,  
Գուրիան և Սաաթաբագն մինչ Քարթլիի սահմանները, մնաց  
Կարսը (Կարի) մինչ Աղոցքի (Արոցի) և Յերեվանի սահմաններն  
և Հայքը (Սոմնիթը) մինչ այն սահմանը, վորին այժմ Թուրքը-  
տան են կոչում, մինչ Բաղդադ:

Իսկ Շահ-Թամազը նվաճեց Քարթլին, Կախքն (Կախեթն),  
Յերեվանը, Քյուրդմտանի (Քուրթիստանի) հայսկույս մասը. և  
այսուհետև միմյանց (խոնթքարի և շահի) միջև միություն եր և  
խաղաղություն...

Քրոնիկոնի 266-ին<sup>11</sup>... խոնթքարի զորքն յեկավ և նվաճեց  
Թավրիզն, Յերեվանը, Գանձակը (Գանջան), Ղարաբաղը մինչ Սուլ-  
թանիա և Արտավատականի բոլոր տեղերը:...

Սույն քրոնիկոնին (266-ին)<sup>12</sup>... Արզումի և Վանի փաշաներն  
[եկան] և սուլթանն ու Ղարախան Բազութքուն...

... Դաուգիսանն անցավ Լոռի և Տփղիս մտավ, ուր փաշա  
նստացրին, իսկ Գորում սանջաղ...

Յերբ Տփղիսում փաշա նստացրին և Գորում սանջաղ, ... Լա-  
լա-փաշան... սոմնիթցիներին շատ նեղացրեց...

... Սիմեոն (Սվիմոն) թագավորը վերաբարձավ..., [յերբ] Լա-  
լա-փաշան Քարթլիում եր գտնվում. և յեկան Սոմնիթը՝ բանակ-  
ցելու...

... Պատրոն Ղվարդավարեյի մոտ մարդ յեկավ, Ուղթիքում  
(Ուղթիսում) չպահեցին, տարան Արզում ծննդյան տոնի նախո-  
րյակին...

Քրոնիկոնի 267-ին<sup>13</sup> պատրոն Ղվարդավարեն և պատրոն Մա-

նուշարն Արզումից կոստանդնուպոլիս գնացին... Յերկրորդ անգամ յեկավ Լալավաշան և նորոգեց Կարսը (Կարի)...

Քրոնիկոնի 268-ին<sup>14</sup>... իրենք՝ յերկոքյան տերերը՝ գնացին Լոռի, վորն ավերեցին և հաղթող վերադարձան...

Քրոնիկոնի 272-ին<sup>15</sup>... սարդար Վարագ-փաշան յեկավ Ախալցիկն շնորու, բայց չդիմացավ, գնաց և թեմը մեղ (վրացոց) մնաց...

Մի փոքր ժամանակեց հետո [սարդարն] իր զորքերը ժողովեց և գնաց Լոռի, քանի վոր այն ոսմանցոց ձեռին եր.... Յեկ աստված նորից հաջողություն շնորհեց Սիմեոն (Սվիմոն) թագավորին և կոտորեց շատ ոսմանցիներին՝ թվով չորս հարյուր յոթանասուն յերեք, Քրիստոսի 1586-ին, քրոնիկոնի 274-ին. և վերցրեց Լոռու ամրոցներն ու այրերը թվով ինն, վորոնք ոսմանցոց ձեռին եյին: [Ամեն ինչ] գրավել եր ինքը՝ բացի միմիայն այն բերդից (Լոռուց), վորն ոսմանցոց ձեռին եր: Ապա [Լոռարաբը] մոտեցավ Լոռու բերդին՝ ապրիլի 1-ին, և գրավեց [այն]<sup>16</sup> հունիսի 10-ին:

... Լսելով այս բանը՝ խոնթքարը շատ տիրեց և ուղարկեց մեծ զորք, վորին ամիսապասալար նշանակեց յերեւլիներից մեկին, վորն և յեկավ Լոռի. սա գրավեց Լոռու բերդն և նվաճեց Լոռին: Ապա կանգ առավ Խատիս-սոփելիի ծայրին:...

... Շահ-Արամն յեկավ և գրավեց Թավրիզն ու ամբողջ Ատրպատականը (Արքադագանը), բացի Յերեվանից և Բաղդադից...

Իսկ Լոռու բերդում յեղողները լսեցին Սիմեոն (Սվիմոն) թագավորի պարտությունը: Ապա գուրս յեկան և ավերեցին Վրաստանի մի քանի մասերն և տիրեցին Տաշիրին: Յեկ մեծ ուրախություն եր ոսմանցոց մեջ: Իսկ Սիմեոն (Սվիմոն) թագավորը նորից ժողովեց Քարթլիի սակավաթիվ զորքը, վորքան ել մնացել եր, և ոսմանցոց համար աննկատելի գնաց Լոռի: Յեկ [ոսմանցիք ու վրացիք] իրար կաման, և տեղի ունեցավ մեծ պատերազմ: և թագավորը հաղթող հանդիսացավ, և [վրացիք] վերցրին Լոռու բերդը, և հրի ու սրի յենթարկեցին նրանց (ոսմանցոց): Յեկ [թագավորը] գրավեց Լոռին և հաղթող տուն վերադարձավ:

... Քրիստոսի 1600-ին... [վրացիք]<sup>17</sup> իմանալով [Սիմեոն] թագավորի հաջողության մասին՝ հույժ ուրախացան... և գնացին Լոռի: Ապա վրացիք՝ լսելով նրա մասին, վոր Սիմեոն (Սվիմոն) թագավորի վորդի Գեորգը (Գեորգին) այստեղ եր վրացոց մեջ, ոսմանցոց յետերից ընկան և հետամուտ յեղան նրանց, սակայն

չհասան: Ապա ոսմանցիք գրավեցին Լոռու բերդն, ուր և մացրին իրենց պահապաններին, և գնացին՝ տանելով հետն Սիմեոն (Սվիմոն) թագավորին, վորին և հասցրին Ստամբուլ:...

Իսկ Գեորգը (Գեորգին) նվաճեց Քարթլին և թագավորում եր բարգոք, վորն ապա ժողովեց վրացիներին և գնաց Լոռու վրա, և Գեորգ (Գեորգի) թագավորը վերցրեց բերդն ու գրավեց Լոռին...

Այս ժամանակներին դաշն Շահ-Արամն յեկավ Յերեվանը գրավելու համար: Ապա դաշնը կանչեց [այստեղ] Գեորգ (Գեորգի) թագավորին և Կախից տեր Աղեքսանդրին իրենց զորքով, վորոնք և գնացին: Յերբ նրանք հասան այստեղ, Շահ-Արամը շատ հավանեց վրաց և կախից զորքերն, և ամբողջ իր զորքին հրամայեց զրոն տալ Յերեվանի բերդին: Այդ ժամանակ վրացիք զգլբաշներից առավել քաջություն ցույց տվին և գնացին իրեւ առաջընթաց [գումար] և վերցրին Յերեվանի բերդը: Յեկ գրավեց Շահ-Արամն Յերեվանն և իր զորքը մտցրեց բերդը: Սակայն Շահ-Արամը Գեորգ (Գեորգի) թագավորից խնդրեց Լոռին և Լոռու բերդը: Յեկ [Գեորգի] զիջեց այն, քանի վոր չեր կարող մերժել Շահ-Արամին: Յեկ [Գեորգը] թողեց Լոռին, և Լոռու բերդը գրավեց Շահ-Արամը, վորն և մտցրեց այստեղ իր զորքը. ապա տուն վերադարձավ...

... Շահ-Արամը [Վրաստան] ուղարկեց [Կախից տեր Աղեքսանդրի վորդի] Կոնստանդնին, և հետն առաքեց Շիրվանի և Ղարաբղի զորքը...

## ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1	Այսինքն	164	+	1312	=	1476	թ.
2	Այսինքն	173	+	1312	=	1485	թ.
3	Այսինքն	174	+	1312	=	1486	թ.
4	Այսինքն	223	+	1312	=	1535	թ.
5	Այսինքն	231	+	1312	=	1543	թ.
6	Այսինքն	233	+	1312	=	1545	թ.
7	Այսինքն	241	+	1312	=	1553	թ.
8	Այսինքն	244	+	1312	=	1556	թ.
9	Նույնը:						
10	Այսինքն	248	+	1312	=	1560	թ.
11	Այսինքն	266	+	1312	=	1578	թ.
12	Նույնը:						
13	Այսինքն	267	+	1312	=	1579	թ.
14	Այսինքն	268	+	1312	=	1580	թ.
15	Այսինքն	272	+	1312	=	1584	թ.

III

[XIV—XVII ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

... Քրոնիկոնի 82-ին<sup>1</sup> Սամարղան[դ]ցի Թեմուրը գերեց Սոմէլիի թէն ու Քարթին և ավելեց բոլոր բերդերը...

Քրոնիկոնի 119-ին<sup>2</sup> Աղեքքսանդրը թագավորը գըալեց Լոռին...  
Քրոնիկոնի 233-ին<sup>3</sup> Բասենի (Բասիանի) Սախոյի վրա իրար  
հետ կովեցին իմերցի Բագրատ թագավորն և Քարթլիի Լուար-  
սար թագավորն, և աթաբակ տեղ Քայխոսրոն...  
2  
3

Քրոնիկոնի 243-ին<sup>4</sup> խռնթքար սուլթան Սուլեյմանը դուրս յելավ զահենի դեմ, կառուցեց Կարսը (Կարի), և վերադարձն հենց վոր հասավ Բասեն (Բասիան)<sup>5</sup> հանդես յեկավ Շահ-Թամազ ղահենը, վորն յեկավ Աբտահան (Աբտան), իսկ զահենի վորդի հսմայիլ-միթքան Կարսը (Կարի) քանդեց, խռնթքարը գնաց...

[Քրոնիկոնի 266-ըն]⁵... Փետրվարի 26-ին, չորեքշաբթի որը, ...  
ուղումները Գորին այլեցին, և կանգ առան Զարիշատում...  
ՏԵ

[Նույն քրոնիկոնի]<sup>6</sup>... ոգոստոսի 17-ին Դառվիշանն այլեց [Տփղիս-քաղաքն] և հեռացավ՝ անցնելով Լոռի... սոմիկթցիներին շատ նեղեցին...

[Նույն քրոնիկոնի] Դ... հունիսի 15-ին Լալավաշան յեկավ Քարթիլ և Սոմիիթ, ուր, ինչպես ասում են, [արդեն] հիվանդ եր... [և] հոկտեմբերի 1-ին հեռազարդ իր ոռորում...

[Նույն քրոնիկոնին]<sup>8</sup>... մարդ յեկավ պատրոն Դ'կարդ'կարեյի մոտ, [վորին] Ուզթիքում (Ոլթիում) այլևս չժողին, [այլ] տարան Արքում, ծննդյան [տոնի] նախորյակին...

Քրոնիկոնի 267-ին<sup>9</sup>, մարտի 23-ին, պատրոն Ղյաբղյաղըն  
և պատրոն Մանուչարն Ալքղուումից գնաց[ին] կոստանդնուպոլ-  
իս,... [իսկ] հունիսին... նորից յեկավ Լալա-փաշան և վերանորո-  
ւեց Կարսը (Կարսի)...

Քյու առևշտելու մասին)...  
Քրոնիկոնի 265-ին<sup>10</sup>... հունիսի 15-ին Բեքային վերապարձ-  
րին և իբրևնք՝ յերկոքյան տերերը (Ղավարդ՝ Ղարեն և Բեքան)՝ գնա-  
ցին Հռոմի...

Քրոնիկինի 273-ին<sup>11</sup> Սիմեոն [Քարթլի] թագավորն և [սարդար Վարագ]-փաշան կովեցին Լոռում, և թագավորը հաղթեց, վորը կոտորեց [հակառակորդի զորքը]<sup>12</sup> անթիվ՝ իբր չորս հարյուր յոթանասուն և յերեք [հոգի]. Նույն քրոնիկոնին<sup>12</sup> թագավորը գրավեց Լոռու քարայրը 9 [հարյուր հոգով]:...

Քրոնիկոնի 287-ին<sup>13</sup>... պարսիկները (թաթարները) գրավեցին  
Ասմենի թն ու Հռովհն...

Ոսմլիքն ու հե զավարությունը կատարվել է Արքայի կողմէ 1890 թվականի մայիսի 1-ին՝ պատճենագործություն առաջակացնելու պահին:

...Քրոնիկոնի 297-ին<sup>15</sup>... Մահմուլյանն յեկավ յոթը հարյուր զինված մարդով. [Վրացիք] սրտալի տեղահան յեղան գնալու Դարապաղածից, և մոռւրավը գեկուցեց [Լուարսաբ] թագավորին. «... մի տերտեր (տերտերա) Գորուց գալիս եր, վոչինչ չգիտեր, զորքը նրա առաջն յերկաց, նա վերադարձավ դեպի Դուեսի դաշտը. իսկույն և յեթ Գորու կամուրջը քանդեց և անցավ Գորին, հաղորդեց վերին Քարթիլի յերկրին, զորք ճարեց, բոլորը տեղահանգորդեց վերին Քարթիլի յերկրին, յեթե տերտերն առաջ չըսկիներ, հան յեղան և գնացին թագնվելու. յեթե տերտերն առաջ չըսկիներ, աճապատճ և անմնելին գետն, և յերկիրը կիշանաբ...»:

... [Ծոստով թագավորը] զաենից հրաման ստացավ, վոր սարդ պարբ վան գնա...

გარ-უხევსა ენერეა, ყოფნ მცენარე [სარანჩე] წლები...  
მცენარე 346-წელს<sup>19</sup>... ყახნე ჩრამაქე... Աղահվերդի-խանը

գնա Ղարաբաղ...»

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Այսինքն  $82 + 1312 = 1394$  թ.:
- 2 Այսինքն  $119 + 1312 = 1431$  թ.:
- 3 Այսինքն  $233 + 1312 = 1545$  թ.:
- 4 Այսինքն  $243 + 1312 = 1555$  թ.:
- 5 Այսինքն  $266 + 1312 = 1578$  թ.:
- 6 Նույնը:
- 7 Նույնը:
- 8 Նույնը:
- 9 Այսինքն  $267 + 1312 = 1579$  թ.:
- 10 Այսինքն  $265 + 1312 = 1577$  թ.:
- 11 Այսինքն  $273 + 1312 = 1585$  թ.:
- 12 Նույնը:
- 13 Այսինքն  $287 + 1312 = 1599$  թ.:
- 14 Այսինքն  $291 + 1312 = 1603$  թ.:
- 15 Այսինքն  $297 + 1312 = 1609$  թ.:
- 16 Այսինքն  $303 + 1312 = 1615$  թ.:
- 17 Այսինքն  $323 + 1312 = 1635$  թ.:
- 18 Այսինքն  $324 + 1312 = 1636$  թ.:
- 19 Այսինքն  $346 + 1312 = 1658$  թ.:

IV

## [XIV—XVII ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

